

# ថ្ងៃខ្មែរ

ទីក្រុងបន្ទាន់ | Décembre | December 2013





# MARCHÉ **ADONIS**

Un univers de fraîcheur

Visitez notre nouvelle succursale au Centre-ville  
**2173 Ste-Catherine Ouest**

Sauvé • Laval • DIX30 • Dollard-des-Ormeaux • Place Vertu • Mississauga

[www.groupeadonis.ca](http://www.groupeadonis.ca)




the essence of  
mediterranean  
gourmet

tel: 416 755 5084  
[www.arzfinefoods.com](http://www.arzfinefoods.com)  
1909 Lawrence Avenue East  
Scarborough, ON. M1R 2Y6

fine mediterranean prepared foods  
always ready...

...even when you're not



visit our store to pick-up our  
famous pastries,  
always fresh,  
always delicious.



# Lara's Restaurant

CALL 416-493-2020 OR MAKE ONLINE RESERVATION



155 Consumers Rd. Toronto, ON M2J 0A3  
[www.larasrestaurant.com](http://www.larasrestaurant.com)

## ՄԵՐ ԽՕՍՔԸ

«Հորիզոն»ի ամանորի բացառիկներու շարքը, այս հրատարակութեամբ կը համալրուի իր 13-րդ թիւով, որ դարձեալ ընթերցողին կը ներկայանայ գունաւոր եւ նիւթերու այլազանութեանը:

Բացառիկի կողքը կը ներկայացնէ հայուհին, ազգագրական տոհմիկ տարագով:

Հայերէն հատուածի էջերով ընթերցողին ուշադրութեան կը յանձնուի Հարաւային Կովկասի քաղաքական իրավիճակն ու աշխարհաքաղաքական ապագայ զարգացումներու լոյսին տակ՝ Հայաստանի կացութիւնը:

Հայերէն բաժինով կը ներկայացնենք քաղաքական յօդուածներու եւ հարցազրոյցներու շարք մը, որոնց շարքին՝ Արցախի ազատագրուած տարածքներու եւ վե-

րաբնակեցման անյետաձգելի առաքելութեան մասին շահեկան հարցազրոյցը:

Յատուկ հատուածով կը ներկայացնենք հայրենի արուեստի եւ մշակոյթի գործիչներու հետ կայացած հարցազրոյցներ։ Առողջապահական բաժինով դարձեալ նորութիւններ եւ գիտելիքներ կը փոխանցուին ընթերցողին։

Անգլերէն հատուածին մէջ կը ներկայացնենք Հայ Դատի յանձնախումբի գործունէութեան մասին հարցազրոյց մը եւ Հայկական Ցեղասպանութեան մասին բրիտանական մամուլին մէջ արձանագրուած փաստերուն մասին նոր հրատարակութիւնը։

Հետաքրքրական տեղեկութիւններ պարփակող յօդուած մը կ'անդրադառնայ մեր «իսլամ» հայրենակիցներուն մասին, արաբացած հայերու մասին։

## ԲԱՅԱՌԻԿԻ ԱՅՍ ԹԻՒՐՎ

**ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՐԻՄԱՆԱԿԻՆ, Էջ 4  
Խաչիկ Տէր Ղուկասեան**

Հարցազրոյց ՀՀ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի հետ, էջ 16  
Խայիրի Մկրտիչեան-Տաղլեան

Հարցազրոյց ՀՅԴ Բիւրոյի անդամ Յակոբ Տէր Խաչատրութեանի հետ, էջ 20  
Վահագն Գարագաշեան

Կարաչինար – Նոր Կարաչինար, էջ 28  
Բելլա Լալայեան

Հարցազրոյց քանդակագործ Արտուշ Պապոյեանի հետ  
էջ 33  
Խայիրի Մկրտիչեան-Տաղլեան

Հարցազրոյց լ. ՀՀ փոխ վարչապետ Արթուր Աղաբէկ-  
եանի հետ էջ 36  
Բելլա Լալայեան

Հարցազրոյց ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի  
ներկայացուցիչ Ռաֆֆի Տօնապետեանի հետ էջ 40

Հայեցի դաստիարակութիւնը եւ մեր կառոյցներու  
առաքելութիւնը, էջ 42  
Վիգէն Թիւֆէնքնեան

Հարցազրոյց «Կարին» պարի համոյթի հիմնադիր Գա-  
գիկ Կինոսեանի հետ, էջ 46  
Նայիրի Մկրտիչեան-Տաղլեան

Հարցազրոյց բեմադրիչ Զիւան Աւետիսեանի հետ, էջ  
54  
Նայիրի Մկրտիչեան-Տաղլեան

Եռլիա Գրիգորեանցի ոսպնեակով, էջ 69

Interview with ANCA Chairman, Ken Hachikian,  
page 72  
By Tina Soulahian

Interview with Katia Peltekian author of 'The Times  
of the Armenian Genocide: Reports in the British Press  
(1914-192)' page 74  
By Vahagn Karakachian

The Armenian Islamic Tribe in Syria, page 78  
By Kevork George Apelian, Translated and abridged by  
Vahé H. Apelian

Just One Word, page 82  
By Tamar Kabassakalian-Gosdanian

Cover photo by Matthew Karanian, [www.armeniatravelguide.com](http://www.armeniatravelguide.com),  
reprinted with permission.

*Միա էջը կը հովանաւորին Մելբուռն-ի «Գոյամարդ»ի Զայնը*

# ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՇԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՐԻԿԱՄԵԱԿԻՆ

2014-ին համայն մարդկութիւնը պիտի նշէ Մեծ Պատերազմի հարիւրամեակը:

1914-էն 1918, չորս տարիներու ընթացքին, եւրոպական ցամաքամասի եւ Մերձաւոր Արեւելքի տարածքին Դաշնակիցները՝ Մեծն Բրիտանիա, Ֆրանսա եւ ցարական Ռուսիա մէկ կողմէ եւ Գերմանիա եւ Օսմանեան կայսրութիւն միւս կողմէ, իրարու գէմ մղեցին իր վայրագութեամբ եւ տարողութեամբ ամբողջ գար մը նախընթաց չունեցող պատերազմը:

Պատմութիւնը, անշուշտ, հետագային ցոյց պիտի տար, որ այն առաջինն էր միայն երկու համաշխարհային պատերազմներու, որոնց արդիւնքով եւրոպական մեծ պետութիւնները պիտի դադրին միջազգային ուժային հաւասարակշռութեան որոշչները ըլլալէ: Բայց պատմաբաններուն համար 1914-ն էր, որ վերջ պիտի տար այն, ինչ Գարլ Փողանյի բնութագրած էր «19-րդ դարու եւրոպական քաղաքակրթութիւնը»: Ամբողջ հարիւր տարիներու ընթացքին, կը հաստատէ 1944-ին գրուած իր «Մեծ փոփոխութիւնը» աշխատափրութեան թեզը, ուժերու հաւասարակշռութեան մեքանիզմի, լիբերալ պետութեան, ազատ չուկայի եւ բարձր ֆինանսներու չորս հիմնախուներու վրայ հաստատուած աշխարհակարգ մը աննախընթաց խաղաղութեան եւ տնտեսական զարգացման պատմական ժամանակաշրջան մը ապահոված էր մարդկութեան: Դրամատիբական զարգացման այս հանդրուանը, սակայն, իր ներքին հակասութիւններու տրամադրանութեամբ անխուսափելիօրէն առաջացուցած էր հասարակական ցնցումներ, դիմարութիւն եւ մասսայական հակազդեցութիւն յանգելով ի վերջոյ համընդհանուր բախումի որուն մասշտապն ու խորքային հետեւանքները ոչ ոք նախատեսած էր: Պատերազմները ուժերու միջազգային հաւասարակշռութեան ճշգումներու մեքանիզմի տրամաբանութեամբ ծրագրելու վարժ գագաթաժողովներու եւրոպան չէր հասկնար թէ ինչպէս չէր յաջողեր վերահսկողութեան տակ առնել զինուորական գործողութիւնները, որոնք գուրս եկած էին քաղաքական բանականութենէն եւ գերի դարձած ազգայնականութեան կիրքին: Ի վերջոյ, դաշնակիցները ստիպուած դիմեցին ամերիկան ցամաքամասի ամենաարագ ճարտարարուեստականացող եւ արգէն Քարիփեան ծովուն թէ Խաղաղականին մէջ ուժային ծաւալումի իր առաջին քայլերը տուած նոր հսկային՝ Միացեալ նահանգներուն: Հոգ չէ թէ Վուտրօ Ուլիսընի տեսլականը, որ բանաձեւուեցաւ Գոնկրէսէն Գերմանիոյ գէմ պատերազմ հռչակելու արտօնութիւն ինդրող իր տասնչորս կէտերու ելոյթին մէջ, եւրոպացի դիւնագէտներուն համար քիչ մը անհասկնալի էր, եթէ ոչ պարզապէս միամիտ: Ի՞նչ ըսել էր «Ժողովուրդներու ինքնորոշման իրաւունք» կամ «աշխարհը ապահով դարձնել ժողովրդավարութեան համար»...

Առաջին համաշխարհային պատերազմով բնութագրուած 19-րդ դարու աւարտն ու 20-րդ դարու սկիզբը հայ ժողովուրդին համար բերաւ իր հաւաքական գոյութեան շարունակման ամենէն արմատական հարցադրումը: Երբ Հոկտեմբեր 29-ին Օսմանեան կայսրութիւնը պատերազմին մէջ կը մտնէր Սեւ ծովու ուստական նաւահանգիստներու ուժբակումով, ոչ ոք կընար իմանալ, որ իթթիհաստական կառավարութիւնը իր վանթրքական ծրագրին հետամուտ կը պատրաստէր Հայկական հարցին լուծումը ի գէմս հայ ժողովրդի բնաշնչման: Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի նա-

խօրեակին, հետեւաբար, արժէ կանգ առնել Առաջին համաշխարհային պատերազմի որպէս երեւոյթ անդրադարձին հայ ժողովուրդի ճակատագրին վրայ եւ բազդատական մը ընել այսօրուան իր գոյութենական կացութեան հետ:

Վերլուծական այս փորձը կ'իմաստաւորուի մասնաւորաբար եթէ նկատի ունենանք, որ 2014-ը ե՛ւ հայութեան համար ճակատագրական տարի է, ե՛ւ համաշխարհային ուժերու հաւասարակշռութեան իմաստով կրնայ նոր գարափոխումի ազգանշանը տալ: Այսպէս, 2014-ը արցախեան պատերազմի զինագագարի քանամմեակին է, այն տարին երբ Մինսքի խումբի միջնորդական պայմանաժամը կ'աւարտի: 2014-ին սպասելի է նաեւ սուրբիական տագնապի հանգուցալուծում մը, որ իր անդրադարձը պիտի ունենայ Սփիւռքի թերեւս ամենատուկուն համայնքներէն մէկուն ապագային վրայ: Ինչ կը վերաբերի աշխարհաքաղաքական իմաստով գարափոխութեան՝ Աֆղանիստանի մէջ ամերիկեան զինուորական ներկայութեան ապագայի ճշգումն ու իրանի հետ կորիզային համաձայնութեան զարգացման ընթացքը շատ հաւանաբար որոշիչ գեր ունենան որոշ վերլուծաբաններու բանաձեւած «ոչ-ամերիկեան» աշխարհակարգի ձեւաւորման վրայ:

**21-րդ դարը սահմանող միաբեւեն աշխարհակարգին մոմենտը...**

Եթէ միջազգային քաղաքական մտածողներուն համար գրեթէ յստակ է, որ 1989-1991 տարիներուն կատարուեցաւ համակարգային փոփոխութիւնն մը, ընդ որում ուժերու երկբեւուային կառոյցը փուլ եկաւ, ոչ որպէս հետեւանք երկու գերապետութիւններին, ինչպէս ընդհանրապէս տեղի կ'ունենան, կամ կը նախատեսուէր, որ տեղի ունենան համակարգային փոփոխութիւնները, եւ 20-րդ դարը հասաւ իր «աւարտ»ին, այդ իրադարձութենէն աւելի քան քսանամեակ մը ետք, գեռեւս յստակ չէ ճիշդ ե՛ր պէտք է բնութագրել 21-րդ դարու սկիզբը:

Ճիշդ է, որ Խորհրդային Միութեան փլուզումով եւ անոր Խօթանասունամեայ պատմական փորձառութեան ձախողութեան փաստին լոյսին տակ գաղափարախօսական հակագիր բնորդը՝ ազատական ժողովրդավարութիւնն ու շուրջական յարաբերութիւններու տնտեսակարգը ոչ միայն կը ներկայանար որպէս միակ այլընտրանք, այլ անուղղակիորէն կը պարտադրուէր Ուաշինգթոնի մէջ առնուած շարք մը որոշումներու գործնականացման քաղաքականութեան ընդմէջէն: Զուգահեռաբար, 1996-էն սկսեալ Միացեալ նահանգներու պաշտպանութեան պիտածէն աւելնալու սկսաւ այնպիսի թափով մը, որ աշխարհի միակ գերուժին պիտի ապահովէր միջազգային համակարգի մէջ ուսպանքական բացարձակ տիրակալութեան գերբարքը: Մինչ այսօր, Միացեալ նահանգներու զինուորական հօրութիւնը այնպիսին է, որ ոչ մէկ այլ պետութիւն, եւ ոչ իսկ պետութիւններու ու ապահովութիւններու մը, կրնայ հաւասարակշռութեան պիտի ապահովէր միջազգային համակարգի մէջ ուսպանքական բացարձակ տիրակալութեան գերբարքը: Մինչ այսօր, Միացեալ նահանգներու զինուորական հօրութիւնը այնպիսին է, որ ոչ մէկ այլ պետութիւն, եւ ոչ իսկ պետութիւններու մը, կրնայ հաւասարակշռութեան պիտի ապահովութիւնն մը, կրնայ հաւասարակշռութիւնն մը, որ հիմնուած է գեռեւս 1989-ին բանաձեւուած յետ-վիեթնամեան գինուորոշման վրաւունք» կամ «աշխարհը ապահով դարձնել ժողովրդավարութեան համար»...

*Կայս Էջ կը հովանաւորեն ԱՌ. և ԱՌ. Շենու եւ բժ. Կայ Խաչըքճեան*

# COME SEE US FOR YOUR HEARING NEEDS



699 Coxwell Avenue  
Toronto, ON M4C 3C1  
Tel: 416.463.4327

1949 Kennedy Road Unit 2  
Scarborough, ON M4C 3C1  
Tel: 416.754.4327

[www.hearingaidsource.ca](http://www.hearingaidsource.ca)



Images copyright Otocon Canada Ltd.



**hearing aid source**  
*invisible, custom & comfortable*

թեան հայեցակէտով յետ-Պաղ Պատերազմեան աշխարհակարգը յատկան չունեցաւ միաբեւեռութեամբ, եւ, գէթ ուազմական կարողութիւններու բաժանման իմաստով, այն կը մնայ միաբեւեռ՝ ի տարբերութիւնը հարիւր տարի առաջուայ բազմաբեւեռ աշխարհակարգին, որու սպառման բարացուցական փաստը եղաւ Մեծ Պատերազմը:

Պատմականօրէն աննախընթաց ուժային ծաւալման այն կարողականութիւնը, որ Պաղ Պատերազմէն յաղթական դուրս եկած Միացեալ Նահանգները ձեռք բերաւ որպէս Համաշխարհային միակ գերուժ, անխուսափելիօրէն յանդեցաւ այսպէս կոչուած Նոր Աշխարհակարգի մը կառուցման ծրագիրներու յղացման: Համատարած համոզումը, կամ ենթագրութիւնը, այն էր որ պատմականօրէն աննախընթաց պահն ու Միացեալ Նահանգներու գրաւած դիրքը որպէս Պաղ Պատերազմէն յաղթական դուրս եկած գերճօր ուժ՝ թոյլ կուտան նման իրականացում: Նախընթացներ կային անշուշտութեան Համաշխարհային պատերազմի աւարտին իսկ Ազգերու Ընկերակցութեան նախաձեռնութիւնը, որ այն ժամանակ իսկապէս Նոր Աշխարհակարգ մը կը նշանակէր, Ուիլսընինն էր: Հակառակ երկրորդ Համաշխարհային պատերազմին, նախաձեռնութիւնը վերապրեցաւ եւ ապրեցաւ իր գարգացումը վերածուելու համար Միացեալ Ազգերու Կազմակերպութեան: Պաղ Պատերազմին յաջորդած պատմական ոլորտը, սակայն, նախորդներէն կը ատրքերէր անով, որ Ուաշինգտոնի գրաւած ուժային դիրքը այնքան ալ անհրաժեշտ չէր գարձներ ո՞չ դաշնակիցներու հետ աշխատիլը դիւտանագիտական փրոթոքուներէն անդին, ո՞չ ալ մասնաւորաբար ուժերու հաւասարակշռութեան ազգակի նկատառումը: Մէկ խօսքով, Համաշխարհային միակ գերուժը կրնար միակողմանի նախաձեռնութիւններու դիմել առանց անոնց գինին մասին այնքան ալ մտահոգուելու:

Յետ-պաղ պատերազմիան այդ բացառիկ պահը Ուս-  
շինկթըն բաց չթողուց՝ աշխարհին հրամցնելով /պարտազգելու  
համար քաղաքական եւ տնտեսական զարգացման «միակ»/  
բնորդը, որուն բացարձակ գերակայութեան, Հեկեեան «Ժա-  
մանակի ողի»ի իմաստով ծշմարտութեան «փաստ»ը արուած  
էր 1989-1991 թուականներու իրադարձութիւններով: Եւ,  
իրօք, եւրասիական ամբողջ աշխարհատարածքը այսպէս կոչ-  
ուած «ուժալ սոցիալիզմ»ի վլատակներուն վրայ ընդունեց  
ազատ-շուկայական յարաբերութիւնները՝ ազատականացնե-  
լով տնտեսութիւնը, սեփականաշնորհելով ամէն ինչ, եւ այդ  
ամէնը ամենաժողովրդավար կարգով... Հոդ չէ թէ քիչեր  
կրնային տարրերել սեփականաշնորհման կտրոններն ու ամե-  
նուրեք իրականացուող ընտրութեանց քուէնները: Խորքին  
մէջ, կ'ըսէին ազատ շուկայական կրօնքի նոր վարդապետնե-  
րը, սեփականաշնորհման կտրօնը (որ հետագային պիտի վե-  
րափոխուէր սակարանի բաժնետոմսի) եւ ժողովրդավարական  
քուէն զիրար կ'ամբողջացնեն: Քիչեր այն ժամանակ հասկ-  
ցան թէ դրամատիրական զարգացման մարքսեան վերուծու-  
մը որքան ճիշդ էր եւ որքան ստուգելի՝ եւրասիական տա-  
րածքին դրամագլուխի առաջին կուտակման թատերական  
գործընթացին ընդմէջն... Այսպէս, գոնէ 1990-ական «ան-  
ցումային» տարիններուն կասկած չկար որ 21-րդ դարը սկսած  
էր, պիտի յատկանշուէր համաշխարհայնացման գործընթացով  
եւ անոր շարժակր՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներն էին:

... Եւ անոր աւարտը՝ 2008-2011

Այս տեսլականով 21-րդ դարը, սակայն, «պահ» մըն էք միայն ինչպէս 1999-2001 թուականներու իրերայջորդ տնտեսական տագնապները եւ, անշուշտ, Սեպտեմբեր 11, 2001-ը պիտի փաստարկէին: Եւ թէեւ մինչեւ 2008 Միացեալ Նահանգներու զինուորական գերակայութիւնը, որ բռնադատող ձեւով ինքզինք արտայալտեղ «ահաբեկչութեան դէմ

պատերազմ»ով ընդհանրապէս եւ Աղջանիստանի (2001) եւ Իրաքի (2003) զինուորական ներխուժումներով ու գրաւումներով մասնաւորապէս, 2008-ի Փինանսական ճնշաժամէն եւ 2011-ին Իրաքին ԱՄՆ-ի զինուորաներու հեռացումէն ետք արդէն կարելի է միաբեկու աշխարհակարգի արագ մաշումի նախանշանները աւելի յստակօրէն տեսնել: Ընդհանուր առմամբ կարելի է ըսել, թէ Հակառակ ԱՄՆ-ի գեռեւս ինչ որ ժամանակի համար շարունակուող զինուորական ուժային գերակայութեան, 21-րդ դարը ուրուագծուելու սկսած է որպէս աշխարհակարգ մը, որ հիմնականորէն տարբեր պիտի ըլլայ 1648-ին Ուեսթֆալիայի Դաշնագրով ծնունդ առած Եւրոպայակերոն աշխարհակարգէն աշխարհաքաղական երկու կառուցային տեղափոխումներու հետեւանքով: Մինչ ուժերու հաւասարակշռութեան կշիռը հետզգետէ աւելի կը թեքի դէպի Ասիա-Խաղաղական տարածաշրջան, բնապաշարներով հարուստ երկիրները հետզգետէ աւելի զգալի դարձնելու սկսած են իրենց կարեւորութիւնը՝ տնտեսական զարգացման համար: Այս զոյտ տեղափոխումները կ'իրականանան ոչ թէ աշխարհի գերհզօր միակ պետութեան հակաշիռ ուժի մը կամ դաշնակիցներու հանդէս գալով, այլ՝ տարածաշրջանային հզօր պետութիւններու գերակատարութեան աճով:

## Ταραφνηντρήσι

2014 թուականը կրնայ անկիւնադարձային ըլլալ 21-րդ դարու աշխարհակարգի ամրագրման համար:

2014 წთოւალანების ԱՄՆ-ի զինուորական ներկայութիւնը Աֆղանիստան փոփոխութեան պիտի ենթարկուի: Ուշաշինկթըն-Քապուլ Համաձայնութեան մը պարգայինն, Աֆղանիստան պիտի վերածուի ամերիկեան զինուորական խարիսխի: Առանց այդ համաձայնութեան, ամերիկեան ուժերը պիտի հեռանան այնպէս ինչպէս ըրած էին անդիխացիք 19-րդ դարուն եւ ոռուերը՝ 20-րդ դարու վերջաւորութեան: Ամերիկեան զինուորական ներկայութիւնը Կեղբոնական Ասլոյ յարակից տարածաշրջանին մէջ, գումարած Հնդկաստանի հետ գեռեւս 2005-ին Ուշաշինկթընի հաստատած դաշինքին, վերահսկողութեան տակ պիտի պահէ արմատական իւլամականութեան կերպնատեղիներէն Փաքիստանը, բայց նաեւ անմիջական դրացնութիւն պիտի հաստատէ եւրասիական տարածաշրջանի համարկումով իր աշխարհաքաղաքական ազգեցութեան գօտին ամրագրելու հետամուտ Ռուսիոյ հետ: Առանց այդ ներկայութեան կարելի է նախատեսել ե՛ւ տարածաշրջանային բախումներու հեռանկար, ե՛ւ միաժամանակ եւրասիական տարածաշրջանին մէջ ոռուսական ազգեցութեան աւելի անարգել ամրագրում:

Երկրորդ իրադարձութիւնը որ 2014-ը բեկումնային տարուան կրնայ զերածել իրանի հետ կորիգային հարցով պատմական համաձայնութեան զարգացումն է տարուայ առաջին կէսին: Դրական զարգացման պարագային, ԱՄՆ-իրան զգուշաւոր մերձեցումը կրնայ հակակշիռ հաստատել 2011-էն ի վեր Միջին Արեւելքի մէջ ինքզինք պարտադրող սիւննի իսլամականութեան վրայ: ԱՄՆ-իրան յարաբերութիւններու զարգացման ընթացքը վստահաբար իր անդրադարձը պիտի ունենայ նաև սուրիական քաղաքացիական պատերազմին վրայ, եւ այդ պատերազմը, կարելի է ըսել առանց շատ սիւլելու, Միջին Արեւելքի աշխարհաքաղաքական նոր քարաւանն է որ կը սահմանէ:

Հայաստանի ու հայութիւնը 2014-ին

2014-ը 20-ամեակն է արցախեան զինադադարին, այն տարին որ Մինսքի խումբի մանտաղի պայմանաժամը իր լրումին կը հասնի: Երեւանի համար անշուշտ լաւագոյնը գործընթացի շարունակման ապահովումն է, սակայն դժուար չէ անդրադառնայ, որ խորքին մէջ Ատրապէճանն է որ պիտի

Այս էոր կը հովանառութեա Արմեն, Արդիս, Հասնազ և Պուտիս Գրօնաբանական

# **ANI BAKERY LTD**

## **ԱՆԻ ՓՈԿՊԱՆ**

### **Middle Eastern Pizza Lahmajoun**

#### **Մեմփականատեր՝ Արսէն Տապահոեան**

Ուր կը գտնե՞ք հայկական եւ արաբական լահմանունի տեսակներ՝ փոքր եւ բևական չափերով։ Լահմանունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն։ Միսը իրեւոցմ կամ մեզմէ։ Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց։ Միշտ պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տխուր առիթներով։

**Փորձեցեք եւ  
գոհ պիտի մնաք**



**Դաստիարակութեան՝ 112 Crockford blv. unit 2 Scarborough, Ontario M1R 3C3**

**Հեռախոս՝ 416-285-7164 Հեռապատճեն՝ 416-756-3802**

**Բաց ենք շաբաթը վեց օր, Կիրակի մինչեւ կեսօրեւնը՝ ժամը 2:00  
(Երկուշաբթի փակ)**

որոշէ պատերազմի վերսկսումը կամ զինադադարի շարունակումը: Աւելի՞ն, նոյնիսկ եթէ պատերազմական գործողութիւններու վերսկսումը մեծ ուսիսք է Ասրաբէջանին, հաւանականութիւնը շատ է, որ Պաքու հակամարտութեան լուծման գործընթացը դուրս բերէ Մինսքի խմբակէն եւ տեղափոխէ ՄԱԿ, ուրեմն, ի տարբերութիւն հայկական դիւնանագիտութեան, Պաքու արդէն իր քայլերը առած է Հայաստանը ճնշումի տակ դնելու համար:

Միւս իրադարձութիւնը, որ ճակատագրական անդրադարձ պիտի ունենայ հայութեան 21-րդ դարու ապագային վրայ՝ անշուշտ սուրբահայութեան կացութիւնն է: Երկու տարրի առաջ, երբ Սուրբոյ մէջ իրավիճակը մագլցում կ'արձանագրէը եւ հայրենի պետութիւնն ու սփիւռքեան համայնքները մէկ օրէն միւսը դէմ յանդիման գտնուեցան սուրբահայութեան գոյապայքարին օժանդակութեան հրատապ հարցին, իրենք իրենց բնականաբար պարտադրեցին օրուան խնդիրները: Այս կացութիւնը պիտի շարունակուի այնքան տաեն որ սուրբական տագնապը իր լուծումին չէ հասած: Սակայն արդէն օրակարգի վրայ ինքնինք կը պարտագրէ 21-րդ դարու սփիւռքեան գոյավիճակի սահմանումը, սփիւռքեան գոյավիճակի նոր տեսութեան մը առաջցումը որպէս մեկնակէտ գերազագնապակական նոր գործընթացի մը:

Կարձ՝ Համաշխարհային Առաջին պատերազմէն հարիւրամեակ մը ետք, միջագույժին յարաբերութիւնները դարափոխութեան գործընթացի մը ազդանշանները կու տան: Միաբեւեռ աշխարհակարգի հազիւ քսանամեայ «պահ»էն ետք ուժերու հաւասարակոռումի գործընթացը աշխարհաքաղաքական նոր կացութիւն մը կը ձեւառորէ: Հայաստանն ու Սփիւրքի ամենահիմնարար համայնքներէն մէկը կը գտնուին ուժերու հաւասարակոռումի գործընթացի ամենաթէժ տարածաշրջաններուն մէջ: Հայութեան ճակատագիրը 21-րդ դարուն սերտօրէն առընչակից է անոնց: Ինչպէս որ էր հարիւրտարի առաջ...

Մի ինոյն ժամանակ, սակայն, թէկուզ եւ ամենափոքր ժողովուրդներու պարագային սեփական ճակատագրի որոշումը կարեւոր չափով կախում ունի իր ներքին կազմակերպական կուռ ըլլաէն, խոցելիութեան սահմաններէն եւ մանաւանդ՝ աշխարհի մէջ իր տեղը որոշելու կարողութենէն։ Այս բոլորը կրնանք սահմանել որպէս քաղաքական մտածողութիւն՝ հաւաքական գոյավիճակի ծրագրման կարողութեան իմաստով։ Առ այդ՝ հաւաքական գոյավիճակի ծրագրման իմաստով՝ ըստ էր հայ քաղաքական մտածողութիւնը հարիւր տարի առաջ եւ ի՞նչ կազութեան մէջ կը գտնուի ալյօր։

Հայութիւնը 20-րդ դարէց 21-րդ դար

Հայրիւր տարիի առաջ, հայութիւնը բաժնուած էր երկու կայսրութիւններու միջեւ եւ հաւաքական ճակատագիրը որոշուեցաւ այդ կայսրութիւններու փլուզման գործընթաց-ներով: Արտասահմանեան համայնքներ կային անշուշտ, բայց չէին կազմակերպուած, ոչ ալ քաղաքականապէս ակտիւ էին Այնպէս, ինչպէս ինքոքինք որպէս Սփիւրք ճանչցած ար-տասահմանեան հայութիւնը պիտի ընէր 21-րդ դարու կէսե-րէն սկսեալ: Հայ քաղաքական մտածողութիւնը այն ժամա-նակ ձեւաւորուած էր Արեւմտահայ եւ Արեւելահայ զոյզ Զարթօնքներով, Արեւմտահայստանի մէջ կեղեքումներու դէմ տարերային ըմբոստութիւններով, Եւրոպական պետու-թիւններու միջամտութեամբ փրկութիւն ակնկալող նախա-ձեռնութիւններու ձախողութեան դասերով եւ, մանաւանդ, 19-րդ դարու վերջին քառորդին ծնունդ առած ազգային ազատագրական շարժումով: Պատճառականութեան բարդ շղթայ մը կայ այս բոլոր իրադարձութիւններուն միջեւ, եւ այս իմաստով սիսայ չէ բանաձեւել ազգային ազատագրական

շարժումը որպէս հայութիեան արդէն կազմաւորուած հաւաքական գիտակցութիեան արտայայտութիւնը: Արմէնականներու նախաձեռնութիեամբ սկզբնական շրջանին, բայց շուտով նախ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիեան գեկավարութեամբ, ապա Հայ Ֆեղափոխական Դաշնակցութիեան առաջնորդութեամբ մղուած ազգային ազատագրական պայքարը քաղաքական մտածողութիւնը ամբողջական իմաստով յեղափոխեց: Հայը այլեւ Հայաստանեաց Առաքելական Եկեղեցոյ ընդմէջն ինքզինք ճանչցող քրիստոնեան չէր միայն, այլ՝ իր ճակատագիրը իր ճեռքերով կերտելու ելած գիտակից հաւաքականութիւն մը: Ինչ որ իւրայասուկ էր 19-րդ դարու վերջին քառորդին ընթացք առած ազգային ազատագրական պայքարին անոր էապէս յառաջդմական բնոյթն էր:

Այսպէս, ծրագրային թէ գործելառճային իրենց բոլոր տարբերութիւններով, Ս. Դ. Հ. Կուսակցութիւնը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը հայկական յեղափոխութիւնը գաղափարախոսական թէ պատմափիլիսոփայական աշխարհահայեցքով տեղադրեցին համայն մարդկութեան ազատազրութեան մեծ դատին, իմա՞ ընկերվարական շարժման ոլորտին մէջ: Հայկական յեղափոխութիւնը ազգային ինքնութեան ճակատագրի կերտումը սահմանեց բացառաբար ձախակողմեան, այսինքն՝ սոցիալական արդարութեան եւ հաւասարներու հասարակարգի ստեղծման պրիմակին մէջ: Միեւնոյն ժամանակ, հայկական յեղափոխութիւնը այն ժամանակ գրեթէ բացառաբար դասակարգային պայքարով կլանուած եւրոպական ընկերվարական շարժման օրակարգին կը բերէր կայսրութիւններու մէջ ճնշման ենթարկուած հաւաքականութիւններու ազգային դատերուն իմաստն ու արդարութիւնը: Հայկական յեղափոխութիւնը, անշուշտ, առանձին չէր այդ նախաձեռնութեան մէջ. Սիոնական շարժումը, վրաց մենչեւիկները եւ Օսմաննեան կայսրութեան մէջ պայքարող քրիստոնեայ ժողովուրդներ ինչպէս սերպերն ու մակեդոնացինները իրենց քաղաքական մտածողութիւնը նոյն ուղղութեամբ կը զարգացնէին, թէեւ, հասկնալիօրէն, իւրաքանչիւրը իրեն յատուկ պայմաններուն մէջ: Ազգային ազատազրական պայքարը ձախակողմեան գաղափարախօսական հասկացողութեամբ սահմանելու եւ կազմակերպելու ճիգ երեւոյթի պիտի վերածուի միայն 20-րդ դարու երկրորդ կսերուն. Զինատանի մէջ Մասյի զօրաշարժը ընդդէմ ճաբոնական գրաւման եւ Զան Քայ Զէքի բռնատիրութեան, Գուպայի յեղափոխութիւնը Ֆիտէլ Գամֆրոյի առաջնորդութեամբ, Ասիոյ, Ափրիկէի, Միջին Արեւելքի եւ Լատին Ամերիկայի մէջ հակագաղութափական եւ հակակայսերական ազատազրական շարժումները 1960-70-ական թուականներուն, ինչպէս նաև Հիւսիսային Իրանատայի եւ պասքերու պայքարները: Աւելի ժամանակակից նման մտածողութեան ոլորտին մէջ կարելի է տեղադրել Վենեգուելայի Ուկո Զավէսն ու սկզբայի մտածող եւ քաղաքական գործիչ Միեւֆըն Մաքսուէլ, ի շարս այլոց:

ବୁଦ୍ଧି ପର 19-ରୁ ତାମରପୁର ଜାଗ ଫାଲାକାଳାନ ମଟାଦୋପନ୍ତିଥୀବାନ  
ବୁଦ୍ଧାଯାତ୍ରାକୁ ଖର୍ଚ୍ଚ ଅପାରାଜୀବିନ ଏକଟାକାଳାନପୁର୍ବେବାନ ଫାଙ୍ଗାକାଳାଯୁତ-  
ଭିତରିନ ଖର୍ଚ୍ଚ: ଶୁଣାକାଳାନନ୍ଦନରେ ତାମରାତିହି ହରବେଙ୍ଗ «ମୋଟାଲେଟିର» ବେ  
«ଶେଷାଲେଟିର» ଡ୍ରାଫରାଜୀବିନ ନାମାତାକାଳନରେପି ଅଜ୍ଞ ପ୍ରତିପାଦିତବାମର  
ଡ୍ରାଫରାଜୀବିନ ରାଜନାଦକ୍ଷେତ୍ରରେ ପୁନଃଖରି, ଖର୍ଚ୍ଚରେ କର୍ମଚାରୀଙ୍କାଳାନ ନାମାତା-  
କ୍ଷପି ଶାଶ ଅତେଳି ମୋତ ଖରି ମାରିଥାବାନ ଅତେଳାକାଳାନରେ: ନାଚନାକ-  
ଗ୍ରୋତ୍ଥିତର ଶାଶ ଅତେଳି କର୍ମଚାରୀଙ୍କ ଖର୍ଚ୍ଚ ହର୍ଚ ଡ୍ରାଫରାଜୀବିନ ରାଜନା-  
ଦକ୍ଷେତ୍ରରେମରି ମେଘ ବେ ପ୍ରଦର୍ଶନାକାଳାନରେଖି ଶେଷାମାତ୍ରିତ କିନ୍ତୁବେଳ ଅପା-  
ରାଜି ଦାମରୋପି ଅରତେମାତାଜାଯୁତବେବାନ ହରାତୁଲନକନ୍ଦରପି ଆପରକ୍ଷାଇ  
ଅପାରାଜୀବିନ ପାରାମରିତବେବାନ: ଅମ୍ଭନ ଅପାରାଜୀବି, ମହାଲ ଶକ୍ତି ପର ଜାଗ  
ଫାଲାକାଳାନ ମଟାଦୋପନ୍ତିଥୀବାନ ଅଜ୍ଞ ଦାମନାନାକ ପ୍ରଦର୍ଶନାକାଳାନ  
ହରାତୁଲନକନ୍ଦର ଶୁରାପିତୁଲାଦ ଖର୍ଚ୍ଚ ଦ୍ଵାମାନକାଳାନ କାମରୁତ୍ଥିତରେ ନନ୍ଦରୁ  
ରାରକାମରୁତ୍ଥିତରେ ଅପାରାଜୀବିନ ପାରାମରିତବେବାନ କାମରୁତ୍ଥିତବେବାନ ପରିପାତ  
ଖର୍ଚ୍ଚରେ

Եյս էօք կը հովանասովել Պուրի, Ծանը ու Աւան Աղօսացարեան



BARRY



KAREN



GARO

# KAZANDJIAN



METTRE NOS CLIENTS EN PREMIER  
NOUS CLASSE AUSSI PARMI LES PREMIERS

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

RÉSULTATS

514 333-3000

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 2000 | FRANCHISE HÔTELLIÈRE ET AUTONOME DE RE/MAX QUÉBEC

մտածուէր զերջ տալ հայութեան կեղեքման ու շահագործման: Նման առիթ ստեղծուեցաւ 1908-ին Օսմանեան Սահմանադրութեամբ, որուն մեծ խստումն էր կայսրութեան բոլոր ազգութիւններուն տալ օրէնքի առջել հաւասար քաղաքացիի իրաւունք: Առաջին Համաշխարհայիշն պատերազմի նախօրեակին, հետեւաբար Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ ապրող հայութիւնը իր պատմական հայրենիքի վրայ, թէ Պուսոյ կամ այլ քաղաքներուն մէջ, առնուազն օրէնքի սահմանումով այլ պետութեան քաղաքացին էր: Ճիշտ է, քաղաքացիական հաւասարութեան թերահաւատութիւնը կը տիրապետէր ի հետեւանք ջարդերու եւ հալածանքներուն շարունակումին, որով եւ պատերազմի ճիշտ նախօրեակին դարձեալ բարեկարգումներու հարցը եւրոպական օրակարգին գալու երեւոյթը: Բայց իրողութիւնն այն էր, որ Առաջին Համաշխարհայիշն պատերազմին Օսմանեան կայսրութեան մէջ հայութիւնը քաղաքացիական կարգավիճակ ունէր եւ ուրեմն պարտաւոր էր սահմանադրական իր պարտաւորութիւնը յարգելու, երբ պետութիւնը պատերազմ յայտարարեց: Մնացեալը արդէն յայտնի է... Քաղաքացիութեան նման սթաթուս չկար 1905-էն ի վեր թափով իր անկումը ապրող Ցարական կայսրութեան մէջ: Քաղաքական խմորումները հոն շատ աւելի ընկերային յեղափոխութեան հեռանկարով տեղի կ'ունենային քան այսպէս կոչուած ազգային ազատագրական պայքարի: Ի դէպ, երկու կայսրութիւններէն ներս ալ «ազգային»ը աշխարհագրական սահմաններով հայրենիքի եւ գերիշխան պետութեան տրամաբանութեամբ չէր սահմանուի, որքան ալ որ հայութեան նման հաւաքականութիւններ քաջ գիտակից էին իրենց պատմական արմատներու հողերու պատկանելիութեան: Այսինքն, որքան ալ որ Ցարական կայսրութեան մէջ պատմականորէն հայկական հողատարածքը վարչական տարբեր նահանգներու բաժնուած ըլլար տեղւոյն հայ բնակչութիւնը անոնց պատմական ինքնութեան մասին կասկած չունէր: Բայց հայութիւնը, ի մասնաւորի կայսրութեան մեծ քաղաքներուն մէջ, անտարբեր չէր ընկերային ու աշխատաւորական շարժումներու խմորումներուն, որոնք, ի դէպ, չ. Յ. Դաշնակցութեան քաղաքական գործունէութեան ոլորտին մէջ մտան 1907-ի Ընդհանուր Ժողովի Կովկասեան նախագիծով: Հետեւաբար, եթէ 1916-էն սկսեալ կամաւորական շարժումն էր, որ յատկանշեց արեւելահայոց մասնակցութիւնը Համաշխարհայիշն Առաջին պատերազմին ուռւսական բանակին, այսինքն՝ գաշնակիցներուն կողքին, այլ մէկը շատ աւելի հետեւանք էր արեւմտահայոց ճակատագրին գիտակցութեան եւ ինքնապաշտպանութեան առողջ բնագդին, որ արթուն մնացած էր փիտայական շարժման մասնակից եւ հիմա կամաւորական գունդերը առաջնորդող մարտական ղեկավարներուն:

Անկիւնագարձային իրողութիւնը, բնականաբար, հայ անկախ պետականութեան ակամայ ստեղծումն էր 1918-ի Մայիսին: «Ակամայ»՝ որովհետեւ, ինչպէս ծանօթ է, այն արդինք էր պատմական իրադարձութիւններու եւ ոչ թէ՝ ծրագրուած նախաճեռութիւն: Պատմական հայրենիքն ու ազգային ինքնութիւնը իրար առընչող գերիշխան պետականութեան հասկացողութիւնն ու անոր կարեւորութիւնը ամրագրուեցաւ հայ քաղաքական մտածողութեան մէջ միայն 20-րդ դարուն եւ այն հատուածներուն համար, որ Հայաստանի խորհրդայնացումը կամ ողջունեցին կամ ալ ընդունեցին որպէս իրականութիւն, եւ միւսներուն համար որ զայն տեղադրեցին Սեւրի դաշնագրով գծուած հայկական պատմական հողատարածքներու վերադարձին ու միջազգային իրաւունքի հասկացողութեամբ գերիշխան պետութեան ստեղծման նպատակին մէջ: Սիսալ չէ 20-րդ հայ քաղաքական մտածողութեան մէջ նորութիւն հանդիսացած երկրորդ երե-

ւոյթը՝ արտասահմանեան հայութիւնը Սփիւռք հասկացողութեամբ սահմանումը կապել հայրենիքին ու պիտականութեան: Այլ խօսքով՝ հայութեան փրկութիւնը որպէս ազգային հաւաքականութիւն տեսնել հողահաւաքի եւ հայահաւաքի, հայրենադարձութեան՝ տրամաբանութեան մէջ անկախ թէ գաղափարականութեան ո՛ր ակնոցով կը դիտուէր կամ գործնականին մէջ ինչպէս կ'արտայայտուէր այն:

Զանց առնելով Սփիւռքեան քաղաքական հոլովոյթին,  
արցախեան շարժումին ծնունդ տուած խանդավառութեան եւ  
հայ անկախ պետականութեան անցնող քսաներկու տարինե-  
րու մասին այլապէս անհրաժեշտ խորհրդակցութիւնը, Հայու-  
թեան գոյավիճակը այսօր, բաղդատած Հարթիւր տարի առաջ-  
ուայ կացութեան հետ, կը յատկանչուի անկախ պետականու-  
թեան եւ Սփիւռքի իրեւոյթներով, անոնց անմիջական ապա-  
գայի հարցադրումներով եւ երկու երեւոյթները իրարու  
առընչող հայրենադարձութեան մարտահրաւերով; Այսինքն՝  
եւ անկախ պետականութիւնը, ե՛ւ Սփիւռքը իրենց գոյու-  
թեան շարունակման յատուկ հարցեր ունին: Միեւնոյն ժա-  
մանակ քաջ գիտեն որ իրենց գոյապայքարը իրարմէ անջատ  
չեն կրնար իրականացնել: Հետեւաբար, հայրենադարձու-  
թիւնը կը մնայ ծրագիր մը, որուն իրականացման փորձերը  
իրենց յաջողութիւններով ու ձախողութիւններով պարտի  
մնալ օրակարգի վրայ:

Եթէ 2014-ը միջազգային համակարգի ձեւաւորման իմաստով դարափիոնութիւն կը նշանակէ, ապա եւ հայ անկախ պետականութեան համար գլխաւոր հարցը կը մնայ Ռուսիոյ նախաձեռնած Եւրասիական Համարկումի ծրագրին բնոյթը երկու իմաստով: Առաջին՝ Եւրասիական Համարկումի ծրագիրը Ռուսիոյ համար տարածաշրջանային իր ազգեցութեան գօտին կառուցային իմաստով ամրապնդելու փորձ է, որ կրնայ դիտուիլ որպէս Անկախ Պետութիւններու Հասարակապետութեան (ԱՊՀ) աւելի զարգացած կամ բնորդ, միեւնոյն ժամանակ հասկցուիլ որպէս ոռուսական ծաւալապաշտութեան նոր հանգրուան: Դէաք է ընդգծել որ Փուլթինի այս նախաձեռնութիւնը ոչ ցարական կայսրութեան նոր տարբերակ մը պիտի ըլլայ, ոչ ալ Խորհրդային Միութեան վերակազմաւորումը, այն իմաստով, որ համարկումի գործընթացը տեղի կ'ունենայ միջազգային իրաւունքով գերիշխան ճանչցուած պետութիւններու մասնակցութեամբ: Միեւնոյն ժամանակ սակայն ո՞վ կրնայ կասկածի տակ առնել, որ միջազգային իրաւունքի կողքին եւ թերեւս անկէ աւելի կը կը պետութիւններու ուժային յարաբերութիւններու համակարգը: Այս իմաստով, Եւրասիական Համարկումի ծրագիրը կապիտալիստ Ռուսիոյ, կամ ոռուսական կապիտալի, ծաւալապաշտական ծրագիրն է նաեւ: Մէկ կողմ ձգելով այն հիմնական հարցումը թէ մինչեւ ե՞րբ ոռուսական կապիտալիքը լրնայ պահել տնտեսութեան զարգացման ներկայ մակարդակը, կամ ե՞րբ հարստութեան այս անհաւասար բաշխումի հետեւանքով առաջացած եւ հետզհետէ սրող սոցիալական բեւեռացումը ոռուսական հասարակութիւննէն ներս պայմանական բեւեռացումը

տանգ աստիճանի պիտի հասնի, յստակ է որ Հայաստանի համար ոռւսական պարտադրանքով դէպի եւրոպական Միութիւն կատարուած քայլերուն յանկարծական լքումը եւ Մաքսային միութեան համաձայնագրի ստորագրումը Սեպտեմբեր 3 2013-ին արդիւնք է երկու կախուածութիւններու՝ զինուորական եւ կապիտալիստական: Առաջինին մասին արդէն շատ խօսուած է եւ աւելորդ է այդ էջը կրկին բանալ: Կը մնայ միայն նշել, որ Հայաստանի դիւտանագիտութիւնը այնպէս ալ չյաջողեցաւ Մոսկուային արժենորեկ տալ Կովկասի մէջ իր միակ ուսագմական դաշնակիցին կարեւորութիւնը:

Երկրորդ կախուածութիւնը, որ, ի դէպ, ընդհանրապէս կ'անտեսուի որպէս թապու, աւելի վտանգաւոր է եւ, թերեւս,

Միա էոր կը հովանասորել Մամուչի, Թայքի, Գեղրդ և Ռուբեն Քառջյան



# AUTOMOBILES INTER-LUX INC.

CENTRE DE CARROSSERIE ET PEINTURE  
VOITURES D'HAUTE GAMME



VENEZ VISITER NOTRE NOUVEL EMPLACEMENT!

---

[www.interlux.ca](http://www.interlux.ca)

---

2025, RUE MONTEREY LAVAL, QUEBEC H7L 3T6 MTL: 514-394-1162

շատ աւելի լաւ կը բացատրէ հայրենի իշխանութիւններու անկարողութիւնը իրենց ոռւս գործընկերներուն դէմ: Քանի որ Հայաստան, որպէս սուրբ գրային ճշմարտութիւն ընդունած է ազատ չուկայականութիւնը որպէս տնտեսական քաղաքականութեան տոկմա, ոռւսական կապիտալէն հայաստանեան կախուածութեան ախտածանաչումը որպէս սկզբունք ընդհանրապէս կ'անտեսուի: Բայց իրողութիւնը այն է, որ Հայաստանի տնտեսական անցումը դէպի չուկայական համակարգ եղաւ ազատականացման եւ սեփականաշնորհման պիտակներով կատարուած ալան-թալանի ճամբով եւ ծնունդ տուաւ երկիրը «քառնթիթիթիթի» վերածած բուռ մը օլիկարգերու, որոնք գրեթէ նոյնացած են պետութեան հետ ի դէմ պետական ամենաբարձր պաշտօններ վարող անձնաւորութիւններու, որոնք պիտինսմէնի վերածուած են, կամ պիտինսմէններու, որոնք պատգամաւոր եւ նախարար եղած են: Գաղտնիք չէ, որ Հիմնականօրէն ֆինանսներու հոսքով յատկանշուած հայրենի տնտեսութեան մէջ ոռւսական կապիտալին ներթափանցումը գրեթէ բացարձակ է եւ այդ մէկը հայ օլիկարգներուն մասնակցութեամբ: Այլ խօսքով՝ Մաքսային միութեան Հայաստանի մասնակցութիւնը ներկայ իրավիճակով պիտի ծառայէ հայաստանեան մեծ կապիտալի շահերուն, միշտ աւելի հարստանալու հետամուտ շահագործողներու այդ դասակարգը աւելի պիտի յղփանայ, եւ, ցինիքաբար, նոյնիսկ դրական պիտի համարէ, որ Հայաստանի մէջ աշխատանք չգտնող մասսայական հատուածը փոխանակ բողոքելու պիտի նախընտրէ «վրթիները» հաւաքել եւ խոպան երթալ... ի դէպ, զարմանալիք չէ՞ արդեօք օլիկարգներու ընդհանրապէս լուութիւնը Հայաստանէն արտադադիթ երեւոյթին նկատմամբ... Պետական այրերէն մինչեւ քաղաքական ու հասարակական գործիչներ, արուեստագէտներ ու մտաւորականներ ահազանգ կը հնչեցնեն այդ մասին, բայց բարեպաշտ օլիկարգները որոնց աւարին մէկ կարեւոր մասը ոռւսական կապիտալի օրնութեամբ կը բազմանայ կը նախընտրեն ուրիշ նայիլ:

Մաքսային միութեան համաձայնագրի ստորագրութեան յաջորդած դժգոհութեանց ալիքը եւ անոր բանական բացատրութեան փորձերը ընդհանրապէս իրարու հակագրեցին դէպի Եւրոպա կամ դէպի Ռուսիա գործիւնը այլ կամ միւսը, եւ այնքան ալ կարեւոր չէ Եւրոպա թէ Ռուսիա Երանդ-ներէն մէկուն ընտրութիւնը որքան այլ լուսանական կատարելու այդ ազգային շահերու սահմանումն է: Հայաստանի պարագային, երկիրը գնած օլիկարգներուն ամբողջ ճիգը ազգային շահերը իրենց շահերուն հետ նոյնացնելու կը ձգտի, եւ քանի որ անցնող տասը տարիներուն այդ դասակարգը կրցաւ ժողովրդավարութեան խաղին ընդմէջն ստեղծել համակարգը մը որ ընտրութենէ ընտրութիւն ինքզինք կը վերարտագրէ, կրնայ նաեւ պետութիւնը օգտագործել իր շահերու պաշտպանութեան համար: Հետեւաբար, թէկուզ եւ Հայաստանի ընդգրկումը Եւրասիական համարկման ծրագրի մէջ հաստատ կը թոււի, իր ազգային շահերու պաշտպանութիւնը հիմնականին մէջ կախում պիտի ունենայ ներքադաքական մարտահրաւէրէն. որքանո՞վ կարելի պիտի ըլլայ պետական համակարգը դուրս բերել օլիկարգներու ճիրաններէն եւ ապահովել հասարակութեան լայն մասնակցութիւնը ոչ միայն քաղաքական այլ նաեւ ու մանաւանդ տնտեսական, այսինքն՝ հարստութեան վերաբաշխումի, որոշումներու կայացման գործընթացներուն: Միայն այդ ձեւով կարելի է որոշել Եւրասիական համարկումի Հայաստանի մասնակցութեան չափանիշը եւ գործընթացը դնել Հայաստանի ու Հայութեան զարգացման ծառայութեան եւ ոչ թէ վերածուիլ ոռւսական

մեծ կապիտալի եւ անոր ճամբովի իրականացող նոր կայսերական ծաւալումի մէկ խաղաքարտին:

Նախքան այս նոր գարափիութեան շեմին Սփիւռքի գոյապայքարի հիմնահարցերուն անդրադառնելը լուսարձակի տակ առնենք հայրենադարձութեան յղացքը այնպէս ինչ-պէս տրամաբաննեցինք աւելի վեր: Հայաստանի մեծ կապիտալը, այսինքն օլիկարգները, որուն կազմաւորման քաղաքական եւ գաղափարախօսական հիմերը դրաւ Լեւոն Տէր Պետրոսինի գլխաւորած ՀՀԾ-ն, իր լրումին հասցուց Ռոպերթ Փոչարեանի իշխանակարգը եւ ամբագրեց Սերժ Սարգսիսեանի Հանրապետական միակուսակցականապետութիւնը, երբեք այնքան ալ չէ մտահոգուած հայրենադարձութեամբ: Այնպէս ինչպէս երբեք ուսւըը չէ առած ներդրումներ կատարելու Արցանի թէ ազատագրուած հողատարածքներու վերաբնակցման համար: Աւելիին, այդ կապիտալին շատ աւելի ծանօթ են հետաւոր Քայլման կղզիները քան ըսենք Լաշինը: Լեւոն Տէր Պետրոսիսեան «նարին ու տողով» սփիւռքցիներուն առջեւ հայրենի անցումի գործընթացին մասնակցելու ամէն գուռ փակեց ոչ միայն որովհետեւ անկախ պետականութեան զարգացման տարբերակը աշխատանի անդամագրեան ու աշխատանի անդամագրեան շահագործութեան ու անդամագրեան շրջապատին: Ռոպերթ Քոչարեան յանձնառութեան առաւ քաղաքացիութեան օրէնքը փոխելու եւ Սփիւռքին ներգրաւելու Հայաստանի տնտեսական գործընթացին մէջ, երբ արդէն կապիտալի առաջին կուտակումը ստեղծած էր դրամատիբական համակարգը: Ատով հանդերձ, օրէնքը ուշացաւ, որովհետեւ Ազգային ժողովէն ներս մեծ կապիտալի դրածոյ պատգամաւորները ամէն ձեւի արգելքներ կը ստեղծէին: Սերժ Սարգսեան իրականութիւնը դարձուց հայրենադարձութեան ծրագիրը գործնականացնելու կոչուած կառոյցը՝ Սփիւռքին նախարարութիւնը, որ սակայն երբ լուրջ ճիգեր կ'ընէ սուրբիահայութիւնը Հայաստան տեղափոխելու եւ հաստատելու համար, կը բախի օդանաւային ընկերութեան գիները անիզնօրէն բարձրացնելու չվարանող հրէշներու: Մաքուր խղճով գործող ազնիւ դիւանագէտներ եւ ազգային-ներ տարիներու աշխատանք կը տանին, որպէսզի համաշխարհային վարկ ունեցող ձեռնարկութիւններ հարփւալու դիլիոններու ներդրում ընեն Հայաստան եւ մեծ կապիտալը կ'ակտիւանայ պետական միջոցներու չարաշահումով հայրենի շուկային մէջ անոնց մրցունակ զարգացման տարածութիւնները փակելու համար: Մէկ խօսքով, հայրենադարձութեան ծրագիրը կայ, անոր գիտակից են քիչ թէ շատ պետական մտածողութիւն ունեցողները, սակայն մեծ կապիտալը թոյլ չի տար, որ այդ ծրագիրը լիովին իրագործուի: Այս վերջինը կը նշանակի նախ եւ առաջ ունենալ երկիր մը, որ քաշողական ըլլայ ընկերային եւ տնտեսական զարգացման, ապագայ սերունդներուն կենսամակարդակի բարելաւման յոյս ներշնչելու իմաստով: Եւ ատոր համար հարստութեան վերաբաշխումի նուազագոյն հաւաքային ժողովութիւնը կայստական համակարգը այսօր աւելի մօտ է աւատապետութեան, ուր սոցիալական քաղաքականացներուն նոյնացած է օլիկարգներու բարեկործական ցանկութիւններուն հետ եւ լաւագոյն ապագային երաշխիքը կը բանաձեւուի հայրենապետական ճառակրով:

Այս իմաստով, թերեւս հետաքրքրական է դիտել տալ, որ Սփիւռքին կամաւոր հայրենադարձութիւնը չէ եղած այն համայնքներէն ուր ըլլալու կամ չըլլալու վտանգ կայ, ոչ ալ կենսամակարդակի բարելաւման հեռանկարով: Ընդհակառակը, կամաւոր հայրենադարձութեան վաղաքային բարեկարգները կը բանաձեւուի:

*Միա լը կը հովանաւորմ թժ. և Միկ. Վաղարշ եւ Կիրու Յիրամնեամ*



# JERUSALEM RESTAURANT



[www.jerusalemrestaurant.com](http://www.jerusalemrestaurant.com)

4775 Leslie street,  
Toronto, ON M2J 2K8  
Tel.: (416) 490-7888

take out  
CATERING  
banquet facilities  
**416-490-7888**

mediterranean  
**buffet**

գտնուած երկիրներու մէջ լաւապէս համարկուած համայնքներէ եւ հիմնականօրէն գաղափարական համոզումներով:

Սուրբիոյ քաղաքացիական պատերազմէն ետք չայստան ապաստանողներու երեւոյթը 2013-ին անկիւնադարձայի՞ն է այս իմաստով: Այսինքն՝ Հայաստան պատրա՞ստ է գոյութենական հարց գիմագրաւող համայնքի մը տեղափոխման եւ տեղաւորման մարտահրաւէրին: Հարցումը հիմնական է որովհետեւ 2014-ը կրնայ որոշէ ըլլալ նաեւ սուրբիական տագնապի հանգուցալուծման համար: Հետեւաբար, ենթադրելով լաւագոյն ելքը՝ խաղաղութեան բանակցութիւններու յաջող ընթացք եւ պատերազմի աւարտ, պէ՞տք է սուրբիահայ համայնքի զանգուածային հայրենադարձի ծրագիր պատրաստել եւ իրականացնել, թէ՞ այն փորձառութիւնը որուն մէջ ինք-զինք պատիւով փաստեց Սփիւռքի նախարարութիւնը իր աւարտին կը համանի եւ համայնքը կը վերադառնայ իր նոր առօրեային: Անշուշտ չենք գիտեր թէ համայնքի տրամադրուածութիւնը ընդհանրապէս ինչ կրնայ ըլլալ նման առաջարկի մը դէմ յանդիման, բայց երեւի իրապաշտ է ենթադրել, որ շատերը պիտի չուզեն լքել իրենց տուները, ինչ որ առաւել հասկնալի է հալէպահայութեան պարագային: Սակայն սիալ պիտի ըլլայ ձեռք բերուած այս մեծ փորձառութեան հիման վրայ առաջ չերթալ եւ հայրենադարձութեան ծրագիրը աւելի հաստատ հիմերու վրայ դնելու ձեւերու մասին չժամանել: Մէկ խօսքով՝ Սփիւռքի նախարարութեան նախաճենութեամբ սուրբիահրերու հայրենադարձութեան փորձառութիւնը մեկնած՝ կառուցել հայրենադարձութեան տրամադիր ամէն սփիւռքահայու հայրենիք տեղափոխման ու հաստատման դորձընթացը դիւրացնող մեքանիզմ:

Ամէն պարագայի, ինչ ալ ըլլայ սուրբիական տագնապի գարգացումը 2014-ին, Սփիւռքի գոյատեւման օրակարգին վրայ ամենահիմնական հարցը՝ սուրբիահայութեան, եւ ընդհանրապէս Միջին Արեւելքի հայութեան, տարածաշրջանային քաղաքական համարկումի մարտահրաւէրն է հետեւեալ տրամարանութեամբ. 2011-էն ի վեր արաբական երկիրներու մէջ տեղի ունեցած սոցիալական ըմբոստութիւններն ու անոնց տարբեր գարգացումները ամբողջ տարածաշրջանը աշխարհաքաղական փոփոխութիւններու շեմին դրած են: Առաջին Համաշխարհային պատերազմին Սայքս-Փիքօ համաձայնութեամբ ստեղծուած սահմանները թուլացած են. քրտական տարբեր շրջաններու իրողական անկախութիւնը, ազգ-պետութիւն հասկացողութեան անվաւերականութիւնը, արաբական ազգայինութեան վերջնական ձախողութիւնը եւ, մասնաւորաբար, ներիսլամական պառակտումը՝ սիւնիներու եւ շիաներու միջեւ կրնայ մինչեւ իսկ կառավարման նոր կառուցածներու փնտուուքը հրամայական դարձնել: Սուրբիական տագնապը երեւան հանեց քանի մը ծչմարտութիւն: Առաջին, արաբական ազգային ոչ մէկ ծրագիր կրցած է յաջողիլ կրօնա-յարանուանական ինքնութիւնները գերազանցող պետական համակարգ ստեղծել: Ինչ ալ ըլլայ իշխող ուժին գաղափարախօսութիւնը, պետական համակարգը չէ որ հասարակութիւնը ներթափանցած է այլ կրօնա-յարանուանական ինքնութիւններն են, որ թափանցած են պետական համակարգերը եւ զանոնք իրենց շահերուն ծառայութեան դրած: Այս ձախողութեան հիմնական պատճառը ժողովրդավարութեան, մարդկային իրաւանց եւ տարրական պատութիւններու բացայրութիւնն է: Պետական ամբողջատիրական համակարգերու բարեկարգչական խոստումները երբեք չեն իրագործուիր, եւ երբ անտեսական պատականացումները հասարակութեան տարբեր խաւերուն զարգացման առիթ կը ստեղծեն ամենէն աւելի հարստացողները միշտ կ'ըլլան պիտական համակարգին տիրապետող համառածները: Երկրորդ, մինչ արաբական երկիրներու մէջ ըմբոստութիւններուն հիմնական պատճառը սոցիալական անարդարութիւններն ու ժողովրդա-

վարութեան բացակայութիւնն էր, ամբողջատիրական վարչակարգերու այլընտրանքը սիւննի արմատականութիւնն է, որուն ամենավայրագ երեսը երեւան ելաւ Ավունիստանէն ու Զէէնիայէն յետոյ Մալիի, Լիպիոյ, իրաքի, Սուրբիոյ եւ Լիքանանի որոշ շրջաններուն մէջ: Երեւոյթը իւրայատուկ է, ինքնիրուով կը զարգանայ, բայց նաեւ կը վայելէ Սէւլտական Արաբիոյ եւ Թուրքիոյ նման երկիրներու ուղղակի թէ անուղղակի աջակցութիւնը: Սիւննի արմատականութեան այլընտրանքը այսպէս կոչուած «իսլամական ժողովրդավարութիւնը» չէ ինչպէս «թրքական բնորդ»ը կը քարոզէ: Իսլամական օրէնքը ամբողջութեամբ թէ մասամբ սահմանադրութեամբ ամրագրելու ծրագրային դրոյթները պատճառ հանդիսացան որ Թունուզի եւ Եգիպտոսի նման երկիրներու մէջ, ուր «իսլամական ժողովրդավարութիւնը» փորձարկուեցաւ հասարակութեան եւ լայիք խաւերը, եւ մանաւանդ ոչ-իսլամ հատուածները ընդդիմանան ընդհուպ մինչեւ զինուորականներու վերադարձին զօրակցելով: Երրորդ, սիւննի արմատականութեան այս երեւոյթին ակրեսի արտայատումը գոյութեան վատակ կը ստեղծէ տարածաշրջանի ամենա-հին եւ ամենաանպահտպան բնակիչներուն՝ քրիստոնեայ համայնքներուն: Իր բոլոր թերութիւններով, լիբանաններան յարանուանական ժողովրդավարութեան համակարգը գէթ տեսականօրէն կրօնա-յարանուանական գոյակցութեան միակ երաշխիքը կը թուփ ըլլալ ցարդ: Հետեւաբար, որքան ալ որ վերացական թուփ, լիբանաննեան համակարգը միակն է որ կրնայ բնորդ ըլլալ տարածաշրջանային կառավարման նոր բնորդներու: Բայց այլ մէկը կախում ունի հիմնականօրէն Միջին Արեւելքի քրիստոնէութեան ինքնակազմակերպման կարողութենէն եւ տարածաշրջանային ցանցի առաջացման կարողութենէն: Այս ուղղութեամբ է որ Միջին Արեւելքի հայութիւնը, որուն կարգին անշուշտ սուրբիահայութիւնը, սփիւռքեան իր գոյատեւման անմիջական ապագան պէտք է որոշէ:

Սփիւռքի գոյատեւման օրակարգին է անշուշտ այն ինչ ընթացիկ գարձած է կոչէլ «նոր սփիւռք». ի տարբերութիւն «գասական սփիւռք»ին, եւ անով կը հասկցուի Հայաստանէն կամաւոր կերպով եւ տնտեսական պատճառներով հիմնականօրէն նուստիք գաղթած հայութիւնը, թիւով գրեթէ այնքան որքան Հայաստանի բնակչութիւնը... Անոնց կազմակերպման եւ քաղաքական ակտիւացման հիմնախնդիրը հրամայական է անշուշտ բազմաթիւ պատճառներով, որոնց շարքին այտք է գասել նաեւ Եւրասիական Համարկումի ծրագրի իրականացման պարագային Մուկուայի մէջ ազգեցութիւն ձեռք բերելու իմաստով - եթէ նման բան թոյլ կու տայ ուսուսկան քաղաքական համակարգը... Մոսկովուայի մէջ քաղաքական ազգեցութեան ձեռքբերման, քաղաքական ակտիւիզմի, կամ այսպէս կոչուած «լուպիստական» գործ տանելու ի՞նչ գասել կարելի է քաղել խորհրդային տարիներու փորձառութենէն: Թերեւս արժէ նման ուսումնասիրութիւն մը կատարել եւ բաղդատել խորհրդային այլ ժողովուրդներու փորձառութեան, ըսենք՝ Միկոյեան եւ Ալիեւ, ապա խորհրդածել այսօրուան իրավիճակին մասին: Կը մնայ որ հացի խնդրով Հայաստանէն նուսիք գաղթողներուն մեծամասնութիւնը այսօր կը մտածէ ամենէն աւելի ուսուսկան քաղաքացիութեան ձեռքբերման, պարագային կամական ակտիւիզմի մասին: Այսպահելի չեն բնաւ: Այս «նոր սփիւռք» կազմակերպման խնդիրը օրակարգի վրայ գնելով հանդերձ, արդար չէ՞ հարց տալ թէ ի՞նչ կարելի է ընել որ նման հարց օրակարգի վրայ ընդհանրապէս չըլլայ, կամ՝ ինչո՞ւ հայրենադարձութիւնը հոնկէ չսկսիլ:

ԽԱԶԻԿ ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

*Այս էջը կը հովանառուի Ա. և Ա. Մայզը Ժողի և Անի Խորոշեան-Ժողի*

# occasiongabriel.com



PRE-OWNED VEHICLES  
FINANCING STARTING AT

**0.9%\***



2014 HONDA CIVIC

**NEW VEHICLES • PRE-OWNED VEHICLES**

For more information, please contact

**Kevork Asadourian**, [kasadourian@gabriel.ca](mailto:kasadourian@gabriel.ca)

**Harry Sayan**, [hsayan@gabriel.ca](mailto:hsayan@gabriel.ca)

**Vahan Vartanian** [vvartanian@gabriel.ca](mailto:vvartanian@gabriel.ca)

**HONDA**  
**GABRIEL**

7000 Henri Bourassa East  
Montreal, Quebec  
**514 327-7777**

[www.hondagabriel.com](http://www.hondagabriel.com)

\*Subject to credit approval. Some conditions apply. Financing starting at 0.9% on select models only. See Honda Gabriel and for all details.

## ՀՀ Սփիտքի նախարարութեան 5-ամեակ

### Սուրիահայերը աշխատանքի եւ կենցաղի նոր մշակոյթ բերին Հայաստան. ՀՀ Սփիտքի նախարար Հրանոյշ Յակոբեան

2008-ի Հոկտեմբերին ստեղծուեցաւ ՀՀ Սփիտքի նախարարութիւնը, որուն գործունէութեան հիմքը՝ Հայրենիք-Սփիտք արդիւնաւէտ համագործակցութիւնն է: Նախարարութեան նպատակը այդ կապերու ամրապնդման եւ ազգային ինքնութեան պահպանման աջակցիլն է, հայկական համայնքներէն ներս՝ մայրենի լեզուի պահպանումն ու Հայաստանի տնտեսութեան զարգացման մէջ հայերու ներուժի բացայացումն ու օգտագործումն է:

Նախարարութեան ստեղծման 5-ամեակի առիթով «Հորիզոն»»ը զրուցեց ՀՀ Սփիտքի նախարար Հրանոյշ Յակոբեանի հետ:

**Հ- Առաջին հինգ տարին ի՞նչ հանգրուան կարելի է համարել նախարարութեան մը համար եւ ի՞նչ հանգրուան եղաւ ան յատկապէս Սփիտքի նախարարութեան համար:** Ընդհանրապէս ինչո՞վ կը տարբերի ձեր նախարարութիւնը այլ նախարարութիւններէ:

**Պ- Մեր նորաստեղծ նախարարութեան համար առաջին հինգ տարին կայացման եւ ինքնահաստատման տարիներ եղան, նախ՝ համապատասխան ոլորտը ճանաչելու, առկայ հիմնախնդիրները բացայացելու, նրանց համակարգուած ու նպատակային լուծումներ տալու համար:**

Ի տարբերութիւն միւս գերատեսչութիւնների, որոնք աշխատում են ինդիրները Հայաստանում լուծել եւ կարգաւորել՝ հրամանների ու կարգադրութիւնների միջոցով, Սփիտքի նախարարութիւնը իւրայատուկ է նրանով, որ նրա գործունէութեան ոլորտը Հայրենիք-Սփիտք գործակցութիւնն է: Հայկական Սփիտքը բազմադէմ է ու բազմաշերտ, 100-ից աւելի երկում տարածուած, որի հետ աշխատելը չափազանց բարդ է եւ հետաքրքիր: Աստ էութեան, նախարարութիւնն աշխատում է մօտ 30 հազար տարաբնոյթ հայկական կառույցների, 18 համահայկական կազմակերպութիւնների հետ: Եւ բնական է, որ նախարարութիւնը չի կարող Սփիտքի հետ յարաբերուել հրամայական պարտադրանքներով: Սփիտքի հետ բոլոր կապերի ու առնչութիւնների հիմքում մենք դնում ենք միայն գործակցութիւնը, աշխատում սերմանել վստահութիւն ու փոխըմբոնում:

Զափազանց կարեւոր է Սփիտքի իւրաքանչիւր կառոյցի, համայնքի ճանաչողութեան, նրա առանձնայատկութիւնների բացայացման խնդիրը: Այս խնդիրը լուծելու նպատակով մենք ի սկզբանէ համագործակցելինք եւ՝ Հայաստանի, եւ՝ Սփիտքի համապատասխան գիտական, հետազոտական կառոյցների հետ՝ հրատարակելով 100-ի մօտ գիտական աշխատութիւններ, հետազոտութիւններ, մեթոսական նիւթեր:

Տարիների փորձը ցոյց տուեց, որ նախարարութիւնը պէտք է գործի, իրականացնի ծրագրեր ու գործակցի սփիտքեան կառույցների հետ՝ ցուցաբեկելով տարբերակուած մօտե-

ցում, հաշուր առնելով իւրաքանչիւր տարածքի կառոյցի առանձնայատկութիւնը:

Միաժամանակ, մենք ազգովին ունենք համահայկական խնդիրներ, եւ այդ համագույշին օրակարգի առնչութեամբ բոլորս պէտք է համախմբուենք եւ գործենք միակամ ու մի-ամական:

Օգտուելով առիթից չնորհակալութիւն եմ յայտնում բոլոր համահայկական կառոյցներին, հայաշունչ կազմակերպութիւններին, անհատներին, որոնց օգնութեամբ եւ օժանդակութեամբ է նաեւ, որ այսօր այսպէս յատակօրէն եւ վստահաբար գործում է Սփիտքի նախարարութիւնը:

Հոկտեմբերին ամփոփուեց նախարարութեան 5-ամեայ գործունէութիւնը: Թէ ինչ հանգուաւանի է հասել նախարարութիւնը 5-ամեայ գործունէութիւնը: Այս կառոյցն է այն շաղախը, որ կապում է Սփիտքը Հայրենիքին, ամրացնում եւ ուղղորդում է այդ կապը: Նախարարութիւնն իր 5-ամեայ գործունէութեամբ ապացուցեց Սփիտքի հետ յարաբերութիւնների համակարգման եւ պետութեան հետ առնչութիւնների կեղունացման նպատակայարմարութիւնը:

«Այս տարիների աշխատանքի արդինքում ստեղծուել է փոխըմբոնման, վստահութեան եւ համագործակցութեան բարենպաստ մինույթը համայն հայութեան ներուժը մէկտեղելու, Հայաստան հայրենիքը հզօրացնելու եւ Սփիտքը հայպահելու համար»:

Նախարարութեան անցած ուղու մասին աւելի շատ բարձրաձայնեցին ու վկայեցին Հայաստանի եւ Սփիտքի ամենատարբեր կառոյցներն ու անհատները՝ գնահատելով ու արժենորելով Սփիտքի նախարարութեան անցած ուղին: Կարծում եմ, ամենաառարկայական վերաբերմունքը ցուցաբերում են այն անհատներն ու կառոյցները, ում հետ հնարաւորութիւն ենք ունեցել աշխատել, ովքեր անմիջականորէն եղել են մեր ծրագրերի մասնակիցներն ու մեր գործընկերները, իսկ ովքեր չեն մասնակցել մեր ծրագրերին, չեն առնչուել մեզ հետ կարող են խօսել այն, ինչ ուղղում են:

Աւելի՞ն, Հոկտեմբեր 22-ին, ՀՀ նախագահը հրամանագիր ստորագրեց «Հայկական Սփիտքի հետ ՀՀ կառավարութեան համակարգում միասնական քաղաքականութեան իրականացման մասին», որը կարեւորագոյն օրինաչափական փաստաթուղթ է այս աշխատանքները առաւել յատակ իրականացնելու համար: Աւելի՞ն, ՀՀ գործադիր իշխանութեան եւ տարածքային կառավարման մարմինների համակարգում, ՀՀ Սփիտքի նախարարութիւնը սահմանուել է որպէս գլխադասային մարմին: Հանրապետութեան նախագահի գնահատականը եւ հրամանագիրը պարզապէս պարտաւորեցնող են եւ

*Այս էջը կը հովանառուեմ ԱՌ. և ԱՌ. Կրոգու և Արման Գայրիշեան*



Նախարար Յակոբեան սուրիահայ աշակերտներու հետ

նոր խնդիրներ են դնում նախարարութեան առջեւ:

Հ- Վերջին երկու տարիներուն ընթացքին Սփիւռքի նախարարութիւնը մեծ աշխատանք տարաւ յատկապէս սուրիահայութեան խնդիրները լուծելու առումով՝ օրէնսդրական դաշտէն սկսեալ մինչեւ նպաստներ, աշխատանքի տեղաւորում, այժմ «Նոր Հալէպ» քաղամասի կառուցում: Ի՞նչ կարելի էր ընել, որպէսզի Հայաստան հասած բոլոր սուրիահայերը մնային Հայաստան եւ ինչը խանգարեց այդ «աւելին» իրականացնելու համար:

Պ- Ի տարբերութիւն 2004 թուականի սկզբին իրաքեան պատերազմի արդիւնքում Հայաստան ներգաղթած իրաքահայերի՝ սուրիահայերը Հայաստան գալուն պէս զգացին Հայաստանի իշխանութիւնների հոգատար վերաբերմունքը, նրանց խնդիրներին շուտափոյթ լուծում տալու պատրաստակամութիւնը, քաղաքական կամքը եւ ի հարկէ, արժանացան իրենց հայրենակիցների ջերմ ընդունելութեանը:

ՀՀ նախագահը սուրիահայերի աշխատանքների համակարգումը վերապահեց ՀՀ Սփիւռքի նախարարութեանը, որն էլ համագործակցելով պետական բոլոր կառույցների հետ՝ հնարաւորինս լուծում է սուրիահայերի առջեւ ծառացած իւրաքանչւր խնդիր՝ առողջական լնկերային, կրթական, եւայլն:

Պետութեան հետ բոլոր յարաբերութիւնները սուրիահա-

յերի համար լուծում են անվճար, վիզաներ, կացութեան կարգավիճակ, վարորդական վկայական, ինքնաշարժների մուտքի վճար, անձնագրեր:

Յաւոք, Հայաստանի Հանրապետութեան նիւթական միջոցները սահմանափակ են, եւ երկրում առկայ աղքատութիւնը, ցածր աշխատավարձերը հնարաւորութիւն չեն տալիս ամբողջապէս լուծել նրանց յատկապէս բնակարանային խնդիրները:

Հաճէլի է, որ միջազգային կազմակերպութիւնների ներկայացուցիչները բազմիցս նշում են, որ ՀՀ-ն կարող է օրինակ հանդիսանալ ողջ աշխարհին սուրիահայերի համար կատարած աշխատանքների ծաւալներով: Հարկ եմ համարում նշել, որ սուրիահայերի համար Հայաստանը նիւթական օժանդակութիւն չի ստացել որեւէ միջազգային կազմակերպութիւնից, եւրոպական պետութիւններից, ինչը նրանք իրականացնում են այլ երկրներում գոյացած ճամբարներին օգնելու համար: Այո՛, մենք ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակի եւ այլ միջազգային կազմակերպութիւնների հետ իրականացնում ենք համատեղ մարդկային օգնութեան (հագուստ, սնունդ) ծրագրեր, սակայն դրանք սահմանափակ են եւ թիրախային:

Հ- Վերջին տուեալներով ի՞նչ պատկեր կը կազմէ սուրիահայերու ներկայութիւնը Հայաստանի

*Միա էօր կը հովանաւորեմ ԱՌ. և ԱՌ. Գալուստ Եւ Անդրանիկ Գրիգորեան*

մէջ (քանի՞ սուրիահայ եկաւ, քանի՞ն մնաց, քանի՞ն վերադարձաւ կամ մեկնեցաւ այլ երկիրներ):

Պ- Ընդհանուր առմամբ մէկուկէս տարուայ ընթացքում Հայաստան է ժամանել շուրջ 15-16 հազար սուրիահայ, որոնցից շուրջ 4-5 հազարը հիմնականում վերադարձել է Սուրիա կամ մեկնել է Լիբանան: Կան նաեւ Եւրոպա, ԱՄՆ եւ ՌԴ մեկնած սուրիահայեր, սակայն նրանք շատ փոքր թիւ են կազմում: Այսօրուայ դրութեամբ Հայաստանում են բնակւում շուրջ 11.000 սուրիահայեր: Վերջին շրջանում Հալէպի ճանապարհի բացուելու արդինքում նկատում է սուրիահայերի նոր հոսք, եւ այս թիւն աճելու միտում ունի:

**Հ- Ի՞նչ հանգրուանի մէջ է «Նոր Հալէպ» քաղամասի կառուցումը, բնակեցումը Ե՞րբ կը նախատեսէ:**

Պ- Կարծում եմ՝ հարցը պէտք է յուզի իւրաքանչիւր հայի, աշխարհի որ ծայրում էլ նա ապրի: «Նոր Հալէպ» թաղամասի կառուցման ուղղութեամբ աշխատանքներն աշխուժօրէն շարունակւում են: Հոկտեմբեր ամսուայ վերջին աւարտուել է կառուցապատուող տարածքի երկրաբանական եւ երկրաչափական հետազօտումը, իսկ այժմ ընթանում են շէնքերի նախագծերն աւարտական տեսքի բերելու աշխատանքները:

Դրան զուգահեռ շարունակւում է դրամահաւաքի գործնթացը: «Սուրիահայերի հիմնախնդիրները համակարգող կեղուն» ՀԿ-ի հաշուին արդէն կայ 50.000.000 ՀՀ դրամ գումար (մօտ 125.000 ԱՄՆ տոլար): Ցանկանում եմ նշել, որ թաղամասն արագ շահագործման յանձնելը կապուած է ծրագրի ֆինանսաւորումից: Ցաւօք, այսուեղ հաստատուած մեր հայրենակիցները ի վիճակի չեն հոգալ բնակարանի գումարի հարցը, քանի որ օրուայ խնդիր են լուծում: Այդ պատճառով կրկին ցանկանում եմ դիմել ողջ հայութեանը.

Աշակցէք ձեր հայրենակիցներին հիմնաւորուել իրենց Հայրենիքում, նրանք ստիպուած չեն լինի բռնել պանդիստութեան ճամբան, նորից դառնալ փախստական: Հայրենիքը կարիք ունի այս բարի, աշխատասէր եւ համեստ մարդկանց:

Նրանք նոր մշակոյթ են բերել Եւ աշխատանքի բերենց աշխատառներում: Համախմբուենք այս ծրագրի շուրջ, այն հայութեան պատուի խնդիրն է, այն մեր հայրենիքը ամրացնելու եւ սուրիահայերին հոգեկան ծանր վիճակից հանելու խնդիր է: Մասնակցենք այս ծրագրին եւ հապատանանք մեր հայ լինելու համար:

**Հ- Ակնյայտ է, որ Սփիւռքի նախարարութիւնը նորասեղծ ըլլալով հանդերձ՝ հինգ տարուան մէջ մեծ գործունեութիւն ծաւալեց, սակայն դուք, որ միշտ կը գտի աւելիին, ի՞նչ ծրագրած էիք կամ կ'ուզէիք ընել, բայց չհասցուցիք: Ի՞նչ խոչընդունեած եղանակ է անելիք եւ անելիք համար:**

Պ- Կեանքի կոչելով իր նախընտրական ծրագրի կարեւոր գորյթներից մէկը եւ 2008 թ. ստեղծելով Սփիւռքի նախարարութիւնը՝ ՀՀ նախագահը նախարարութեան առջեւ ուազմավրական Յ կարեւոր խնդիր է զբեկ՝ Հայապահպանութիւնը Սփիւռքում, ազգային ներուժի համախմբումը եւ դրա նպատակային օգտագործումը Հայաստանի եւ Արցախի գարգացման համար եւ Հայրենադարձութեան խթանումը: Նախարարութեան 5-ամեայ ողջ գործունէութիւնը եւ իրականացրած ծրագրերը ուղղուած են եղել այդ խնդիրների լուծ-

մանը:

Նախարարութեան օգնութեամբ Սփիւռքի կարեւոր խնդիրներն ու Հարցադրումները քննարկման առարկայ են գառնում ՀՀ կառավարութիւնում, լուծումներ են տրուում շատ ու շատ հարցերի: Սա նշանակում է, որ Սփիւռքի կրթական, մշակութային, հասարակական-քաղաքական, բարեգործական, կրօնական, երիտասարդական, լրատուական եւ այլ կազմակերպութիւնների գործունէութեանը օժանդակում, աշակցում է Հայաստանի Հանրապետութիւնը՝ պետականութեան գործիքների իր ամբողջ զինանցողով, օգնում Սփիւռքը մերձեցնելու հայրենիքին, հայրենիքն էլ՝ Սփիւռքին:

Նախարարութիւնը իսկապէս կարողացաւ լուծել իր առջեւ դրուած շատ խնդիրներ՝ կեանքի կոչելով այնպիսի ծրագրեր, որոնք կայացան, ապացուցեցին իրենց կենսունակութիւնն ու անհրաժեշտութիւնը, որոնք գնալով ընդլայնուեցին եւ ծաւալուեցին: Օրինակ՝ հայրենաճանապահութեան «Արի տուն» ծրագիրը գարձել է նախարարութեան այցեքարտը՝ կապելով շուրջ 50 000 հայրենաբնակների ու ափիւռքահայերի:

Կարող եմ ասել, որ եթէ լինէին աւելի մեծ նիւթական հնարաւորութիւններ՝ «Արի տուն», «Սփիւռք» ամառային գպրոց եւ այլ ծրագրեր կ'իրականացնէինք աւելի մեծ տարողութեամբ՝ ընդգրկելով անհամեմատ մեծ թուով մասնակիցների: Մեր գերազոյն խնդիրը եղել եւ մնում է երեխանների շրջանում մայրենիի իմացութեան եւ հայերէն խօսելու յորդորը: Յառաջիկայում կարիք կայ հայկական դպրոցի ստեղծման, հայկական միօրեայ եւ հիմնական դպրոցների, պէտք է հզօրացնել մասնագիտական ցանցերը եւ աշխուժացնել նրանց գործընթացը: Անհրաժեշտ է կատարելագործել համահայկական տեղեկատուական հարթակը, ստեղծել համահայկական հեռուստապալիք, ընդլայնել ուստիօ-հաղորդումները, բարձրացնել մասնագիտական համաժողովների արդիւնքում ստեղծուած ընկերակցութիւնների արդիւնաւէտութիւնը եւայլն:

Լայնածաւալ եւ համընդգրկուն գործունէութիւն ծաւալելուն, թերեւս, խոչընդունում է մեր ուսուուրանների եւ հնարաւորութիւնների սահմանափակութիւնը: Խսկ Սփիւռքի բարոյական, նիւթական, գիտական, մարդկային, տեղեկատուական հարուստ աղբիւրներ ամբողջութեամբ չեն օգտագործում ի շահ մեր հայրենիքի եւ Արցախի, ի շահ այն հարդու, ով զբաղուած է հայրենապահպանութեամբ:

Հայաստանը եւ Սփիւռքը մեծ անելիքներ ունեն, ես հաւատում եմ, որ մենք միասնաբար կը լուծենք մեր համագույն խնդիրները՝ ամենուրեք պահպանելով հայի տեսակը, լեզուն ու աւանդութիւնները՝ ամենուրեք ապահովելով մեր սերունդների միասնական ու հայեցի ապագան: Մեր հուժկութայլերով պէտք է հասնենք Հայոց Յեղասպանութեան ճանաչման, դաստիարակուման եւ հետեւանքների վերացման անշափ կարեւոր հանգուցակիցտիւն: Մինչ 2015 թ. իւրաքանչիւր հայ անելիք եւ ասելիք ունի մեր դարաւոր դատի վերականգնման եւ ցեղասպանութիւնների կանխարգելման առումով:

**Հարցազրոյցը վարեց՝ Նախիրի Մկրտիչեան- Տաղեան**

*Միս Էջ կը հովանաւորէ Գեղուիի Պապամեամեամի յիշարաւ Պարուժամ Պապամեամեամի*



W W W . V I N O R O S S O . C A

5291 HENRI BOURASSA O, ST-LAURENT, QC, H4R 1B7 · TÉL. : (514) 337-6664 · INFO@VINOROSSO.CA

*Bon Appétit ! Ծարի ախործակ՝*

# Հարցազրոյց ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի յանձնախումբի Կեղրոնական խորհուրդի ներկայացուցիչ, ՀՅԴ Բիւրոյի անդամ Յակոբ Տէր Խաչատրութեանի հետ

## «Ծանաչումն հասուցում» այս է մեր նոր կարգախօսը

«Հորիզոն». – Նոյեմբերին կայացած Հայ Դատի յանձնախումբերու Ամերիկաներու եւ Աւստրալիոյ ցամաքամասի եւ անոր նախորդող Եւրոպայի Հայ Դատի յանձնախումբերու խորհրդադողովները անկիւնադարձային էին: Ի՞նչ էին անոնց կայացման նպատակները եւ ի՞նչ արդին ներու, որոշումներու յանգեցան:

**ՑԱԿՈԲ ՏԷՐ ԽԱՉԱՏՐՈՒԹԵԱՆ.** – Հիմնականին մէջ երկու տեսակի խորհրդաժողովներ են մեր գումարածները, որոնք կը կայանան Դաշնակցութեան Բիւրոյի հրաւէրով. առաջինը՝ այսպէս կոչուած, կեղրոնական խորհրդաժողովներն են, զորս առհասարակ կը գումարենք Հայաստանի անկախացումն ետք երեւանի մէջ եւ երկրորդը՝ տարածաշրջանային: Այս տարի տարածաշրջանային տարի է, այդ պատճառով ալ մենք ամրան սկիզբը Լոնտոնի մէջ ունեցանք Եւրոպայի ժողովը, իսկ Նոյեմբերին՝ Ամերիկաներու եւ Աւստրալիոյ խորհրդաժողովը: Հիմնականին մէջ երկու խորհրդաժողովներն ալ ունէին նոյն օրակարգը. այսօր Հայ Դատի մեր սահմանումը կը կեղրոնանայ 4 հիմնական կէտերու վրայ, որոնք կը հանդիսանային մեր այս ժողովներու օրակարգի նիւթերը: Առաջինը, դասականօրէն մեր Հայ Դատի հիմնական կէտը նկատուող Հայոց Յեղասպանութեան հարցն է. կ'ըսեմ հարց եւ ոչ ճանաչում, որովհետեւ քանի մը ծալք ունի մէջը: Մենք անցեալին կեղրոնացած էինք ճանաչումի հանգրուանին վրայ, սակայն այսօր այդ հանգրուանը անցած է, ուրեմն՝ ճանաչում, դասապարտում եւ ի վերջոյ հատուցում: Այս օրերուն հատուցման հարցը կը քննենք եւ այդ մէկը կը կատարենք հաւաքականօրէն. այդ երկու խորհրդաժողովներուն ալ բնականաբար նախ արժեւորում կատարուեցաւ, թէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման հանգրուանը ուր է հասած, ցարդ դասապարտումի

ի՞նչ աշխատանքներ են տարուած, այլազան ի՞նչ օրէնքներ են մշակուած վերջերս. այսինքն, նախապէս կարելի էր միայն օրինական հիմքերը վերագրել 1948-ի ցեղասպանութեան յատուկ դաշնքին, սակայն ատիկա փոխուած է այսօր եւ վերջին 10-15 տարիներուն ընթացքին, յատկապէս եւրոպական թատերաբեմի վրայ, կան տարբեր ատեաններ կամ համաշխարհային իմաստով ատեաններ, որոնք այսպէս կամ այնպէս մարդկային իրաւանց հարցերու քննարկման վայրեր են, եւ բնականաբար, կարդ մը մասնագէտներու կարծիքով, կրնան նաեւ մեզի համար հանդիսանալ այն վայրերը, ուր պէտք է ներկայացնենք հատուցման մեր ծրարը: Ուրեմն մեր զրոյցներուն առաջին օրակարգը Յեղասպանութեան հարցն է, երկրորդը՝ Հայաստան եւ Արցախ, մեր հայկական պետականութեանց այսօրուան իրավիճակը եւ մեր ընելիքը՝ իբրև սփիւռքի մէջ գործող Հայ Դատի յանձնախումբեր եւ գրասենեակներ. յանձնախումբեր ըսելով կը հասկնանք ընդհանրապէս սիրողական հիմքով կամաւորներէ բաղկացած այն բանակը, որ աշխատանք կը տանի, իսկ գրասենեակները արդեստավարժ ձեւով հիմնուած կեղրուներն են. Եւրոպայի պարագային կեղրոնականը Պրիւքսէն է, իսկ Ամերիկաներու պարագային Ուաշինգթըն է: Զի նշանակեր, որ այլ գրասենեակներ չկան, սակայն ասոնք կեղրոնական գրասենեակներն են՝ կապուած Բիւրոյին, կը գործեն նաեւ տեղական գրասենեակները, ինչպէս Օթթառուայի գրասենեակը Գանատայի շրջանին համար, Արեւելեան եւ Արեւմտեան Ամերիկաներուն գրասենեակները Ամերիկայի համար եւ Աւստրալիոյ գրասենեակը՝ Աւստրալիոյ համար: Կը գործէ նաեւ գրասենեակ Պուէնոս Այրէսի մէջ՝ Հարաւային Ամերիկայի շրջանին համար: Ուրեմն այդ բոլոր գրասենեակները, բոլոր կարողականութիւնը՝ գրասենեակներու եւ յանձնախումբերու ուղ-



դորդել է գէպի օրակարգի երկրորդ կէտը, այսինքն՝ Հայաստանի պետականութեան հիմերու ամրապնդման, միջազգային մարզին մէջ հեղինակութեան բարձրացման եւ ազգային առաջնահերթութիւններու հարցով տարուելիք աշխատանքներու կապակցութեամբ, ինչ կը վերաբերի Հայաստանի: Բնականաբար՝ Հայաստան ներքին իմաստով ունի բազմաթիւ դժուարութիւններ, ըլլայ ատիկա ընդհանուր միջնորդաւը, ընկերային տնտեսական իմաստով այս իշխանութեան սիալ քաղաքականութիւնը, փտախտութիւնը, փտախտութիւնը, սակայն մենք կը փորձենք այս բոլորէն հեռու մնալ, որովհետեւ միջազգային շրջանակի մէջ վերջ ի վերջոյ մեր հիմնական նպատակը հայաստանի պետական կապերը ամրապնդելն է այլազան երկիրներու կամ այլազան միջազգային կազմակերպութիւններու, որոնց կարգին ՄԱԿ-ը, եւրոպական Միութիւնը եւ այլն:

Արցախի պարագային, բնականաբար, հիմնական հարցը ինքնորոշման իրաւունքի հաստատումն է եւ Արցախի անկախութեան ճանաչման համար տարուող աշխատանքն է, որուն վրայ կեղրոնացաւ ժողովը, մանաւանդ նկատի առած վերջին տարուան ընթացքին Արցախի պարագային տեղի ունեցած ճանաչման որոշ յաջողութիւնները թէ՝ Հարաւային Ամերիկայի մէջ, ինչպէս՝

*Այս էք կը հովանաւորեն ԱՌ. և ԱՌ. Մերժ Վարդգիս եւ Քվայչ Շամշան*



**Plaza Volare** MONTRÉAL  
SALLE DE RÉCEPTION - CENTRE DE CONGRÈS

 **CROWNE PLAZA**  
MONTREAL

6600, Côte-de-Liesse,  
Saint-Laurent | 514-735-5150  
[www.plazavolare.com](http://www.plazavolare.com)



**PMG**  
GROUPE PLAZA MANAGEMENT GROUP  
BANQUETS - CONGRÈS - TRAITEUR  
[plazapmg.com](http://plazapmg.com)



[www.plazapmg.com](http://www.plazapmg.com)



**EMBASSY** PLAZA

1003 boul. Curé-Labellie  
Laval | 450-781-0606  
[www.embassyplaza.com](http://www.embassyplaza.com)

 **LE CHALLENGER**  
SALLÉS DE RÉCEPTION MONTRÉAL

2525 rue des Nations  
Saint-Laurent | 514-337-7160  
[www.challengerplaza.com](http://www.challengerplaza.com)

  
**PMG**  
DIVISION DE LAITEUR

Catering Division  
Montreal | 514-965-5823  
[www.plazapmg.com](http://www.plazapmg.com)

  
**PLAZA**  
**ANTIQUE**

6086 Sherbrooke Est  
Montreal | 514-255-2922  
[www.buffetantique.com](http://www.buffetantique.com)

  
**PLAZA**  
**GATINEAU**

 **CROWNE PLAZA**  
GATINEAU

2 rue Montcalm  
Gatineau Ottawa | 819-778-3040  
[www.plazagatineau.com](http://www.plazagatineau.com)

Ուրուկուէյ, եւ թէ Միացեալ Նահանգ-  
ներու մէջ, ինչպէս չորս նահանգները,  
որոնք այդպիսի բանաձեւ են որդեգ-  
րած: Որքան ալ փոքր ըլլան քայլերը,  
սակայն անոնք խորհրդանշական մեծ  
իմաստ ունին, եւ այդ պատճառով Եւ-  
րոպայի մեր խորհրդաժողովի առանցքը  
նաեւ Արցախի նիւթին էր, եւ ուրախ ենք  
ըսելու, թէ Արցախի նախագահը ընդա-  
ռաջած էր մեր հրաւէրին եւ անձամբ  
գլխաւորած էր Արցախին եկած պատ-  
ուիրակութիւնը, որ մասնակցեցաւ  
Պրիւքսէի մէջ կայացած մեր ժողովնե-  
րուն: Նշեմ, որ այդ համագումարը եր-  
կու բաժին ունի, առաջինը կը վերաբե-  
րի ներազգային մեր բոլոր խմբաւո-  
րումներուն, իսկ երկրորդը օտարներուն  
ուղղուած՝ Եւրոպական խորհրդարանին  
մէջ, եւ Արցախի նախագահը մասնակից  
դարձաւ երկութին ալ:

Մեր խորհրդաժողովներուն երբ-ըստ հիմնական կէտք հայապատկան հողերն են. բնականաբար ամէնէն առաջնահերթը ֆաւալիքն է՝ նկատի ունենալով, որ այսօրուան հրատապ հարցն է, այնտեղ կայ նաեւ արտագաղթի ահաւոր երեւոյթ, պարզապէս այն պատճառով, որ տնտեսական պայմանները այնքան վատթարացած են, որ երիտասարդութիւնը երբեմն կը ստիպուի լքել հողերը. խօսեցանք այս ուղղութեամբ մեր առնելիք քայլերուն մասին, ներկայացուեցան շատ հետաքրքրական առաջարկներ թէ՛ քաղաքական, եւ թէ տնտեսական կեանքի բարելաւման իմաստով։ Այս երրորդ գլխուն տակ կ'իյնայ նաեւ Արեւմտեան Հայաստանը, եւ այդ ուղղութեամբ նորութիւններ կան, որովհետեւ 21-րդ դարուս ունինք կարելիութիւններ, գորս անցեալին մեզի ընձեռոնուած չչը՛ ուղղակի աշխատանք տանելու Թուրքիոյ մէջ գործող այլազան ազգային փոքրամասնութիւններուն հետ, մանաւանդ քիւրտերու, տերսիմցիններու պարագային, ինչպէս նաեւ այլախոհ կարկառուն դէմքերու, մանաւանդ այնպիսիններու, որոնք մարդկային իրաւանց տեսանկիւնէն արդէն կ'ընդունին Հայոց Ցեղասպանութիւնը։ Մեր այս հաւաքներուն չորրորդ հիմնական կէտք կը հանդիսանայ երիտասարդութեան քաղաքականացման եւ զիրենք քաղաքական կեանքի մղերու հարցը։ Այսինքն կարելի է քաղաքականացնել, որպէսզի գործիչ դառնան, բայց մենք նաեւ կ'ուղենք, որ անկէ անդին անցնին ու դառնան քաղաքագէտ եւ իրապէս ներառութիւն

սպիտուքի մէջ մեր ապլած երկիրներու քաղաքական կեանքին մէջ, որպէսզի փորձեն ներսէն եւս մեր ընդհանրական պայքարը շարունակել:

Ասոնք են հիմնական կէտերը,  
որոնց շուրջ տեղի ունեցան զոյգ  
խորհրդաժողովները:

«Հ.».- Հայկական Ցեղասպա-  
նութեան 100-ամեակի սեմին, օրէ օր  
յաւելեալ ծաւալ եւ բափ կը ստանայ  
թուրք -ատրպէյնանական հակահայ  
Քարոզչական աշխատանքը, մանաւանդ  
որ յիշեալ երկու երկիրներու պարա-  
գային սկսած են իրենց սփիւռքները  
կազմակերպել թէ՝ Ներպական ցամա-  
քամասին վրայ, եւ թէ ամերիկեան։  
Ի՞նչ ձեւով, ի՞նչ մարտավարութեամբ  
կարելի է հակազդել այս հակահայ  
Քարոզչական արշավին։

Յ. Տ. Խ. - Եթէ Թուրքիան նախապէս անտարբերութիւն կը ցուցաբերէր մեր տարած աշխատանքներուն հանդէպ, Յեղասպանութեան հարցով մեր խլած կարդ մը յաջողութիւններէն ետք (վերջին 25 տարիներուն), ինչպէս նաեւ Հայաստանի պետականութեան համար տարուող աշխատանքը կ'անհանգստացնէ զինք, ուստի իրենք անցած են հակայարձակողականի: Ասոր վրայ կու գայ աւելնալու Ատրապէյանի ազդակը, եւ պէտք է ըսել, որ շատ լաւ ու համագրուած կերպով կ'աշխատին այդ զոյտ պետութիւնները՝ իրենց հակահայ պայքարին մէջ: Մեր բոլոր ժողովներուն ընթացքին յստակօրէն նշուեցաւ, որ երկու հիմնական մարտահրատէրներէն մէկն է ասիկա: Եթէ մէկ մարտահրատէրը միշտ նիւթականն է, որովհետեւ ինչպէս զիտէք այդ պետութիւնները պետական պիտոնէով կը պայքարին մեղի դէմ, հակայական յատկացումներ կ'ընեն իրենց դեսպանատուններուն ճամբով այլազան գաղութներուն մէջ գործող թռքական եւ ատրապէյանական կազմակերպութիւններուն: Եթէ առաջինը նիւթականն է, երկրորդ մեծագոյն մարտահրատէրը իրենց օրէ օր կազմակերպուող սփիւռքն է, որովհետեւ էջ մը քաղելով մեր իսկ մարտավարութենէն, մեր իսկ յաջողցուցած մարտավարութենէն, իրենք ալ սկսած են այնպէս մը ընել, որ այլազան երկիրներու մէջ ապրող թուրքերը, ազերիները խօսին այդ երկրի քաղաքացիի պահանջով: Մենք եթէ այդ մէկը ընելու համար երկար տարիներու կարիք ունեցանք եւ իբրև Յեղասպանութիւն ճայակած ժողովուրդ

բնագդաբար զգացինք հաւաքուելու,  
կազմակերպուելու, պայքար մղելու  
անհրաժեշտութիւնը, իրենց պարագա-  
յին կը փորձեն ատիկա կատարել նիւ-  
թականով՝ գնելով մտաւորականներ,  
որոնց վերջին օրինակը ձամթին Մա-  
քարթին էր, որ այցելած էր Աւստրալիա,  
եւ բարեխախտաբար, Աւստրալիոյ մէջ  
մեր Հայ Դատի յանձնախումբի ջան-  
քերով ձախողութեան մատնուեցան  
այդ ժիւտումի քաղաքականութեան  
մասնագէտի խօսքերը: Ուրեմն այս  
նիւթականով կը գնեն մտաւորական-  
ներ, նոյնիսկ կը կազմակերպեն անդոյ  
միութիւններ, զանազան անուններով,  
որոնք իրականութեան մէջ պարզապէս  
դիմակ են, որուն ետին կանգնած է  
տուեալ երկրին թուրք դեսպանը, որ  
պետական պիտածէով յառաջ կը տանի  
աշխատանքը: Իսկ նիւթականի երրորդ  
բաժինն ալ վարձկան լուպիիտներն են,  
որոնց վրայ յատկապէս արեւմտեան  
աշխարհին մէջ քանի մը միլիոն ծախ-  
սելով, կ'ուղղեն մեզի դէմ: Ուրեմն ի՞նչ  
կարելի է ընել. նախ պէտք է ըսել, որ  
բարեխախտաբար տակաւին մենք ու-  
նինք այն առաւելութիւնը, թէ արդա-  
րութիւնը մեզի հետ է, եւ անոր բարո-  
յական երեսը պէտք չէ թերագնահատել,  
որովհետեւ պայքար մղող որեւէ մէկ  
կողմ, երբ լաւապէս համոզուած է իր  
տեսակչաներուն, իսկ մեր պարագային,  
որ տեղի ունեցածը մարդկութեան դէմ  
ոճիր է ու անարդարութիւն, այդ  
իմաստով ունինք այսպէս կոչուած  
առաւելութիւնը: Պէտք է ըսել, որ վեր-  
ջին 20-25 տարիներուն ընթացքին մեր  
կտրած ճամբան մեզի յատուկ ուժակա-  
նութիւն կու տայ այդ իմաստով, բայց  
բաւարար չէ. երկրորդը, որ մեզի համար  
անհրաժեշտ էր, եւ բարեխախտաբար  
բաւական ճամբայ կտրած ենք այդ  
ուղղութեամբ, արհեստավարժ գրասեն-  
եակներու հարցն է, որուն քիչ առաջ  
ակնարկեցինք: Այսինքն հետզհետէ  
ստեղծեցինք աւելի մէծ թիւով համաշ-  
խարհային կերպուններ, Հայ Դատի  
շրջանային կեղրուններ, ուր ունինք  
աննման տղաք ու աղջիկներ, որոնք  
իրենց ամբողջ առօրեան նուիրած են  
Հայ դատին, շաբթուան ընթացքին 7  
օր, 24 ժամ նուիրուած են մեր դատին,  
այսպիսով շատ աւելի արհեստավարժ  
կերպով առաջ կը տանինք աշխատան-  
քը: Երրորդը, որ բարեխախտութիւն է,  
այն է, որ մէնք կարողացանք վերջին  
տարիներուն ստեղծել ազգային մէկ  
ընդհանուր համախմբում՝ Հայ Դատի



Գերաշնորհ S. Խաժակ Սրբ. Արք. Յակոբեան  
Բարեգան Առաջնորդ Գանատայի Հայոց Թեսի  
Եւ

Ազգային Վարչութիւնը իր Եկեղեցիներով՝

Հայց. Առաքելական Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի  
Մոնթեալ

Հայց. Առաքելական Ս. Աստուածածին Եկեղեցի  
Թորոնթօ

Հայց. Առաքելական Ս. Գեորգ Եկեղեցի  
Լաւալ

Հայց. Առաքելական Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի  
Վանգուվը

Հայց. Առաքելական Ս. Նշան Եկեղեցի  
Գէմպրիծ

Հայց. Առաքելական Ս. Պողոս Եկեղեցի  
Մէնք Գարրինգ

Կը շնորհաւորեն Գանատահայութեան  
**ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ**  
մաղթելով մեր սիրելի ժողովուրդին

բարօր, քաջառողջ, նորանոր յաջողութիւններով լի  
եւ երջանկալից տարի մը

Աստուծոյ օրինութեան ներքեւ թող ծաղկին  
ու բարգաւաճին մեր Հայրենիքը,  
Արցախն ու մեր գաղութները

Հիմնական նպատակակէտերուն կապակցութեամբ, ուր տարակարծութիւն առհասարակ չկայ, մանաւանդ երեք քաղաքական կուսակցութիւններու միջեւ, շատ մը պարագաներու նաեւ Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններուն հետ, բացի կարգ մը կէտերէ, որոնց գծով, ինչպէս յայտնի է ձեր ընթերցողներուն, մենք ունինք լուրջ տարակարծութիւններ, ինչպէս հայ թրքական յարաբերութիւններու մէկ երեսը եւ հայ-թրքական արձանագրութիւնները: Ուրեմն, այսպէս կոչուած ազգային ընդհանուր օրակարգի եւ առաջնահերթութիւններու շուրջ համախմբումը եւս մեզի կու տայ յաւելեալ ուժականութիւնն շարունակելու պայքարը: Պէտք է աւելի արհեստավարժ ուղղութեամբ աշխատիլ, եւ պէտք է տեսնել, ստեղծել նիւթական կարելիութիւններ. այս իմաստով ուրախ ենք, որ մեր ժողովուրդը մեր կողքին է, Գանատայի մէջ տեղի ունեցած վերջին հանդանակութիւնը ցոյց տուաւ անգամ մը եւս, որ երբ գործն ու նպատակները յստակ են, ժողովուրդին նեցուկը առկայ է:

«Հ.».- Ճգնաժամային պայմաններուն մէջ գտնուող սուրբիահայութեան օժանդակութիւն հասցնելու ծիրին մէջ եւս Հայ Դատի մարմինները աշխատանք կը տանին. ո՞ւր հասած են այդ աշխատանքները:

Յ. Տ. Խ.- Կայ բնականաբար օժանդակութեան երեսը, որ հանդանակութիւններն են՝ աշխարհով մէկ տարածուած մեր գաղութեամբ կարելի է ըսել, որ անգամ մը եւս կարողացանք ոտքի հանել ժողովուրդը ի նպաստ մեր այդքան սիրելի սուրբահայ գաղութիւն, բայց կարելի չէ նաեւ մոռնալ քաղաքական երեսը, որովհետեւ Սուրբոյ մէջ հայ համայնքի ապահովութեան, անվտանգութեան հարցերով մենք պէտք է, որ շարունակենք աշխատանքները եւ այն ճնշումները, զորս կը բանեցնենք թէ արաբական աշխարհին մէջ, եւ թէ արեւմտեան աշխարհին մէջ: Հիմնականին մէջ երեք ուղղութեամբ է այդ աշխատանքը. առաջին՝ արաբական գանազան երկիրներու մէջ մեր ունեցած կապերով համոզելն է պայքարող կողմերը, որ խնայեն փոքրամասնութիւններուն, մեր պարագային հայութեան. այս նպատակով մենք կապեր կը ստեղծենք մանաւանդ այն կողմերուն հետ,



Նոյեմբեր 16-17-ին Գանատայի Մոնթրէալ քաղաքին մէջ կազմաւ Ամերիկեան ցամաքամասի և Աւատրալիոյ ՀՅԴ Հատի յանձնախումբներու խորհրդաժողովը: Խորհրդաժողովին մասնակցեցան Գանատայի, Արեւմտեան Ամերիկայի, Արեւելեան Ամերիկայի և Աւատրալիոյ ՀՅԴ Դատի յանձնախումբներու ներկայացնուցիչները, ինչպէս նաեւ Հայ Դատի յանձնախումբի Պատշինութիւնի գրասենեալի պատուիրակութիւնը: Երկորեայ խորհրդաժողովի ընթացքին քննարկուեցան համաշխարհային ներկայ քաղաքական իրավիճակը և Հայ Դատի ներկայ հանգրուածի մարտահրաւելները:

որոնք դժբախտաբար մասնակից են Սուրբոյ տագնապին, ըլլայ Մէուտական Արաբիա, Քաթար եւ շրջանային այլ պետութիւններ: Իսկ երկրորդը, մանաւանդ արեւմտեան աշխարհին մէջ, որ ընդդիմադիլներու կողքին է կանգնած, անոնց մօտ ալ այդ աշխատանքը տանին է, որպէսզի կարողանան նախ զանազան լընդդիմութեան տարբեր շերտերը, որովհետեւ մեր համոզումով Սուրբոյ մէջ կուռող ընդդիմութեան մէկ մասը ունի սուրբիական դիմագիծ, որ հաւանաբար ամբողջական համոզումով կը տանի իր պայքարը՝ ի շահ Սուրբոյ ժողովուրդի եւ պետութեան, բայց կայ նաեւ ընդդիմադիր այնպիսի ճակատ, որ պարզապէս կուրցած մոլեուանդներ են, հոն դրկուած են ժիշատի սկզբունքով. այդ ուղղութեամբ կը փորձենք զգուշացնել, որ միատեսակ կերպով չգիտուի ընդդիմադիր ճակատը: Նաեւ այդ պետութիւններէն կը պահանջենք, որ իբրեւ ընդդիմութիւնը ֆինանսաւորող եւ զինող կողմ, յատուկ միջոցներու ձեռնարկեն, որպէսզի անմասն պահեն այս ինդիրին մէջ կողմ չնկատուող այդ փոքրամասնութիւնները, որոնք իրականութեան մէջ միայն

Սուրբոյ պետութեան շահերէն մեկնած է, որ կը փորձեն պահել իրենց դրական չէզոքութիւնը: Այդ ուղղութեամբ նաեւ յատուկ գեր կը խաղան քիւրտերը, որոնց հետ մենք կապեր ունին, որովհետեւ ինչպէս գիտէք, թէ Սուրբոյ, եւ թէ իրաքի մէջ քիւրտերը այսօր այնպիսի կացութեան մէջ են, որ ամբողջովին ինքնավարութիւն յայտարարած, գրեթէ տէրն են կացութեան այդ հողերուն վրայ: Այս իմաստով նաեւ, անկախ սուրբիահայութեան հարցէն, քիւրտերու պազակը նոր էջ մը կը բանայ մեզի համար, որովհետեւ երկու պարագային է, մանաւանդ ինչպէս ըսի՝ իրաքի եւ Սուրբոյ, իբրենց դարաւոր երազի առաջին հանդրուանին հասած ըլլալու տպաւորութիւնը կը ձգեն իրենք, եւ այդ ուղղութեամբ կը փորձեն նաեւ կազմակերպուի ապագայի քիւրտիստանի ստեղծման համար:

«Հ.».- Հետաքրքրական է, որ Հոկտեմբերին Ուաշինոնը մէջ Հայ Դատի յանձնախումբը երկար տասնմետակներէ ետք առաջին անգամ ըլլալով, Թուրքիոյ խորհրդարանին մէջ գործող քրտամէտ կուսակցութեան մը

*Միա լոր կը հովանաւորէ Ք. Ասրաքի Շրեցեան*



# LE CRYSTAL

SALLES DE RÉCEPTION

W W W . L E C R Y S T A L . C O M

5285 HENRI-BOURASSA O, VILLE SAINT-LAURENT, QC, H4R 1B7 - TÉL.: (514) 337-8160 - INFO@LECRYSTAL.COM

հետ ունեցաւ հանդիպում մը, որ պատմականօրէն անկիւնադարձային կը նկատուի:

**Յ. Խ.- Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն է, որ ունեցաւ այդ հանդիպումը, որուն մասնակցեցան բնականաբար մեր Հայ Դատի տղաքը եւ ուրիշներ. ասիկա առաջին կապը չէ քիւրտերուն հետ, միշտ եղած են կապեր, ճիշդ է ձեր նկատողութիւնը, որ պաշտօնական իմաստով եւ քրտամէտ Խաղաղութիւն եւ Ժողովրդավարութիւն կուսակցութեան ուղղակի ղեկավարին հետ կայացած հանդիպումը աննախընթաց էր: Ան կը գտնուէր քիւրտերու յատուկ համաժողովին եւ այդ առիթը յարմար նկատելով առանձին տեսակցութիւն ուղեցինք ունենալ իրեն հետ, եւ ի մեծ ուրախութիւն մեզի, ան ընդառաջեց եւ բնականաբար մեր խօսակցութեան առանցքը հայ քրտական յարաբերութիւնն էր, իմամացած հայութեան հարցն էր, հայկական իրաւունքներուն հարցն էր, քրտական պահանջի եւ հայկական պահանջատիրութեան հետ: Ասոր շարունակութիւնը հանդիպացաւ Պոլսոյ մէջ Ընկերվար միջազգայնականի ժողովի ծիրին մէջ մեր Քիւրոյի ընկերոջ եւ Հայ Դատի ու քաղաքական հարցերու պատասխանատուի հանդիպումը նոյն կուսակցութեան եւ այլ քրտամէտ խմբաւորումներու ներկայացուցիչներու հետ: Յստակ է, որ մենք երկու ճիմնական հարցեր ունինք, երբ քիւրտերու հետ կապ կը հաստատենք. մէկը Յեղասպանութեան հարցն է, որ գամովկեան սուրի պէս կախուած է քիւրտերուն գլխուն, որովհետեւ իրենց պատասխանատութիւնը պէտք է ընդունին եւ ժողովուրդին ներողամտութիւնը հայցեն. այս առնչութեամբ բաւական յառաջ գացած ենք, իրենք կը նդունին ատիկա, եւ ինչպէս գիտէք, Տիգրանակերտի շրջանէն քաղաքավետներ եկած եւ յատուկ ծաղկեսակներ կետեղած են՝ յարգելով յիշատակը մեր աշխատանքներ:**

Հարց ստեղծած էր: Երկրորդն ալ հողային պահանջատիրութեան հարցն է, իրենց պատկերացուցած Քիւրտիստանի այլազան տարբերակներ կան, իսկ մեր պահանջատիրութիւնը աւելի յստակ բանաձեւուած է, որովհետեւ գէթ Դաշնակցութեան համար մենք ունինք Սեւրի դաշնագիրի հողերը եւ կարդ մը այլ յարակից շրջաններ, ինչպէս Զաւալիքն ու Ղարաբաղը:

Նոյնը չէ պարագան քիւրտերուն, անոնց մօտեցումները բազմազան են, անոնք աւելի շերտաւրուուած են, իւրաքանչիւր երկրի մէջ ապրող քրտական հասարակութիւն տարբեր ձեւով կը մօտենայ ինդիրին, շատերու համար հանգրուանային լուծումները առաջնահերթ են եւ ոչ վերջնական պատկերը, միշտ չէ, որ բոլորը կը համագործակցին, անոր համար է, որ հարց գոյութիւն ունի, թէ ինչպէս կը պատկերացնեն իրենց պահանջը, որ ժամանակի ընթացքին կարծեմ պիտի քիւրեղանայ: Սակայն մինչ այդ մենք ընկելիք ունինք, իրարու հետ հասկացութեան հարց գոյութիւն ունի, որովհետեւ ինչպէս գիտէք, երկու քարտէսները երբեմն մեծապէս կը համընկնին, մեծ բաժինները կը համընկնին, այդ իմաստով ընելիքներ կան, պատկերացումի իմաստով յստակացուելիք կայ: Շատ մը քիւրտերու համար ապագայ Քիւրտիստանը այն բազմամշակութային, բազմացեղային խմբաւորումն է, որ իր երդիքին տակ պիտի հաւաքէ բոլորը: Մեր պատկերացումը այդպէս չէ անշուշտ, այդ ուղղութեամբ է, որ մենք անհրաժեշտ է, որ շարունակենք մեր աշխատանքները:

**Հ. Խ.- Հայկական Յեղասպանութեան հարցն է, որ գամովկեան սուրի պէս կախուած է քիւրտերուն գլխուն, որովհետեւ իրենց պատասխանատութիւնը պէտք է ընդունին եւ ժողովուրդին ներողամտութիւնը հայցեն. այս առնչութեամբ բաւական յառաջ գացած ենք, իրենք կը նդունին ատիկա, եւ ինչպէս գիտէք, Տիգրանակերտի շրջանէն քաղաքավետներ եկած եւ յատուկ ծաղկեսակներ կետեղած են՝ յարգելով յիշատակը մեր աշխատանքներ:**

**Յ. Խ.- Ճիշդ է, որ 100-ամեակը կարեւոր թուական է, բայց մեզի համար պարզ թուական մըն է, տարօրինակ հոգեբանութիւն է տարածուած, նոյնիսկ մեր ժողովուրդին մէջ, թէ ատիկա վերջնակէտ մըն է. մեզի համար պարզապէս նշումն է կարեւոր ամեակի մը, կլոր ամեակի մէջ, բայց մեր աշխատանքները ո՞չ պիտի սկսին, ոչ ալ պիտի աւարտին 100-ամեակին առիթով, տակաւին երկար պայքար ունինք: Բնականաբար Հայոց Յեղասպանութեան իմաստով**

ամէնէն կարեւոր բաժինը, պատգամը, զոր պէտք քաղենք 100-ամեակին առիթով այն է, որ մենք նայինք ճանաչումէն անդին, իբրեւ կարգախոս ունենալով «Ճանաչումէն հասուցումը», որպէս նոր բացուղութիւն է ատիկա աւելի որոշակի դաշնակեր, որ համար մէնք ունինք պահանջատիրութիւնն է ատիկա աւելի որինական հիմքքերը՝ տեսումնասուրի օրինական հիմքքերը՝ աշխարհական կառուցներու ունի, թէ նաեւ կազմակերպական իմաստով ինչեր կան: Վերջինին առաջին օրինակը եկեղեցիներու հարցն է՝ իբրեւ աշխարհատարածուկ հաստանա ինչ իրաւունքներ ունի, թէ նաեւ կազմակերպական իմաստով ինչեր կան: Վերջինին առաջին օրինակը եկեղեցիներու հարցն է՝ իբրեւ աշխարհատարածուկ վայելող կառոյց, արդարեւ, Հայաստանեայց առաքելական եկեղեցին պետական իրաւունքներէ անդին ունի իրինչերու սեփականութեան ինդիր, վանքերու եւ եկեղեցւոյ պատկանող հսկայական կառոյցներու պահանջ: Բոլոր նուիրապետական աթոռները այդ հարցը ունինք, ունինք իրաւունքներ, որոնք միջազգայնականորէն, ըստ մեզի, օրէնքով ամբագրուած են: Այս երեսները՝ պետական, հիմնական հայկական կառոյցներու, ժողովրդային արդարութեան, հարցեր են, որոնք ներկայիս կը քննուին, յատուկ թղթաձրարներ կը պատրաստուած էն, որպէս պատրաստուած ձեւով մօտենանք այս հարցին: Բնականաբար, անկախացած Հայաստանը մեծագոյն կարելիութիւնները կ'ընծայէ մեզի այս իմաստով, եւ պիտի գայ օրը այդ թղթաձրարը ներկայացնելու մանրակրկիտ ձեւով: Ըսեմ, որ թէ ասկէ մէկուկէս տարի առաջ Լիքանանի մէջ կազմակերպուած խորհրդաժողովին, եւ թէ վերջերս Պրիւքսէլ տեղի ունեցած խորհրդաժողովին քննուեցաւ այս օրինական երեսը, եւ այդ ուղղութեամբ հետաքրքրական ելոյթներ ունեցան օտար մասնագէտներ, որոնք նաեւ մարդկային օրէնքի սահմաններուն մէջ, ինչպէս նաեւ միջպետական օրէնքներու սահմաններուն մէջ կը տեսնեն կարելիութիւններ, զորս մենք պէտք է մշակենք, ընդարձակենք եւ գործի վերածենք:

Հարցազրոյց՝ Վարեց Վահագան Գարեգին

Այս էօր կը հովանաորին ԱՌ և ԱՌ Արքին և Աշակերտական Պայտուածաւ

# GET A 50\$ CREDIT ON SMARTPHONES

(WITH A 2 YEAR FLEXITAB™ AGREEMENT)



LIVE LIKE NEVER BEFORE.



**Planète Mobile Laval, Hagop Soussani & Hovsep Guzelian**

1273, Curé-Labelle Blvd., Laval | Tel.: 450.680.1234 | Toll free: 1 866.680.2234  
[planetem.com](http://planetem.com) | [facebook.com/planetemobile](http://facebook.com/planetemobile)

\*Offer ends January 31st, 2014 and subject to change without notice. Device Savings Recovery Fee and/or Service Deactivation Fee (as applicable) apply in accordance with your service agreement. FLEXITAB balance corresponds to the sum of Device Savings Recovery Fee and the Additional Device Savings Recovery Fee. A Connection Fee of \$75 per line also applies to 1st line, applicable to new line/device only to activate your service on the Rogers network. T&Cs. Available at participating Planète Mobile locations. Offer is a \$50 bill credit with new activation and purchase of phone and will be applied against customer's second monthly invoice. Offer ends 01/31/2014. On new activation only on a 2 year Tel, Tel & Internet plan with monthly fees of \$60 or more. \*\*Rogers and related names & logos are trademarks used under licence from Rogers Communications Inc. or an affiliate. ©2013.

# Կարաշինար - Նոր Կարաշինար

Արցախեան այս գիւղի պատմութիւնը մի փոքրիկ ածականի մէջ է, որ այնքան տիրութիւն, կորուստ ու վիշտ է պարունակում:

Նորը՝ առաջին հերթին սահմանն է, որ բաժանում է Կարաշինարը նոր Կարաշինարից:

Նորը՝ հազարաւոր խեղուած ճակատագրեր են, 20-րդ դարեկերդին պանդստութեան ճանապարհը բոնած հազարաւոր հայերի:

Նորը՝ ամբողջ կեանքի վաստակը թուրքի բաժին դարձնելն է:

Նորը՝ նոր բնակավայրում գաղթականի նոր կեանքն է:

Նորը՝ իրենց գիւղի անունով նոր գիւղ, նոր օճախ շինելն է:

Իսկ նոր օճախ, նոր գիւղ կառուցել ստիպուած եղաւ կարաշինարցին, երբ 1992-ին դարաւոր թշնամին նորից բնաջնջել ու հայի ունկնուածքին տիրանալ ուղեց:

Լեռների փէշին, թաւ անտառների գրկում հանգիստ ու խաղաղ՝ արդէն աւելի քան 10 տարի է, իր նոր կեանքն է կառուցում նոր Կարաշինարը, նորից իր հողում, հոգու խորքում կարօտը, հայեացքը սահմանին, որը խարդախ ու ստորթշնամուց բաժանում է ընդամէնը մի քանի հարիւր մեթր:

Գիւղացիների հետ զրոյցն ամէնից առաջ սկսեցի այդ հարցից. արդեօք չի՞ վախեցնում թշնամու հարեւանութիւնը: Զէ որ ինչպէս ասում են՝ գայլի աչքերը տեսածը անտառից միշտ վախենում է:

«Մենք այդ մասին չենք էլ մտածում, մեր խաղաղ կեանքով ապրում ենք, կոիւ չենք ուզում, պատերազմ չենք ուզում, բայց դա չի նշանակում, որ կոռուց կը վախչենք: Եթէ յանկարծ թուրքը համարձակուի խանգարել մեր հանգիստ կեանքը, մենք նրան յախտենական հանգիստ կը պարգևենք», զրոյցը կատակի վերածելով, ասում են կարաշինարցիները:

Հաւանաբար, միայն հայը կարող է իրեն տանջող ցաւի մասին կատակ անել, կակիծի հազար ծալքերի տակ իր վիշտը թաքցրած պահել ու նորից վտանգին համարձակ աչքերով նայել:

Այս գիւղում առաջին բնակիչները իրենց օճախի պատերն են տաքացրել 2001 թուականին: Առաջին եկողները երեք երիտասարդներ էին՝ իրենց ընտանիքներով: Նոյն տարին էլ նրանց միացան եւս մի քանի ընտանիք, բոլորն էլ կարաշինարից: Հաւաքուել են, ուս-ուսի տուել, իրար քաջալերել, 21-րդ դարում՝ խաւարի ու մթութեան մէջ, աշխարհից ու կեանքից կտրուած հողից հաց քամել, միասին՝ հաշտ ու համերաշխ վայելել: Երբեմն թուացել է, թէ վերջ չկայ գժուարութիւններին, քաղաքակրթութեան գլխապտոյտ ժամանակներում՝ քարէ դարի կենցաղին, սակայն անբացատրելի կապն այս հողի հետ աւելի զօրեղ է գտնուել, քան առօրեայ, կենցաղային գժուարութիւնները ու սերտածել են կարաշինարցիները իրենց նոր բնակատեղին: Ունեցածը կիսել են, չունեցածը միասին ստեղծել, եւ այսպէս, խնդիրների մեծ մասը թողել ոչ հեռու անցեալում:

Այսօր արդէն 24 տնտեսութիւն՝ 108 բնակիչ ունի գիւղը: Լեռնանիստ գիրքը իր պայմաններն է թելադրում:



Գիւղացիներին: Հացահատիկների մշակման հարցը նոր կարաշինարում քննարկման թեմա չէ: Գիւղատնտեսութեան այս ճիւղի համար գիւղը չունի յարմար հողատարածքներ: Փոխարէնը ունի հարուստ անտառներ, իսկ լեռների խոստածակ փէշերը հիանալի պայմաններ են անասնապահութիւնը զարգացնելու համար:

Արդիւնքները ակնառու են՝ 140 խոշոր եղջերաւոր անաստուն:

«Հիմնական եկամտի աղբիւրը անասնապահութիւնն է: Կարելի է հասնել աւելի լաւ արդիւնքների, եթէ չինէին իրացման հետ կապուած դժուարութիւնները: Մեծածախ մթերումը հիմնականում իրականացնում ենք տեղում: Երբեմն հեշտութեամբ հնարաւոր է լինում վաճառել ամբողջ մսի պաշարը, երբեմն էլ ամիսներով ոչ մի գնորդ չի մտնում գիւղ, պատմում է համայնքի ղեկավարը:

Եկամտի միւս հիմնական աղբիւրը մեղրն է: Անարատ, անուշահոսու, արեւի գոյնով:

«Մեղրի իրացումն էլ գժուար է: Կամ պէտք է հասցնենք Ստեփանակերտ, կամ էլ երեւան: Իսկ դա ծախսեր է պահանջում, որը գիւղացին չունի: Գոնէ այս հարցում լաւը այն է, որ մեղրը չի մատուցող ապրանք է, չվաճառուած մեղրը համարում ենք, որ դրամատան մէջ փող ենք դրել, էնպէս որ մենք բաւականին հարուստ մարդիկ ենք», կատակում են կարաշինարցիները:

Ամէն անգամ, այսպիսի իրավիճակի հանդիպելով արցախեան գիւղերում, ակամայից մտածում եմ՝ անարատ մթերքին կարօտ են երպաներում ու ամերիկաներում, իսկ այստեղ այդ մթերքը փճանում է: Միթէ հնարաւոր չէ համակարգել այս գործը, որը նպաստաւոր կը լինի երկու կողմերի համար՝ սպառողի եւ իրացնողի: Ինչքան հարցեր կը լուծուեն այս նախաձեռնութեան դէպքում: Հայրենիքի ամրացում ու հզօրացում, ընկերային լարուածութեան թուլացում, վերաբնակեցում, եւայլն... ինչպէս նաեւ, ներդրողի համար եկամուտն, անապակ մթերքի համբաւ աշխարհում: Ինչ որ է,

*Միա լը կը հովանաւորեն Մ. և Ա. Յակոբ և Անահիմ Մէր Քաջապարհեան*

**Pharmacie Nelly, Tania Kanou  
et Seta Marachian**

AFFILIÉE À



**JEAN COUTU**  
**SETA MARACHIAN**

Pharmacienne-Propriétaire

Հայերէն կը խոսինք



**5855, boul. Gouin ouest**

Cartierville (Québec) H4J 1E5  
Tél.: (514) 334-8641 • Fax: (514) 334-6909

Յայ մասնագետներ տրամադրուած՝ հոգալու ձեր բոլոր կարիքները  
Կը պատրաստենք ձեր բոլոր դեղագիրները, նոյնիսկ ուրիշ դեղարանների  
Տարեցներու համար յատուկ 10% զեղչ (բացառեալ դեղերը)

**Vaccination contre la grippe saisonnière  
Service professionnel et personnalisé**

- Infirmière sur place tous les mercredis
- Conseils sur le diabète: lecteur de glycémie, alimentation, exercice
- Analyses sanguines: bilan lipidique complet (cholestérol), glycémie (taux de sucre)
- Injections et vaccinations
- Vérification de la tension artérielle, moniteur de tension artérielle (24h)
- Conseils sur les produits orthopédiques (cannes, marchettes)

**Livraison et cueillette de prescription gratuites  
de Montréal et Laval**

**Ouvert 7 jours/7 soirs de 9h à 22h**

**NELLY, TANIA KANOU**

Pharmacien-Propriétaires

**237, Côte Vertu, MTL**  
Tél.: (514) 331-2134

**740, Côte Vertu, MTL**  
Tél.: (514) 744-2555

**475, Côte Vertu, MTL**  
Tél.: (514) 744-0203



**սա այլ հարց է, վերադառնանք նոր կարաչինարին:**

Արցախի ծայրամասում գտնուող գիւղերում արդէն ընդունուած օրէնք է իրենց սեղանների բարիքները ստեղծել իրենց ձեռքերով։ Այստեղի հացը, որ կարծեն թաթախուած է անապակ եւ սառնաշունչ մաքուր օդում ու խմորուած արեւի քաղցր տաքութեամբ, ուրիշ համ ունի։

Պանիր, կարագ, մեղր, բանջարեղին, միս, թթուաշ, մրգային լաւաշներ, չիր ու չամիչ, ինձոր, տանձ.. սա սեղանի բարիքների ոչ լրիւ ցանկն է, որ Աստուծոյ տուած կամ իր ձեռքերով ստեղծածն է կարաչինարցու համար։

«Մենք գժկոհելու պատճառ չունենք», ասում է նոր կարաչինարի գիւղապետ Հայկ Զաքարեանը։ Ի միջի այլոց, առաջին երեք բնակիչներից մէկը հէնց նա է։

«Փառք Աստծոյ, կարեւոր հարցերը լուծուած են՝ արդէն հոսանք ունենք, ջուր ունենք, ճանապարհները բարեկարգուել են։ Համայնքը Արցախի նախագահ Բ. Սահակիանից նուէր է ստացել՝ ինքնաշարժ, որը ծառայում է թէ բուժօգնութեան համար, թէ համայնքի մնացած բոլոր կարգի խնդիրների համար», պատմում է Հայկը։

«Չնայած շատ հեռու ենք մայրաքաղաքից, բայց մեզ անուշադրութեան չեն մատոնում։ Մեզ յաճախ են այցելում թէ նախագահը, թէ վարչապետը։ Լուսմ են մեր խնդիրների մասին, իրենք էլ տեսնում են, որ շատ հարցեր ինքներս ենք լուծում, ձեռքներս ծալած չենք սպասում, որ ամէն ինչ պետութիւնը անի, դրա համար էլ եթէ մի հարցով գիւղում ենք, անմիջապէս օգնում են», - ասում է գիւղապետը։

Որ գիւղապետը անկեղծ է իր հօսոքերում, կարելի էր համոզուել շինարարութեան աշխոյժ աղմուկով, որ տարածուել էր գիւղում։ Ամէնուր աների վերանորոգում, բարեկարգում եւ ընդլայնում։ Կառավարութիւնը աշակցում է գիւղացիներին շինանիւթերով, իսկ գիւղացին էլ իր ուժերով կառուցում, վերանորոգում է իր տունը։

Մարդիկ վատահ են, որ այս անգամ թշնամուն չի յաջողուել տիրանալ իրենց ջոներին, ունեցուածքին, բոնութեամբ տեղահան անել, սպաննել, սարսափի մէջ պահել։

«Ես այստեղ եմ եկել տանտիրոջ նման», - ասում է Արտաշատից նոր կարաչինար տեղափոխուած նազարեան Գոհհարը։ Այրի կինը ոտքի է կանգնեցրել չորս երեխաներին։ Երեք աղջիկներին ընտանիքի տէր է դարձրել, ինքն էլ եօթ թոռնիկների տատիկ։

«Մնում է տղաս ամուսնանայ, որ լիակատար երջանիկ զգամ ինձ»,- ասում է Գոհարը եւ աւելացնում հպարտութեամբ, որ նորաստեղծ ու սահմանապահ գիւղում իր արմատներն արդէն ամուր են, ճիւղները դալար։

«Ոչ մի քաղաքական որոշում, ոչ մի յարձակում, ոչ մի սպառնալիք ինձ այստեղից չի վարիթ։ Սա մեր հայկական հողերն են, դրա համար էլ եկել ենք, որ չէնացնենք։ Իսկ եթէ պէտք լինի, կը կրակեմ իմ օճախի անդորրը խանգարողին», ասում է Գոհարը եւ շտապում վստահեցնել, որ չի կատակում . «Ես կրակել էլ գիտեմ, այո»։

Օրհնելով հայ գինուորին, ով ազատագրեց հայրենիքը ու այսօր էլ սահմանին կանգնած խաղաղութիւն է ապահովում, Նոր Կարաչինարցիները անհեղեղի վկաներին են մատնացոյց անում, որ իրենք այստեղ տանտէրել են։ Իսկ վկաները տասնեակներով խաչքարերն են, որ յայտնաբերում են ամէնուր։ «Մենք հաւաքել ենք խաչքարերը։ Համարեա բոլորիս բակում խաչքար կայ։ Մի քանիսն էլ տեղափոխել ենք մի տեղ, ու սրբատեղի ենք ստեղծել մեզ համար՝ յիշատակի օրերին անպայման այցելում ենք այստեղ, ծաղիկներ դնում, մոմեր վառում»,- պատմում է գիւղապետը :

Այսպէս, առանց դժգոհելու, հիմնայատակ գիւղը նորից շէնացրեց կարաչինարցին։ Ետեւում տիսուր ու մութ յիշողութիւններով պարուրուած օրերն են, առջեւում յուսադրող հեռանկարները, ոգեւորող ապագան, որին համելու համար դեռ անելիքներ ունեն, իսկ գրանց մէջ առաջնայինը՝ դպրոցի շէնքն է։

24 աշակերտ ունեցող կրթօճակիր մի փոքրիկ շինութիւնն է, որտեղ վերանորոգում կատարուել է 2002 թուականին, նախկին կարաչինարցու ջանքերով։

Այսօր առանց այդ էլ փոքրիկ այդ շինութեան մի մասը անցործութեան է մատուած՝ վթարային լինելու պատճառով։ Միւս մասում, ընդամէնը երեք դասասենեակում, դպրոցի ուսուցիչներին յաջողուում է իրականացնել ուսումնական ծրագիրն ամբողջութեամբ։

Դպրոցում գործում են նաեւ արտադասարանային խմբակներ՝ հուլունքագործութիւններ, պար, ասմոնք։

Ֆիզիքական դաստիարակութեան մասին խօսելու աւելորդ է։ Կրթօճակիր չունի մարզապահ եւ մարմնակրթանքը զարգացնելու յարմարութիւններ։ Միայն արեւոտ եղանակներին կազմակերպում են բացօթեայ խաղեր։

Այսպիսի պայամններում սակայն աշակերտների յառաջադիմութիւնից բողոքելու առիթ չունեն ուսուցիչները։ Իրենց սանիկները մասնակցում են շրջանային ու հանրապետական մրցոյթներին ու միշտ էլ իրափուսիչ արդիւնքներով տուն վերագառնում։ Դպրոցի ստեղծագործական խումբն էլ յաճախակի այցելում է հարեւանութեամբ գտնուող ՊԲ գորամաս՝ համերգներով։

«Գիւղը աճում է։ Այստեղ բնակութիւն հաստատելու ցանկութիւն շատերն են յայտնում, բայց չենք կարողանում ընդունել, ազատ տուն չունենալու պատճառով։ Իսկ բնական աճը պայմանաւորուած է երիտասարդ ընտանիքներով։ Ծնելիութեան ցուցանիւնները ոգեւորիչ են, սակայն, միւս կողմից, դպրոցի խնդիրը բարդ իրավիճակներ է ստեղծում։ Աշակերտների քանակը շատանում է, - ասում է գիւղապետը։

Ի դէպ, կառավարութիւնը արդէն խոստացել է նոր կարաչինար ու Խարխափուտ համայնքներին, որ կը մտածեն խնդրի լուծման ուղղութեամբ։

ԲԵԼԱ ԼԱԼԱՅԵԱՆ

*Միա լեռ կը հովանաւորեմ ԱՌ և ԱՌ Միջին և Անդ Անժամիւան*



Alarme  
Trans-Canada

# SATISFACTION GARANTIE



- réseaux téléphonique et informatique
- systèmes de surveillance par caméras
- feu - vol - gicleurs
- accès par carte
- membre CANASA
- nous opérons notre propre central homologué ULC grade "AAA"



RBQ 1519-8252-12  
[mikaelian@alarmeatc.com](mailto:mikaelian@alarmeatc.com)

(514) 274-9446  
(888) 274-9446

Հայկական Հաստատութիւն



# Restaurant Roberto.com

## *That's Amore!*

dal 1980



Mets classique  
Classic Food



2221 rue Bélanger est, Montréal QC, H2G 1C5 • 514 374-9844

## «Ինձմէ ծնած երեխաները հայ են, ինչո՞ւ իմ ստեղծած Քրիստոսը հայկական պիտի չըլլայ». Արտուշ Պապոյեան

Այս տարուան Հոկտեմբեր 14-ին, Սուրբոյ քրիստոնէ-արքակ Սէյխոնայա քաղաքին մէջ Զեռուպիմ լերան գագաթին, ծովու մակարդակէն 2100 մետր բարձրութեամբ, Պոլիսէն երուսաղէմ տանող ուխտագնացութեան ճանապարհին, տեղադրուեցաւ Յիսուս Քրիստոսի «Ես եկած եմ աշխարհը փրկելու» հսկայ քանդակը, որուն բարձրութիւնը, պատուանդանին հետ միասին, 39 մետր է, այսինքն՝ ան մէկ մետրով կը գերազանցէ Ռիո տէ ժանէյրոյի Քրիստոսի յայտնի արձանը: Ան որպէս պղնձաձոյլ արձան՝ աշխարհի ամենէն մեծն է:

«Ես եկած եմ աշխարհը փրկելու» արձանը կը տեսնուի՝ Յորդանանէն, Լիբանանէն, Պաղեստինէն, Խորայէլէն: Տեղադրման աշխատանքները տեւած են երեք օր, որուն համար Սուրբոյ մէջ հակամարտող ուժերը ուղղմական գործողութիւնները գաղրեցուցած են:

Քանդակագործին համաձայն, Քրիստոսը ընդունուած է նաեւ մահմետականներուն կողմէ (Խաս), պարզապէս անոնք խաչն է որ չեն ընդունիր: Եթէ քանդակին վրայ խաչ պատկերուէր, մահմետականներ չէին մօտենար այդ արձանին, իսկ պատուիրատուններուն նպատակը համամարդկային քանդակի մը տեղադրումն էր:

Ցատկանշականը այն է, որ արձանը ձուլուած է Հայաստանի մէջ, անոր մէջ օգտագործուած են հայկական զարդարանախշեր: Հեղինակը գիւմրեցի քանդակագործ Արտուշ Պապոյեանն է, որուն աշխատանքները ունին ազգային նկարագիր: «Հորիզոն»ը յայտնի քանդակագործին հետ զրուցեց Հետեւեալ հարցերուն շուրջ:

**Հարց - Կը խնդրեմ պատմէք ձեր մասին՝ արմատներ, մասնագիտութիւն, ստեղծագործական կեանք, յաջողութիւններ:**

Պատ- Ծնուել եմ Լենինականու, այժմ Գիւմրի 1957 թուականին, արհեստագործ ընտանիքում:

Հայրս՝ Կարապետ Պապոյեանը, մասնագիտութեամբ խառաս էր: Մայրս՝ Օֆելիա Լաճիբեանը, մասնագիտութեամբ ուսուցչուհի: Երկուքն էլ ծնուել են Լենինականում: Հայրական կողմով բնիկ գիւմրեցիներ ենք, մայրական կողմս Գիւմրի է եկել Կարսից:

Կրթութիւնս՝ միջնակարգ դպրոց, նկարչական դպրոց, Գեղարվուեստա-տեխնիկական երկամեայ ուսումնարան՝ 1982 թուականին աւարտել եմ Երեւանի Գեղարվուեստա-թատերական ինստիտուտի քանդակագործութեան բաժինը գերազանցութեան տիպումով, տիպումային աշխատանքս էր «Զօրավար Անդրանիկ», որն ինստիտուտի կողմից ներկայացուեց Մոսկուա, արժանացաւ պարգեւի եւ ես ԽՍՀՄ մշակոյթի նախարարութեան կողմից պարգեւատրուեցի «Ուսման եւ ստեղծագործական յաջողութիւնների համար արծաթ մետաղով»:

Կրթութիւնս ստանալուց յետոյ, մինչեւ 1984 թուականը, աշխատել եմ Հայաստանի Հիւսիսային շրջանի Սեպասար եւ Ղազանչի գիւղերի դպրոցներում, որպէս կերպարուեստի ուսուցիչ:

1985-1988թ. ԽՍՀՄ նկարիչների միութեան եւ ԽՍՀՄ Գեղարվուեստի ակադեմիայի կրթաթոշակառու էի: Ստանում



էի ամենամսեայ կրթաթոշակ, հնարաւորութիւն ունենալով ազատ ստեղծագործելու եւ տարին մէկ անգամ՝ երկամսեայ ժամկէտով մեկնում Մոսկուա մասնակցելու Խորհրդային միութեան լաւագոյն երիտասարդ նկարիչների ստեղծագործական սիմպոզիումներին:

1985 թուականին արդէն ԽՍՀՄ նկարիչների միութեան անդամ էի:

Ունեմ աշխատանքներ, որոնք գտնւում են տարբեր թանգարաններում եւ ֆոնտերում. «պար» պրոնզաձոյլ աշխատանքը՝ Մոսկուայի Տրետյակովեան պատկերասրահում,

«Ալաւնիներ» պրոնզաձոյլ արձանը՝ Տաղստանի ազգային պատկերասրահում:

1988 թուականին ստացել եմ Հայաստանի «Կոմերիտ միութեան» մրցանակը՝ «Ժամանակը եւ մարդիկ» քանդակաշարքի համար:

1988 թուականէն սկսեալ Ղարաբաղեան շարժման մասնակից եմ եղել, մի խումբ աշխոյժ մասնակիցների հետ ստեղծել ենք Լենինականի «Ղարաբաղ կոմիտէն» եւ սկզբնական շրջանում համակարգել նրա աշխատանքները:

1988 թուականի դեկտեմբերեան ահեղ երկրաշարժը եւ

*Այս էջը կը հովանաւորեն Յակոբ, Ասլիք, Կապիւ և Պաֆֆի Հախոյեան*



Ղարաբաղեան շարժումը իմ մէջ արթնացրեց քաղաքականութեամբ զբաղուող մարդուն:

1990 թուականին իմ ընկերների հետ ստեղծեցինք «Առաքելութիւն» կուսակցութիւնը եւ մինչեւ 2003 թուականի կուսակցութեան լուծարման ժամանակը եղել եմ կուսակցութեան նախագահը: 1993 թուականից մինչեւ 2003 թուականը եղել եմ Հայաստանի Նկարիչների միութեան Գիւմրու մասնաճիւղի նախագահը:

1990 թուականին Ղարիբանեան գիւղում բացուեց իմ «Քրիստոսի յայտնութիւնը» տուֆակերտ արձանը՝ նուիրուած երկրաշարժից զոհուած երեխաների յիշաստակին:

1993 թուականին Գիւմրու Գարեգին Նժդեհի անուան Հրապարակում բացուեց «Նժդեհ»ի պրոնզաձոյլ արձանը:

2000 թուականին, «Խոուլ» Հիւրանոցային համալիրի տարածքում տեղադրուեց՝ «Սասունցի» եւ «Հովհարով աղջկը» տուֆակերտ արձանները:

2002 թուականին Գիւմրու Անկախութեան հրապարակում տեղադրուեց «Հայուշու» պրոնզաձոյլ արձանը, որն իր մէջ մարմնաւորում է Աստուածամօր կերպարը:

2000-2004 թուականին Գիւմրում տեղադրուեցին Արմենակ եւ Եղիսաբէթ Օյունճեանների կիսանդրիները, Աւետիք Իսահակեանի կիսանդրին եւ Պարոյր Սեւակի հարթաքանակը համանուն դպրոցներում :

2005 թուականին Ավարանի տառերի պուրակում կանգնեցուեց «Անանիա Շիրակացի» յուշարձանը:

2006 թուականին Գիւմրու Շերամի անուան հրապարակում կանգնեցուեց «Ձիւանի եւ Շերամ» պրոնզաձոյլ կոմպոզիցիան:

2008 թուականին Գիւմրու Վարդանանց անուան կեղրուական հրապարակում բացուեց «Վարդանանք» պրոնզաձոյլ արձանախումբը:

Հարց- Յիսուսի արձանի տեղադրումը Սուրբոյ մէջ որո՞ւն նախաձեռնութիւնն է, ինչպէ՞ս եղաւ, որ ձեզ ընտրեցին զայն բանդակելու համար:

Պատ- 2010 թուականի աշնանը Մոսկուայից ժամանած պատուիրակութիւնը Գիւմրիում Հանդիպեց ինձ եւ տեղեկացրեց, որ իրենք միջազգային մեծ նախագիծ ունեն, որտեղ պէտք է քանդակուի «Յիսուս Քրիստոսի» արձանը «Ես գալիս եմ փրկելու աշխարհը» գաղափարով եւ ցանկացան, որ այդ գաղափարը ես իրականացնեմ: Յետոյ իմացայ, որ քանդակը ստեղծելու մտայդացումը եւ ոգեւորողը եղած է Եուրի Գաւրիլովը՝ St. Paul and St. George Foundation հիմնադրամի հիմնադրիը եւ նախագիծը իրականութիւն դարձաւ այդ

հիմնադրամի տնօրէն Սամիր Շաքիր ալ Քաթպանի միջոցով:

Նախագծի համակարգողն էր Մոսկուայի Հոգեւոր ակադեմիայի եկեղեցական- հնագիտական գրասեննեակի վարիչ, հոգեւորական իգոր Միխայելովը, որն էլ իր ուշագրութեան կեդրոնում էր պահում քանդակի ստեղծման ամբողջ ընթացքը:

Այն հարցին թէ ինչպէս եղաւ որ ինձ ընտրեցին որպէս քանդակագործ, ես չգիտեմ: Կարող էր ցանկացած երկրի հեղինակաւոր քանդակագործ անել: Կարող եմ ասել, որ ինձ ընտրելու հարցը եղել է Աստծոյ կամքը: Նոյնիսկ հիմնական խորհրդատուն որ եկաւ, ասաց դա նախախնամութիւնն է. հայերը առաջին քրիստոնեայ պետութիւնն են եղել, Աստծուած մեզ ուղղորդեց Հայաստան:

Հարց- Արձանի մասին կը պատմէ՞՝ ինչքա՞ն ժամանակակից խլեց, որ աւարտին հասնի: Հայկական տարրեր կա՞ն արձանի մէջ:

Պատ- Արձանի ստեղծումը տեւել է մէկ տարի չորս ամիս, ես այն կերտել եմ իմ երեք որդիների՝ Կարապետի, Յովհաննէսի եւ Վահագի հետ, ինչպէս նաև մի քանի երեխաների մէջ արձանի երիտասարդութեամբ:

Քանդակը կերտելիս ես վերեւից ներքեւ Քրիստոսի հագուստին խաչքարային ժապաւէնաձեւ նախշեր արեցի, չնայած պատուիրատուների հաւանութեանը՝ խնդրեցին հանել այդ նախշազարդերը, իրենց կարծիքով այն հայկական ազգային նկարագիր կը տար Քրիստոսին: Նրանց նպատակը, առանց ազգային պատկանելիութեան, համամարդկային, բոլոր ազգերի կողմից ընդունուող, անկախ կրօնական դաւանանքի Աստծոյ որդու կերպարի ստեղծումն էր: Ես չեմ կիսում այդ կարծիքը, քանի որ ազգային լինելը ոչ թէ ձեւի այլ կերպարի ներքին զգացողութեան մէջ է, ես հայ եմ, իմ մտածողութիւնը եւ զգացմունքը հայերէն է, ինձանից ծնուած երեխաներս հայ են, իսկ ինչու իմ կերտած Քրիստոսը պէտք չէ ինի հայկական:

Արձանում Յիսուս Քրիստոսի երկրորդ գալուստն է պատկերած ժայռի վրայ քայլ կատարելիս, առջեւը՝ ձախ ոտքի տակ գզմուած, անշնչացած օձն է, որը չարի մարմնաւորումն է: Աստծոյ որդին իր օրհնութեամբ գալիս է փրկելու աշխարհը: Պատուանդանի ներքեւի աջ եւ ձախ մասերում «Աղամի» եւ «Եւայի» մեղանչող կերպարներն են: Արձանը տեղադրուել է Սիրիայի Աէյիստայայ քաղաքի «Խեռուկիմով» մենաստանի համանուն բարձունքի վրայ, այն ծովի մակարդակից բարձր է 2100 մետր: Այնտեղով անցնում է Կոնստանդնուպոլսից մինչեւ Երուսաղէմ ուխտագնացութեան ճանապարհը: Բարձունքը երեւում է Յորդանանից, Լիբանանից, Պաղեստինից, Իսրայէլից:

Հարց- Կ'ըսուի, որ արձանը տեղադրելու ժամանակ երեք օր ոմբակոծումները դադրած են, ի՞նչ կ'ըսէք այդ մասին:

Պատ- Երբ իմացայ, որ արձանը տեղադրելիս հակամարտող կողմերը երեք օրով դադրաբեցրել են պատերազմը՝ մտածեցի, Աստծոյ որդին իր գործը արեց:

Հարցազրոյց վարեց՝ Նայիրի Մկրտիչեան- Տաղեան

*Միա լոր կը հովանաւորին Ա. և Ա. Քարգն և Կոմիթս Կարապետեան*



## ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՌԱՎԱՅԿԱՎՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

FONDATION HAYASTAN CANADA INC.  
HAYASTAN FOUNDATION CANADA INC.

Սիրելի հայրենակի՞ց,

Հայաստան Համահայկական Հիմնադրամը արդեն թեւակոխեց իր 20-րդ տարին եւ մենք այդ ամեակը նշեցինք անցեալ տարի, միասնաբար զաղութիս մեջ գործող բոլոր կուսակցութիւններու, միութիւններու, յարանուանութեանց ներկայացուցիչներու եւ բազմաթիւ ազգայիններու ներկայութեամբ:

Միշտ վստահելով ձեր եւ ձեր նման ազգայիններու նիւթական աջակցութեան, վարչութիւնը 2012-2013 տարիներու ընթացքին ամրողացուց Արցախի Շուշի քաղաքին մեջ Պոռշեան փողոցի վերակառուցման ծրագիրը 230.000.00 ամ. տոլարի արժողութեամբ: Այդ գումարը ամրողութեամբ փոխանցուած է Հ.Հ.Հիմնադրամի Երեւանի գրասենեակը:

Այժմ, վարչութիւնը՝ շարունակելով իր մարդասիրական աշխատանքը, որոշեց ստանձնել Համայնքային կեղրոսի մը շինութիւնը Հայաստանի սահմանմերձ Խանցը գիւղին մեջ 240.000.00 ամ. տոլարի արժողութեամբ, որմէ պիտի օգտուին նաեւ շրջակայօթ գիւղերը:

Այս բոլոր ծրագիրներու յաջողութիւնը, ինչպէս միշտ, կը պարտինք բոլոր այս ազգայիններուն, որոնք տարիներէ ի վեր չեն զլանար իրենց նիւթական օժանդակութեամբ աջակցելու եւ զօրավիճ կանգնելու այս հսկայական ծրագիրներու իրականացման: Առաւել, մենք հաւաքական ուժով է միայն, որ պիտի կերտենք մեր Հայրենիքը

Հ.Հ.Հիմնադրամի Սոնթրեալի Վարչութիւն



## ԸՆՑՆԵՆՔ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ



Fondation Hayastan Canada Inc.

2340 Chemin Lucerne #30

Ville Mont-Royal, Qc. H3R 2J8

Tél.: 514 738-3530 • Fax: 514 738-2622

Ձեր տուրք գերծ նուիրատուութիւնը կրնաք կատարել եւ որկել գրուած անունին եւ հասցեին:

## «Արցախում ապրում է 140 000 պահակ»

### Հարցազրոյց ԼՂՀ փոխ վարչապետ Արթուր Աղարքինեանի հետ

1994-ին՝ զինադադար կնքելուց յետոյ Արցախը կանգնեց կոշտ իրականութեան դէմ յանդիման: Երկրի խաղաղութիւնը խարարուած էր՝ աւերուած ենթակառուածքներ, կաթուածահար համակարգեր, վլատակների վերածուած բնակավայրեր, ահոելի ընկերային բեռ:

Անցաւ ընդամենը երկու տասնամեակ: Թուում է բաւարար ժամանակ է ամէն ինչ զրոյից սկսելու եւ մեծ յաջողութիւնների հասնելու: Յատկապէս, որ կը գտնուեն մարդիկ, ովքեր օրինակներ կը բերեն համաշխարհային փորձից՝ ձափոնիա, Գերմանիա եւայլն..

Սակայն անարդարացի կը գտնուեն, եթէ զուգահեռներ տանելու դէպքում, ուշադրութիւնից բաց բողնենք մի չափազանց կարեւոր հանգամանք՝ Արցախը առ այսօր գտնուում է շրջափակման մէջ: Հարաւից սահմանակցում է Իրանին, որի հետ անցուդարձ չկայ, քանի որ առ այսօր սահմանը չունի սարքաւորումներով յագեցած վերահսկողական եւ մաքսային զննման ժամանակակից անցակէտեր: Միւս հարեւանը, որի հետ Արցախը սահմանակցում է արեւելքից եւ հիւսիսից, քշնամի երկիրն է, հասկանալի պատճառով՝ փակ սահմաններով: Միակ կապը արտաքին աշխարհի հետ՝ Հայաստանն է: Ահա այս պայմաններում, նաև միշագայնորէ չնանաչուած կարգավիճակում, Արցախը ոչ միայն գոյատեւում է, այլ զգալի ձեռքբերումների մասին կարող է խօսել:

Այսօր մեր զրուցակիցը Արցախի Հանրապետութեան փոխվարչապետ Արթուր Աղարքինեանն է:



**Հարց - Իսկապէս, իրավիճակը վատրագոյնն էր բոլոր առումներով: Բացի պատերազմի տուած վնասներից, տեղի են ունեցել մի շարք գործընթացներ, որոնք խոչընդոտել են տնտեսութեան կայացմանը՝ խօսքու մենատնտեսութեան մասին է: Հոդերի սեփականաշնորհումն էլ իրականացուել է ոչ կատարեալ սկզբունքներով, որի արդիւնքում, երկար տարիներ, հողերը մնացին անմշակ, իսկ վերամշակման արտադրութիւնը կանգնեց: Մինչեւ 2007 թուականը իրականում տնտեսութեան մէջ ան կար, բայց դանդաղ: Կը նշէ՞ք տնտեսութեան գերակայ ճիւղերը, որոնց վրայ այսօր սեւեռուած է կառավարութեան ուշադրութիւնը:**

**Պատասխան - Գիւղատնտեսութիւն, հանքարդիւնաբերութիւն, եկեղականութեան արտադրութիւն եւ զբուաշընութիւն:**

**Հարց - Ի՞նչ է այն շրջադարձը, որից յետոյ իշխանութիւններին բաւարարում է տնտեսութեան արձանագրած յառաջընթացը:**

**Պատասխան - Արդէն նշուած գերակայ ճիւղերում կառավարութիւնը**

**նոր ռազմավարական ծրագրեր մտածեց, որոնք յաջողուեցին:**

**Մասնաւորապէս գիւղատնտեսութեան ոլորտում, հողամշակին մենակ չժողնելու համար, ստեղծուեց հիմնադրամ՝ «Գիւղի եւ գիւղատնտեսութեան աշակցութեան» :**

**Այս հիմնադրամի հիմնական նպատակներն են՝ ստեղծել մեքենատրակտորային կայաններ, քանի որ բոլոր գիւղերում հրատապ էր գիւղատեխնիկայի խնդիրը, ստեղծել փորձարարական տնտեսութիւններ, նպաստել նոր միջավայրի ձեւաւորմանը, ինչպէս նաև հողամշակման վարկերի տրամադրում: Արդիւնքում, գիւղատնտեսութեան ճիւղը հետաքրքիր գարձաւ մերժակութեան համար :**

**Հարց - Արցախը, չնայած փոփրիկ տարածք ունի, սակայն, գիւղատնտեսական առումով բաւականին հարուստ նկարագիր ունի: Ո՞ր մասն է մշակութեան ենթական:**

**Պատասխան - Այսօրուայ գրութեամբ ունենք 64 000 գիւղատնտեսութեան յարմար տարածքներ, որի մեծ մասը պետական ֆոնտի հողեր են: Ընդգարձակ հողատարածքներ ունենք Արաքսի ափին, դա հարաւային Քաշաթաղ է, Մարտակերտի շրջանում եւ**

**Տիգրանակերտում:**

**Մենք ամէն ինչ անում ենք, որպէսզի հողը դառնայ գլխաւոր ներդրումների առումով հետաքրքիր միջավայր:**

**Վերջերս, Հայաստանից հրաւիրել ենք «Գիւղատնտես» ՍՊԸ, որն ունի 90 հողամշակման յարմար գիւղատնտեսութեան գործիքներ եւ պատրաստ է ծառայութիւններ մատուցել հողօգտագործումներին:**

**Հարց - Կարելի է համարել, որ վերամշակող արդիւնաբերութիւնը նոյնպէս հեռանկարային բիոդիման է:**

**Պատասխան - Միանշանակ: Այսօր կայացած կարող ենք համարել խաղողի վերամշակման հարցը: Պէտք է խոստանանք, որ խորհրդային տարիներին Արցախը յայտնի էր խաղողագործութեամբ: Իրադարձութիւնների հետ կապուած եւ ժամանակի ընթացքում բոլոր այգիները ոչնչացուել են: Մեզ յաջողուել է որոշակիօրէն վերականգնել այս ճիւղը, սակայն գեռ անելիք-ները շատ են: Մենք նպատակ ունենք խաղողագործութեանը վերադարձնել նախկին հոչակը: Այսօրուայ գրութեամբ ամբողջ բերքը վերամշակում է Արցախի տարբեր գործարաններում:**

*Կայս էք կը հովանասորն ԱՌ և ԱՌ Շեռն և Ֆրու Պիթիւան*



## ՀՕՄ-Ի ԳԱՆԱՏԱՅԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Եւ իր 10 մասնաճիւղերը կը շնորհաւորեն

Նոր Տարին եւ Ս. Ծնունդը

իրենց բարերարներուն, նուիրատուներուն,

բարեկամներուն եւ անդամներուն

website [www.ars-canada.ca](http://www.ars-canada.ca)

e-mail [ars-canada@bellnet.ca](mailto:ars-canada@bellnet.ca)

«ԱՐԱՅ»  
ՄԱՍՆԱՅԻՆ  
ՎԱՆԳՈՒՎԸՐ

«ՌՈՒԲԻՆԱ»  
ՄԱՍՆԱՅԻՆ  
ԹՈՐՈՆՁՈ

«ՌՈՒԲԻՆԱ»  
ՄԱՍՆԱՅԻՆ  
ՈՒԽՆԾԸՐ

«ԿՐԱԳԱՍ»  
ՄԱՍՆԱՅԻՆ  
ՄԻՍԻՍՈԿԱ

«ՍԵՒԱՆ»  
ՄԱՍՆԱՅԻՆ  
ՕԹԹԱՎՈՒ

«ՍՕՍԵ»  
ՄԱՍՆԱՅԻՆ  
ՄՈՆԹՐԵԱԼ

«ԱՐԵՒ»  
ՄԱՍՆԱՅԻՆ  
ՑԱՍԻԼԹԸՆ

«ԱՐԱՅ»  
ՄԱՍՆԱՅԻՆ  
ՄԵՆՑ ԳԱԹՐԻՆՉ

«ԾՈՒՇԻ»  
ՄԱՍՆԱՅԻՆ  
ԼԱՐԱԼ

«ՄԵՂՐԻ»  
ՄԱՍՆԱՅԻՆ  
ԳԵՄՊՐԻԾ

**Հարց-** Արցախում նոր ճգում է նկատում: Համատարած սկսել են նոան այգիներ տնկել: Սա եւս կառավարութեան ծրագրերից է, թէ անհատական նախաձեռնութիւն է:

**Պատասխան-** Նուռը շատ քիչ հորիզոնականներում է աճում: Բարեբախտաբար, մեր երկրի կիման նպաստաւոր է այս մրգի աճեցման համար:

Հնարաւորութեան դէպում, համոզուած եմ, բուրո՞ն էլ կը տնկէին նոան այգիներ: Խնդիրն այն է, որ մէկ հեկտար նոան այգի տնկելու համար պահանջւում է 10 000 ԱՄՆ տոլար: Առաջին բերքը տալիս է միայն երեք տարի յետոյ:

Մենք արդէն պայմանաւորուածութիւններ ունենք իւրացման հետ կապուած: Իսկ նոան վերամշակման գործում բոլոր նախաձեռնութիւնները խրախուսում ենք:

**Հարց-** 2013 թուականը Արցախում նշանաւորուեց մոռացուած լաւագոյն աւանդոյթի վերակենանութեամբ: Խօսիս գորգագործութեան մասին է, որը բոլոր ժամանակներում իր ուրոյն տեղն է զրադեցրել արցախու կենցաղում: Արդեօֆ գորգագործութեան արհեստանոցի բացումը մշակութային արժեքների պահպանման նպատակով է, թէ սա եւս տնտեսութեան հեռահար նպատակներից է:

**Պատասխան-** Ոչ միայն գորգագործութիւն, այլ մենք սկիզբ ենք դրել թեթեւ արդիւնաբերութեան: Սա կարեւոր ուղղութիւն է տնտեսութեան մէջ, ամէնից առաջ այն առումով, որ ստեղծում ենք աշխատատեղեր կանանց համար: Արտադրամասը տեղակայուել է նախկին «Հարմետաքսկոմբինատ»ի տարածքում, որտեղ ունենք 15 000 քառ. մետր տարածք: Նպատակ ունենք այստեղ ձեւաւորել պիզնէս միջավայր: Մենք տարածքը կը պատրաստենք ու գործարաններին կ'առաջարկենք, որպէսզի նրանք ներդրումներ կատարեն տեխնոլոգիաների մէջ:

**Հարց-** Արցախում աննախադէպ ծրագիր, որ մեկնարկեց մի քանի տարի առաջ, ՀԵԿ-երի կառուցման ծրագիրն էր: Արդիւնքները ինչպիսի են:

**Պատասխան-** Մինչեւ 2007 թ Արցախում արտադրում էր ընդամէնը 100 միլիոն կվտ/ժ (kilowatt - ժամական): Ելեկտրականութիւն: Այսօր արդէն մեր սեփական արտադրանքը հասնում է մեր պահանջարկին: Արտադրում ենք 220 միլիոն կվտ/ժ լեկտրականութիւն, սպառում ենք՝ 240 միլիոն կվտ/ժ լեկտրականութիւն: Պէտք է նշել նաև, որ տարեկան արձանագրուում է 7 տոկոս սպառման աճ:

ՀԵԿ- երի կառուցումը շարունակական ծրագրի է: Մենք հնարաւորութիւն ունենք արտադրելու մինչեւ 800 մէն կվտ/ժ լեկտրականութիւն:

**Հարց-** Ասում են՝ ով մէկ անգամ լինում է Արցախում, անպայման նորից վերադառնում է: Ի՞նչ էք կարծում, մենք ունե՞մք նախադրեալներ զրուաշրջութիւնը զարգացնելու համար:

**Պատասխան-** Այս ոլորտում հիմնական ուղղութիւնը կը լինի՝ էկոտուրիզմ (ecotourism): Սա նորութիւն է, որովհետեւ, նախկինում ենթակառուցների բացակայութիւնը հնարաւորութիւն էք տալիս այն լիթանելու: Իսկ որ պէտք է զրուաշրջութեանը առանձնայառուել դրամասին խօսում են թուերը: Եթէ 2011 թուականին մեզ այցելել են 5000 զրուաշրջիկ, ապա 2012-ին նրանց թիւը հասել է 15 000-ի: Արցախն ունի դրամիչ, պատմամշակութային վայրեր ու յուշարձաններ, ինչը լաւ նախադրեալ է զրուաշրջութեան զարգացման համար:

Ուզում եմ նաեւ աւելացնել, որ այս տարի կը մեկնարկի Մարտակերտ Վարդենիս ճանապարհի կառուցումը: Սա եւս զգալի տեղաշարժ կը ենքի Արցախի տնտեսութեան մէջ, մանսաւորապէս, զրուաշրջութեան առումով:

**Հարց-** Դուք նշում էք, որ Արցախի տնտեսութեան տարբեր ճիւղերում ներդրումները հեռանկարային են ու շահաւետ: Միւս կողմից՝ Ատրպէյնանի նախարարակ բաղականութիւնը, պատերազմ վերսկսելու կոչերը կասկածներ են առաջացնում ներդրողների մօտ :

**Պատասխան-** Ես հիմա յայտարարում եմ, որ յառաջիկայ 50 տարին Ատրպէյնանը միայն խօսելու է, ոչ մի գործողութեան չի գնալու: Իսկ մենք,

պարզապէս, պիտի հասկանանք, որ յաղթող երկիր ենք, պէտք է վայելենք այդ յաղթանակը՝ հզօրացնելով մեր երկիրը:

Աստուածաշնչում գրուած է՝ մեծացրու գաւակիդ բարերար հողի վրայ: Ես խորհուրդ եմ տալիս բոլոր նրանց, ովքեր դեռ փնտառութեների մէջ են, պարզապէս վեր կենան ու գան Արցախ: Իսկ մնացածներին խորհուրդ եմ տալիս, ապրել, արարել, բայց ուշադրութիւնը դէպի Արցախ պահել:

**Հարց-** Այստեղ տեղին կը լինի անդրադառնալ վերաբնակեցման խնդրին:

**Պատասխան-** Արցախի պիտմածէն ի վիճակի չէ մեծ գումարներ յատկացնել այս խնդրին :

Մենք ունենք հազարաւոր չուծուած ընկերային խնդիրներ, հաշմանդամներ, զոհուած ազատամարտիկների ընտանիքներ, դեռեւս չվերականգնուած ենթակառուցուածքներ :

Այս տարի առաջին անգամ նախաձեռնել ենք ազգային պետական վիճակախաղ՝ «Ծահում ես դու, շահում է երկիրը» :

Այս վիճակախաղից ստացուած եկամուտները կ'ուղղուեն՝ վերաբնակեցման ծրագրին եւ աշխատատեղեր ստեղծելուն, յատկապէս թեթեւ արդիւնաբերութիւնում:

Փառք Աստծոյ, ըմբռնումով են մօտեցել այս վիճակախաղին եւ արդիւնքներից գոհ ենք:

Սա կը լինի շարունակական: Բայց դրանից, մտադիր ենք, տարուայ ընթացքում մի քանի նման վիճակախաղ կազմակերպել :

Սա ընդամէնը մի ձեւ է, հայութեան ուժերը սեւեռելու Արցախի ազատարածքների վերակենդանացման համար: Ես ստիպուած եմ խոստվանել, որ Արցախում ապրում է 140 000 «պահակ», ովքեր հնարաւորութիւն են տալիս բոլոր հայերին հպարտ քայլելու:

Սատարէք Հայրենիքի պահանաներին:

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՎԱՐԵՑ ԲԵԼԱ ԼԱԱՅԵԱՆ**



*Այս էօր կը հովանաւորեն ԱՌ և ԱՌ Կահէ ու Գլուք Յակոբեան*



Տօնական օրերու յուսադրիչ տրամադրութեամբ, Դայ  
Օգևութեան Միութեան համահայկական ընտանիքը,  
Ամանորի Եւ Ս. Ծննդեան իր լաւագոյն մաղթասթերուն  
կողքին, կը յայտնէ իր սրտագին շնորհակալութիւնն ու  
երախտագիտութիւնը բոլո՞ր անոնց, որոնք  
մասնակցած են ու կը շարունակեն մասնակցիլ ՀՕՄ-ի  
համահայկական մարդասիրական ծրագիրներուն,  
ինչպիսին են՝ ՀՕՄ-ի «Սուտ» Մանկապարտեզները,  
Ամանոր Ծրագիրը, Մօր ու Մանկան Կեդրոն եւ  
Ծննդատունը, Ուսանող Ծրագիրը, Զաւախքի  
Երեխաներն ու բազմազաւակ ընտանիքները,  
Սուրիահայ վարժարաններու օժանդակութիւնն ու  
«Տաք ճաշ» եւ «Տաքուկ Բնակարան» ծրագիրները:

Ամանորեան այս օրերուն մեր բոլո՞ր միաւորները  
իրենց կարելին կ'ընեն յոյսի եւ լոյսի բաժին մը բերելու  
Սուրիահայ մեր ընտանիքներուն, եւ այս պատմական  
գաղութին բոլո՞ր Վտանգուած հաստատութիւններուն:

ՀԱՅ ՕԳԵՆԻԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԿԵՂՐՈՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
ՊՈՍԹՈՆ, 2014

## Հարցազրոյց ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտեի Անրկայացուցիչ Ռաֆֆի Տօնապետեանի հետ

### «100-ամեակի նշումով իր վախճանակէտին չի հասնիր պահանջատիրական մեր երթը»

Հարց.- Նոյեմբեր 7-ին, Հայկական Ցեղասպանութեան բանգարանի տնօրէն Հայկ Դէմոյեան, Գանատայի Ուժինիկի բաղադրի մեջ համագործակցութեան համաձայնագիր մը ստորագրեց Գանատայի Մարդկային իրաւանց քանգարանի (ԳՄԻԹ) ներկայացուցիչներուն հետ։ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը երկար տարիներէ ի վեր կը համագործակցի գանատական վերոնշեալ քանգարանին հետ։ Ո՞ւր հասած են այդ աշխատանքները։

Պատ.- Առաջին հերթին, մենք կ'ողջունենք այդ համագործակցութեան համաձայնագիրի ստորագրութիւնը, որ առիթ պիտի ստեղծէ Հայկական Ցեղասպանութեան մասին յաւելեալ փաստագրական եւ արխիւային նիւթերով օժտելու Գանատայի Մարդկային իրաւանց թանգարանը։

Գանատայի Մարդկային իրաւանց թանգարանին մէջ պիտի ներկայացուի մարդկութեան դէմ գործուած ոճիրներու պատմականը, յատուկ շեշտ դնելով հրէական, հայկական, ուռւանտական ցեղասպանութեանց, ուքրանական սովասպանութեան եւ Սրբավանիքայի ջարդին վրայ։

Նոյեմբեր 7-ի, ստորագրութեան արարողութեան ներկայ գտնուեցան Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութան դեսպան Արմէն Եղանեան, Հայ Դատի յանձնախումբի պատուիրակութիւնը, Զօրեան հիմնարկը եւ Ուժինիկի Հայ գաղութի ներկայացուցիչներ։

Պատմական օր էր այդ օրը գանատահայութեան համար։ Տարբեր ժողովուրդներու դէմ գործադրուած մարդկային իրաւանց անարդարութիւններու պատմութիւնը փոխանցող գանատական այս թանգարանը առաջինն է աշխարհի մէջ։ Ծնորհակալ ենք թանգարանի պատասխանատուններուն, որոնք թանգարանի հիմնադրման առաջին իսկ օրէն սերտօրէն համագործակցեցան Գանատայի Հայ գաղութին եւ Հայ Դատի յանձնախումբին հետ մասնաւորապէս։

Թիշեցնեմ, որ Գանատայի Մարդկային իրաւանց թանգարանին մէջ Հայկական Ցեղասպանութեան բաժանմունքի կառուցման գծով, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի հրաւերով 2012-ին Մոնթրէալի եւ Թորոնթոյի Հայ կեդրոնները այցելեցին թանգարանի հանրային յարաբերութեանց պատասխանատուններ Անմելա Քամի եւ տոքթ. Քլինթ Քըրը։ Պաշտօնական այս հանդիպումներուն նպաստակն էր գանատահայութեան հասարակական, քաղաքական եւ բարեսիրական կազմակերպութիւններուն ներկայացուցիչներուն ծանօթացնել Մարդկային իրաւանց թանգարանին առաքելութիւնը։

Հարց.- 2013-ի համագաղութային գլխաւոր իրագործումներէն մէկը հանդիսացաւ Լաւալի Հայկական Ցեղասպանութեան յուշարձանի կոթողումը։ Ինչպէ՞ս կը գնահատէ այդ աշխատանքը։

Պատ.- Քեսպէդ նահանգի երրորդ մեծագոյն քաղաքը



հանդիսացող Լաւալի կեդրոնական հրապարակին վրայ հայկական յուշարձանին կոթողումը իրագործուեցաւ շնորհիւ Լաւալի Հայ Դատի յանձնախումբի տարիներու հետեւողական աշխատանքին։

Խաչելութիւն-յարութիւն-վերածնուրնդ խորհրդանշող յուշարձանին հեղինակն է գանատահայ քանդակագործ Արթօ Զաքմագճեանը։

Հոկտեմբեր 20-ին, յուշարձանի բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան գանատացի քաղաքական հիւրեր եւ բազմահարիւր Հայրենակիցներ։

Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի նախօրեակին, յուշարձաններով պատմութիւնը ոգեկոչելու նմանօրինակ ծրագիրներ յառաջ կը տարուին գանատական այլ քաղաքներու մէջ։

Հարց.- Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին սեմին, ի՞նչ աշխատանքներ կը տարուին Հայ Դատի յանձնախումբին կողմէ։

Պատ.- Նախ եւ առաջ շեշտեմ, որ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը կը հաւատայ, որ 100-ամեակի գծով տարուող աշխատանքներն ու ձեռնարկները պէտք է կատարուին համագաղութային միասնական ջանքերով։

Ցեղասպանական արարքէն 100 տարի ետք, թրքական պետութիւնը կը շարունակէ իր ուրացման քաղաքականութիւնը։

Մինչեւ 2015 թուական, Հայ Դատի յանձնախումբերը Գանատայի տարածքին նպատակառողուած աշխատանք պիտի տանին գանատացի քաղաքական պաշտօնատարներն ու հանրութիւնը հաղորդ պահելու հայութեան վերաբերող մարդկային իրաւանց հարցերու գծով։

Կոչ կ'ողեմ մեր ընթերցողներուն, որ հետեւին Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի Գանատայի Միացեալ մարմնի յայտարարութիւններուն եւ ներկայ գտնուին

*Այս էք կը հովանառուի Ա. և Ա. Վիլեռ և Շնորհի Խերշեան*

անոր կազմակերպած ձեռնարկներուն: Անհատներ, որոնք կը փափաքին իրենց կամաւոր աշխատանքով սատարել վերոնշեալ մարմնին, կրնան կապուիլ շրջաններու մէջ գործող Հայ Դատի յանձնախումբերու գրասենեակներուն:

100-ամեակի որոշ աշխատանքներ կը համադրենք ՀՀ դեսպանին հետ, որուն հետ մեր սերտ համագործակցութիւնը տարիներէ ի վեր կը շարունակուի:

Կուգեմ յիշեցնել նաեւ մեր հայրենակիցներուն, որ 100-ամեակի նշումով իր վախճանակէտին չի հասնիր պահանջատիրական մեր երթը: 100-ամեակը պարզապէս անկիւնադարձային թուական մըն է: Պահանջատիրական մեր երթը պիտի շարունակենք յաւելեալ թափով եւ վճռակամութեամբ:

Հարց.- 2013-ին Մոնթրէալի մէջ սկիզբ առաւ Հայ Դատի աշխատանքներուն զօրակցական նուիրահաւաքը: Սեղմ կէտերու մէջ բացատրեցէք յանձնախումբի աշխատանքին ծիրակը:

Պատ.- Գանատայի Հայ Դատի յանձնախումբի գլխաւոր առաքելութիւնը՝ գաղութին մէջ հայկական պահանջատիրութեան գաղափարը վաս պահեն է:

Յանձնախումբը յատուկ աշխատանք կը տանի, գաղութին ծանօթացնելու հայութեան եւ Հայ Դատին վերաբերող հարցեր:

Այլ գետնի վրայ, յանձնախումբը նպատակառուղուածքարոզչական աշխատանք կը տանի գանատացիք քանատացիք քաղաքական պաշտօնատարներու մօտ գոյացնելու հայանպաստ քաղաքական դիրքորոշում:

Յանձնախումբը նախաձեռնութեամբ, Գանատայի խորհրդարանի անդամներ, Հայաստան եւ Արցախ այցելելով մօտէն կը ծանօթաթափան մեր հայրենիքին, ժողովուրդին եւ պատմութեան:

Յանձնախումբը իր որոշիչ գերակատարութիւնը ունեցաւ, որպէսզի Գանատայի արտաքին գործոց նախարարութիւնը սուրբիահայութեան օժանդակութեան առնչութեամբ որոշ ծրագիրներու մէջ գերակատար ըլլայ:

Դաշնակցային, նահանգային եւ տեղական ընտրութիւններու ընթացքին, յանձնախումբը զօրաշարժի ենթարկելով իր մասնաճիւղերն ու կորիգները, նիդ չի խնայեր որպէսզի համապատասխան պաշտօններուն ընտրուին հայանպաստ դիրքորոշում ունեցող թեկնածուներ:

Այստեղ յատուկ կերպով պիտի շեշտեմ նաեւ թուրքատրպէճանական հակահայ քարոզչական արշաւի պարագան, որուն օրըստօրէ ծաւալող թափը հակաշոելու պարտադրանքին տակ կը գտնուինք ներկայիս:

Յիշեցնեմ, որ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը վերը յիշուած նուիրահաւաքը յառաջիկայ ամիսներուն պիտի շարունակուի գանատական տարբեր հայկական ոստաններու մէջ:

Հարց.- Գանատայի մէջ 2 տարիէ ի վեր կը գործէ նաեւ Սուրբիահայութեան օժանդակութեան մարմինը: Ո՞ւրիշաած են այդ մարմնի աշխատանքները:

Պատ.- Սուրբիոյ Հայութեան Օժանդակութեան Գանատայի Համագրիչ Մարմինը իր հիմնադրման առաջին իսկ օրէն, համագաղութային լայնածիր աշխատանք ձեռնարկեց, սատար հանդիսանալու Սուրբիոյ տագնապին մէջ գտնուող մեր հայրենակիցներուն:



Լաւալի Հայկական Ցեղասպանութեան յուշարձանը

Հայ Դատի յանձնախումբը իր կարգին, գանատական քաղաքական շրջանակներու մօտ յատուկ քարոզչական աշխատանք տարաւ ներկայացնելով ճգնաժամի մէջ յայտնուած սուրբիահայութեան վիճակը եւ երկրին մէջ գարերով պալլած քրիստոնեայ փոքրամասնութիւններու հալածանքի ենթարկուիլը ծայրայեղական խմբաւորումներու կողմէ:

Հայ Դատի յանձնախումբը նաեւ աշխատանք կը տանի, որպէսզի Միջազգային Կարմիր խաչը եւ ՄԱԿ-ի գաղթականութեան դրասենեակը սուրբիահայութեան համար օժանդակութեան ծրագիրներ համագրեն Հայաստանի կառավարութեան հետ:

Հարց.- Երկրորդ տարին ըլլալով ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութիւնը (ԳԵՄ) յաջողուեամբ կը պսակէ «Վանաձորի նամբար» ծրագիրը: Ինչպէ՞ս կը գնահատէ այս աշխատանքը:

Պատ.- Ուրախալի երեւոյթ է, որ ԳԵՄ-ի մեր անդամները այս ծրագիրը երկու տարի անընդմէջ կը շարունակեն յաջող ձեւով:

Յուլիս ամսուան մէջ, Վանաձոր քաղաքի ճամբարներէն մէկուն մէջ, երկու շաբաթներու ընթացքին, ՀՅԴ ԳԵՄ-ի ամառնային ճամբարի մասնակից 210 երեխաները հետեւեցան ԳԵՄ-ի անդամ գանատահայ 15 վարիչներու պատրաստած դաստիարակչական ծրագիրներուն:

Վաստահ ենք, որ ԳԵՄ-ը պիտի շարունակէ իր այս առաքելութիւնը եւ յոյսով ենք, որ այդ աշխատանքի ծրագիրը կ'ընդլայնէ մինչեւ Արցախ եւ Զաւախք:

Հարցազրոյցը «Հորիզոն»ի

*Միա լոր կը հովանաւորեմ ԱՌ. Եւ Արքու Ամրագրեան*

# Հայեցի դաստիարակութիւնը եւ մեր կառոյցներու առաքելութիւնը

Մեր համայնքային կեանքի օրակարգին վրայ, Հայեցի դաստիարակութեան խնդիրը այսօր ինքզինք կը պարտադրէ այնպիսի հրատապութեամբ մը, որն անտեսելը անկարելի է: Ու թէեւ կարգ մը հրապարակագիրներ, դաստիարակներ, մտաւորականներ եւ եկեղեցականներ այս մասին կ'արտայայտուին թերթերու էջերէն եւ խորհրդաժողովներու ընթացքին, գործնական աշխատանքներու համբանքը մեծ չէ, հակառակ այն իրողութեան, որ Հայեցի դաստիարակութեան խնդիրը հիմնաքարն է ազգային դիմագծի անաղարտ պահպանման, Հայ Դասին եւ մինչեւ իսկ Հայաստանի պետականութեան գոյատեւման: Բառերը մեծ թող չթուին. առանց Հայեցի դաստիարակութիւն ստացած անհատներու, մեր հաւաքական ապագան նուազ ամուր եւ ապահով կ'ըլլայ, որովհետեւ Հայեցի դաստիարակութենէ գուրկ հայը ընդհանրապէս պատրաստ չէ յանձնառու ըլլալ ազգային իտէալներու իրականացման համար պայքարելու, տրամադրիք չէ Հայաստանի եւ Հայ ժողովուրդի գոյատեւման նպաստելու: Հետեւարար, Հայեցի դաստիարակութեան խնդիրը ամէնէն առաջքաղական բնոյթ ունի, եւ ներազգային ճակատին վրայ նոյնքան կարեւորութիւն կը ներկայացնէ՝ ինչքան արտաքինքաղաքական գործունէութիւնը:

Մեր համայնքային երեւակայութեան մէջ, կայ անցեալէն եկող այն համոզումը, որ Հայեցի դաստիարակութիւն եւ Հայկական ուսում գիրար փոխարինող եզրեր են: Եթէ ասիկա ամբողջովին ճիշդ էր երէկ, մասնաւորաբար միջին-արեւելեան գաղութներուն մէջ, այսօր սակայն, երկու եզրերուն միշեւ այդ հաւասարութիւնը սկսած է կորսնցնել իր իրաւութիւնը: Փաստօրէն, առանց դոյզն իսկ չափով թերագնահատելու մեր վարժարաններուն մէջ Հայեցի դաստիարակութեան գծով գործադրուող ճիզը, ստիպուած ենք հաստատել, որ մեր շրջանաւարտ պատանիներուն մէկ կարեւոր տոկոսը, վարժարանէն հեռանալու պահուն նաեւ վերջակէտ կը դնէ իր Հայկական ինքնութեան եւ դիմագծին: Ասկէ լրնանք եղրակացնել, որ ուսում եւ դաստիարակութիւն համահաւասար չեն այլեւս: Հայեցի դաստիարակութիւնը պէտք է տարածուի դպրոցական գրասեղաններէն անդին, անհատ հայուն ամենօրեայ կեանքին մէջ: Այլ խօսքով, Հայեցի դաստիարակութիւնը հայօրէն ապրելու եղանակն է: Ուսումը զուտ գիտելիքներու ամբարում է, որ կը տրուի միայն կրթական հաստատութիւններու ճամբով, մինչդեռ դաստիարակութիւնը կրթութիւն է (upbringing), որ կու գայ նախ տունէն, ընտանիքէն եւ ամենօրեայ շրջապատէն, ապա միայն կրթական հաստատութենէն: Դաստիարակութիւնը ապրելակերպ է, ուսումը՝ գործիք այդ ապրելակերպով ինքզինք իրագործելու:

Այս պարունակին մէջ, ո՞րն է Հայեցի դաստիարակութիւն յղացքին սահմանումը: Ըստ ինձի, ան կը նշանակէ Հայկական արեւելում ունեցող կրթութիւն, որ կը կառավարէ անհատին մտածողութիւնը, հարցերու մօտեցումը, առաջնահերթիւնը կեցուածքներու ճշգումը, եւ մինչեւ իսկ անոր նիստուկացը: Նման կրթութիւնը կ'ենթադրէ որ անհատը հմուտ ըլլայ Հայերէն լեզուին, քաջատեղեակ՝ Հայոց

պատմութեան, Հայ եկեղեցոյ դաւանանքին ու անոր պատմութեան, լայնօրէն ծանօթ՝ Հայկական մշակոյթին, իրազեկ՝ Հայ ժողովուրդի ներկայ իրավիճակին ու այսօրուան խնդիրներուն եւ վերջապէս, հաւատացող ու յանձնառու՝ Հայութեան ապագայի երազներուն եւ Հայաստանի նպատակներուն: Այս տուեալները նաեւ բաղկացուցիչ տարրերն են Հայ անհատին ընկերային ինքնութեան: Երբ հարց կը տրուի մեզմէ մէկուն, թէ ո՞րն է իր ինքնութիւնը, պատասխանը կը կազմուի այս տուեալներու ճշգումով: Մեր խօսած լեզուն, պատմութիւնը, հաւատքը, մշակոյթը, շրջապատն ու ապագայի երազները մեզմէ իրաքանչչւրին համայնքային ինքնութեան դիմանկարը կը կազմէն: Ուստի, Հայեցի դաստիարակութեան խնդիրը ամէն բանէ առաջ ոչ միայն քաղաքական՝ այլև ընկերային ինքնութեան հարց:

Հիմա որ սահմանեցինք Հայեցի դաստիարակութիւն հասկացութիւնը, արժէ տեսնել թէ ինչու՞ անիկա սուր ստիպողականութեամբ կը դրուի մեր առջեւ ներկայիս:

Հայեցի դաստիարակութիւն արտայայտութիւնը գլխաւորաբար սիրուոքեան հասկացութիւն մըն է, որ կը վերաբերի Հայրենիքէն դուրս գոյացած եւ Հայապահպանման սեւեռող հայկական գաղութներուն, որոնց Հաւաքական կեանքերը (մինչեւ այսօր) կը կազմակերպուէին միեւնոյն դասական եռակի կաղապարով. Եկեղեցի, կազմակերպութիւններ, դպրոց: Նոյն դասական բնօրինակին համաձայն, ասոնցմէ միայն վերջինին կը վստահուէր նորահաս սերունդներու Հայեցի դաստիարակութեան խնդիրը: Սակայն վերջին կէս դարուն, Հայկական իրականութեան մէջ առկայ որոշ կացութիւններու աճող փոփոխութիւնները Հայ համայնքային կեանքը դրին նոր իրագրութիւններու առջեւ, որոնց հետեւանքով Հայեցի դաստիարակութիւնը այսօր կը դառնապի Հրատապ ինդիր: Այդ նոր իրագրութիւններն են՝

- խառն ամուսնութիւններու յաճախակիութեան յաւելումը,

- գաղութներու տեղաշարժը. վաթսունական թուականներէն սկսեալ, Միջին-արեւելեան երկրներու քաղաքական անապահովութեան պատճառաւ հայութեան գաղթը այդ երկիրներէն,

- Հայաստանէն արտագաղթը՝ իննսունական թուականներէն սկսեալ,

- Հայաստանի անկախութիւնը, որուն իրողութիւնը կ'երաշխաւորէ Հայ ժողովուրդի պապական եւ Հայ անհատին մօտ կը յառաջացնէ հոգեբանական որոշ ապահովութեան զգացում, որով ան նուազ կը տագնապի Հայապահպանման խնդիրներով,

- համաշխարհայնացումը. հետզհետէ փոքրացող աշխարհի մէջ, աշխարհաքաղաքացիութեան զգայնութիւնը կը տանի սեփական արմատաներէն հեռացման:

Յիշեալ իրագրութիւններու գոյառումէն առաջ, Հայեցի դաստիարակութիւնը կը ջամբուէր մթնոլորտի ճամբով, ընտանեկան, ուսումնական եւ ակմբարային միջոցներով: Աշխարհը կ'ընթանար հանդարատ կը ուղիթով, եւ բոլոր նորութիւնները կու գային ամրապնդել կայացած արժէքները: Հայ ընտանիքի

Կայ էք կը հովանաւորէ Սարդար Կայութեան



ՕՍ-ի Սոնթրեալի

Սույն մասնաճիւղի վարչութիւնը  
իր բոլոր անդամներուն անունով

կը շնորհաւորէ ձեր

Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը:

Թող 2014-ը ձեզի համար ըլլայ՝  
քարեքեր տարի մը:



մէջ ծնող երեխան կը դառնար առանց այլեւայլի հայ եւ քրիստոնեայ: Երեխային համար նշանակալի բոլոր արժէքները հայկական էին, իսկ զանոնք ներկայացնող հանրածանօթ դէմքերը ծնունդով հայ: Հետեւաբար, հայեցի դաստիարակութիւն ջամբելու խողովակը լոկ հայկական ուսումնական հաստատութիւնն էր: Այս մտածողութեան խօսուն օրինակն է Լեւոն Շանթէն հետեւեալ մէջբերումը, արտասանուած 28 Մայիս 1928-ին, Համագույշին հիմնադրութեան առթիւ արտասանած ճառէն:

«Օտար գաղութներու մէջ, շրջապատի այլասերող եւ ապագայնացնող հազար ու մէկ վասնգներու մէջ ինչպէ՞ս կրնայ սերունդը հայ ըլլալ եւ հոգիով հայ մնալ: Ո՞վ պէտք է կատարէ այս դերը...երկու միջոց կայ՝ դպրոց եւ գիրք, որոնք միայն կրնան փրկարար դեր կատարել, հայ մնալու պայքար մղել, հայ հոգիներու մէջ ազգային մակարդակը պատրաստել»:

Այսօր Սփիւռքի մէջ սակայն, կացութիւնը փոխուած է էապէս: Այսօր Սփիւռքի մէջ ծնած հայը՝ պատասի թէ չափահաս, կ'ապրի երեք ազգակներու լարած ընկերային մթնոլորտին մէջ.

#### ա. արագ փոփոխութեան ենթակայ պայմաններ

Մեր շուրջ աշխարհը կը թաւալի աւելի արագօրէն քան անցեալին, գլխաւորաբար արհեստագիտական (technological) զարգացումներուն պատճառաւ: Իւրաքանչիւր օրուան հետ եկող նորութիւնը կը գրաւէ մեր ուշագրութեան կերպոնը: Ամէն օր մէնք կը զգանք ճարտարարուեստի զարգացումներուն հետ քայլ պահելու պարտադրանքը, յաճախ մէկդի գնելով մեր մնայուն արժէքները եւ փոխարինելով զանոնք անցողիկ եւ ժամանակաւոր ձեւական արժէքներով: Իբր հետեւանք, մեր ապրած կեանքին, վարած աշխատանքին եւ մեր շուրջի ընկերային պայմաններուն մէջ, հայկականութիւնը կ'ենթարկուի երկրորդական մտահոգութիւն դառնալու՝ կամ առնուազն մեր ապրած կեանքին քովն ի վեր ընթանալու վտանգին: Պատկերաւոր բացատրութեամբ, իբր մարդկի մէնք կը քալենք պողոտայէն արագօրէն, մինչ մեր հայկականութիւնը կը քալէ նոյն պողոտայի մայթին վրայ, որոշակի դանդաղութեամբ:

բ. քարոզչութեան եւ հաղորդակցական միջոցներու տարածումը

Ամէն օր աւելի գորացող ազգեցիկ այս բնագաւառը ուժգնօրէն կը գործէ մեր երեւակայութեան վրայ: Մամուլով, հեռատեսիլով եւ համացանցով հրամցուած իւրաքանչիւր պատկեր մեզի կը ներկայացնէ այս կամ այն գաղափարը, կը համոզէ որ որդեգրենք նոր զարգացող արժէքային համակարգ մը: Մեր ապրած ընկերութեան մէջ, եթէ պիտի ապրինք իբրեւ մէնք մեզ իրագործող, իբրեւ մեր կարողականութիւնը ամբողջին գործադրող մարդկի, ապա ուրեմն բնականաբար պիտի զբաղինք այնախի հարցերով, որոնք մեզ կը տանին համարկումի ճամբէն, որ, սակայն միւս կողմէ, մեզմէ կը խլէ հայկական արժէքներու հետապնդման հետեւողական ճիգ պահանջող եւ անհրաժեշտ ժամանակը:

#### գ. ազգեցութեան գոտիներու բազմացումը

Ընկերաբանները կ'առաջադրեն, որ ընկերութեան հետ մարդ անհատի յարաբերութիւնը իր գործնական արտայայտութիւն կը գտնէ խմբաւորումներու ճամբով: Իւրաքանչիւր անհատ, իր կեանքի ընթացքին կը պատկանի զանագան խմբաւորումներու, յաճախ միաժամանակական պատկանի մասին խօսակցութեամբ, ազգային տօներու նշումով եւ աւանդութիւններու պահպանման ճամբար:

դպրոցական կեանք, ասպարէզ, բաժանորդագրութիւններ, միութենական կեանքի անդամակցութիւն, առժամեայ խմբաւորումներու մասնակցութիւն: Այս խմբաւորումները միշտ աղջոյութիւն ունեցած են եւ կարգաւորած մեր յարաբերութիւնները մէկզմէկու եւ հասարակութեան հետ: Եթէ հայ անհատի կեանքը կառավարող աղջեցութիւնները փոքրաթիւ ու ընտրովի էին անցեալին եւ անոր թոյլատութեամբ կը ներգործէին իր վրայ, այժմ մենք ակամայ կ'ապրինք բազմաթիւ աղդեցութիւններու միաժամանակ գործող պարտադրանքներուն տակ: Նորութիւնը այժմ այն է, որ այսօր անոնք կը ներկայանան համահաւասար կարեւորութեամբ եւ կը ջնջեն այն առանձնայատկութիւնները որ խարիսխը կը կազմեն մեր անհատականութեան: Հայ երիտասարդը իր աշխատավայրի մէջ ստեղծած կապերուն չորհիւ, օրինակ, մաս կը կազմէ, ենթադրենք, կոլֆ խաղացողներու խմբաւորման, որ նոյնքան կարեւորութեամբ կը ներկայանայ իրեն, ինչքան ըսենք, որեւէ ձեռնարկ կամ գործունէութիւնը որ պիտի շեշտառորդէ իր աշխատավականութիւնը: Հետեւաբար, այսպիսի առիթներու յաճախականութեան թափը հետպհետէ կը հեռացնէ երիտասարդը այն նախաձեռնութիւններէն որոնք պիտի ամրապնդէին հայեցի դաստիարակութիւնը իր մէջ:

Ահաւասիկ այսպիսի պայմաններու մէջ է, որ կը գտնենք հայեցի դաստիարակութիւնը ներկայիս: Մեր ապրած երկիրներուն մէջ, լիիրաւ քաղաքացիներ ըլլալու ճամբուն վրայ, երբեմն մէկդի կը դնենք հայեցի դաստիարակութեան խնդիրը: Ան մեզմէ կը պահանջէ յատուկ եւ դիտումնաւոր ճիգ՝ հայ երիտասարդին մօտ իր քաղաքական ինքնութեան գիտակցութիւնը ուժեղացնելու: Մեր գաղութներու միջավայրը կը պարտադրէ նաեւ որ հայեցի դաստիարակութիւնը գառնայ լիիրաւ մրցակից վերը նշած պայմաններուս դէմ: Միւս կողմէ, պէտք է անդրադառնանք, որ հարկ է չափաւոր ըլլալ հայեցի դաստիարակութեան մեր ընծայած ուշադրութեան եւ զայն մրցակից դարձնելու մեր ճիգին մէջ այլապէս, հայեցի դաստիարակութիւնը կը գաղրի գրաւէ եւ բնական ըլլալէ եւ կը դառնայ վանողական եւ բոնազբօսիկ: Զենք կրնար այլեւս անցեալին նման մեր զաւակներուն համոզել, թէ հայերէնը աշխարհի ամենէն հարուստ լեզուն է եւ ամենէն գեղեցիլը: Զենք կրնար հայկականութիւնը արժեւորել ուրիշները նսեմացնելով: Հայեցի դաստիարակութիւնը հայկականութեան յատուկ եւ գերակշիռ՝ սակայն ո՛չ գերազանց ըլլալու գիտակցութիւնն է:

Հայեցի դաստիարակութիւն ջամբելու միջոցները երկակի են. ան պիտի արուի առարկայական գիտելիքներու ճամբուն՝ հայկական վարժարաններու մէջ ուսման՝ բայց նաեւ արտադրոցական ձեռնարկներուն պիտի ամրապնդուին կեանքի նախաձեռնութիւններով: Առարկայական գիտելիքները պիտի ամրապնդուին ենթակայական միջոցներով, ընտանիքներէն ներս, անհատական հարցերէն անդին՝ հաւաքական կեանքի մասին խօսակցութեամբ, ազգային տօներու նշումով եւ աւանդութիւններու պահպանման ճամբար:

Ո՞վ պիտի զբաղի հայեցի դաստիարակութեամբ: Ծնողք, ուսուցիչ, կազմակերպութիւններու վարչչութիւններ, կառոյց-



ներու պաշտօնեաներ՝ հաւաքաբար: Անոնք ամէնքն ալ դեռակատարութիւն պէտք է ստանձնեն գաղութներու ապագա-  
յին համար առաջնահերթ այս խիստ էական գործին մէջ:

Գործնական առաջարկներ

ա. Զարկ տալ հայախօսութեան, մանաւանդ ի տես  
արեւմտահայերէնին սպառնացող կանխատեսելի վտանգնե-  
րուն:

բ. Վերահսկել ուսումնական ծրագիրները. ուշադրու-  
թեամբ հետեւիլ, որ հայերէնով ջամբուղ դասանիւթերէն  
ծրագրային գեղչումներ չպատահին:

գ. Պատրաստել հայերէնի դասագրքեր եւ ներառել  
անոնց մէջ արհեստագիտական նոր միջոցներ:

դ. Պատրաստել ատակ մարդուժ, քաջալերելով հայերէնի  
ուսուցիչներու մասնագիտական ուսումը:

ե. Հաստատել կրթա-ուսումնասիրական կեդրոն:

զ. Յառաջացնել միջ-միութենական գործակցութիւն,  
որուն նպատակն է հայկական վարժարաններու կողքին, լրա-

ցուցիչ դերակատարութիւն ունենալ հայեցի դաստիարակու-  
թեան մէջ, գլխաւորաբար արտա-դպրոցական նախաձեռնու-  
թիւններով:

է. Ստեղծել մանկապատանեկան գրականութեան հիմ-  
նադրամ:

Անշուշտ, նշած հարցերս եւ առաջադրութիւններս չեն  
սպառեր հայեցի դաստիարակութեան տաղնապին ծալքերն ու  
հարցերը, այլեւ կը ծնին նոր հարցադրումներ եւ ինդիրներ:  
Համազգային կրթական քաղաքականութեան, բայց յատկա-  
պէս սփիւռքեան կրթական քաղաքականութեան մը բացա-  
կայութեան ի տես, տեղական սահմաններով հայեցի դաստիա-  
րակութեան զարկ տալու ուղղուած նախաձեռնութիւններ  
կրնան առնուազն սկիզբը դնել նման քաղաքականութեան  
մը գոյառումին, որ մեր օրերու հրամայականներէն մէկն է:

Վիգէն Թիֆէնքճեան

*Միա լըր կը հովանառի Ա. և Ա. Ղանէ և Կարողի Կնքունեան*

# «Այն, ինչը ժառանգել ենք մեր պապերից, պարտաւոր ենք փոխանցել սերունդներին», «Կարին» պարի համոյթի հիմնադիր Գագիկ Կինոսեան

Մօտաւորապէս մէկ տարի առաջ, առաջին անգամ ըլլալով, ներկայ գտնուեցայ «Կարին» ազգագրական պարախումբի ելոյթին եւ անդրադարձայ, թէ ինչքան մեծ գեր կրնայ ունենալ առանձին անհատ մը՝ երիտասարդներուն ազգային ողի փոխանցելուն մէջ: Բնեմին վրայ ներկայացուած պարերուն զուգահեռ՝ կը պարէ նաեւ ելոյթին ներկայ գտնուող երիտասարդներուն 60 տոկոսը, ոյոյն ոգեւորութեամբ: Համերգէն ետք հնչեց պարերուն մեծ շունչ ու ոդի փոխանցող Գագիկ Կինոսեանի հոսքը, որ նոյնքան ոգեւորիչ էր եւ կը բացայատէր հայրենասէր մարդու մը դրական կերպարը:

**Ո՞վ է Գագիկ Կինոսեանը:**

Գագիկ Կինոսեանը մասնագիտութեամբ՝ կիբեռնետիկ (մեքենական ուղեղներու ուսումնասիրող - cybernetic) եւ արցախեան պատերազմին մասնակից: Ան նաեւ ազգային պարուեստի երախտաւոր գործիչ է, զբաղած է բանահաւաքչական գործունէութեամբ՝ մոռացութենէն փրկելով բազմաթիւ աւանդական պարեր: Հիմնադրած է «Կարին» աւանդական երգի-պարի խումբը: Ան կը շարունակէ զբաղի ազգագրական պարերու վերականգնման եւ տարածման գործով՝ հաւաքելով, մշակելով եւ բեմադրելով Մեծ Հայքի տարբեր գաւառներու պարերը: Այդ առումով ան ազգագրական պարերու մերօրեայ կոմիտասն է:

Գագիկ Գինոսեանի արմատները՝ Կարին քաղաքէն մի քանի քիլոմետր հիւսիս-արեւմուտքին գտնուող եղէկիս (թրքական արտասանութեամբ՝ հլիջան) փոքրիկ քաղաքէն են, ուր հաստառուած եղած է Գինոսենց տոհմը:

1829-ին. Աղքահանապղոյ պայմանագրով, ծանր ու ազմական եւ միջազգային կացութեան մէջ յայտնուած Ռուսա-արեւմուտքին գտնուող եղէկիս (թրքական արտասանութեամբ՝ հլիջան) փոքրիկ քաղաքէն են, ուր հաստառուած եղած է Գինոսենց տոհմը:

րուն օգնած հայերու անվտանգութիւնը ապահովելու պատրուակով՝ Ռուսաց կայսրութիւնը կը կազմակերպէ արեւմտահայերու վերաբնակեցում նոր գրաւուած Արեւելեան Հայաստան: Նախկին իլիջանցիները կը հաստառուին Ախալցիայի Ծուղրութ գիւղը: Այդ ճակատագիրը վիճակուած էր նաեւ Գինոսենց տոհմին:

1966-ին ծնած է Գագիկ Կինոսեանը եւ կրթութիւնը ստացած տեղւոյն թովհաննէս Թումաննեանի անուան հայկական միջնակարգ դպրոցին:

1990-ին բարձրագոյն կրթութիւնը աւարտած Գագիկ Կինոսեանը տեղափոխուած է Երեւան: Արցախեան պատերազմի օրերուն ան մեկնած է ուազմաճակատ: 1992-1994 մասնակցած է Արցախի ազատազրական պայքարին: Զինադադարէն ետք՝ 1994-1996 թուականներուն ծառայած է ՀՀ բանակին:

Արժանացած է տարբեր մետալներու, ինչպէս նաեւ 4 տարբեր միջազգային փառատօներու դափնեկիր է:

Գագիկ Կինոսեան պարի ասպարէզի մէջ յայտնուած է պատահականօրէն, երբ 1987-ին անդամակցած է Հայրիկ Մուրատեանի ստեղծած «Վան» ազգագրական խումբին: Այս մասին Գագիկ Կինոսեան կը պատմէ, «Պար եկել եմ շատ պատահական ու երջանիկ դիպուածով, սակայն պարել սիրել եմ միշտ: Պարել եմ թաքուն՝ ամաչկոտ լինելու պատճառով: Պարել եմ իմ բանակ գնալու խնճոյքի ժամանակ միայն, այն յոյսով, որ մինչեւ բանակից վերաբառնայի, բոլորը մոռացած կը լինէին, թէ ես ինչքան վատ էի պարում: Մի անգամ ընկերներից մէկը, որ սիրահարուել էր Հայրիկ Մուրատեանի խմբում պարող մի աղջկայ, ինձ համոզեց, որ գնանք պարի, քանի որ, երբ ինքը գնում է այդ աղջկան տուն ճանապարհելու, խմբի տղաները այնքան էլ լաւ չեն վերաբերում իրեն: Եւ այդպէս մենք միասին գնացինք «Վան» ազգագրական երգի պարի խումբը ընդունուելու: Ես լինելով 22 տարեկան, համոզուած էի, որ ինձ չեն ընդունի

խումբ, քանի որ սովորաբար 22 տարեկանում մարդիկ արդէն հեռանում են պարից, ոչ թէ ընդունուում: Ես այդ ժամանակ անգամ չէի լսել Հայրիկ Մուրատեանի անունը, ով պարզուեց 90 տարեկան հասակում կարողանում էր սիրել երեխաներին, սիրել իր կրած ազգային մշակոյթը, ինչպէս նաեւ շատ բարեհամբույր լինել ու բոլորին վերաբերուել հարազատի պէս, ու ոչ մէկի գէմ չփակել ճանապարհը գէպի մշակոյթ: Հայրիկ Մուրատեանը ինձ ասաց. «Բարձրացիր բեմ, բալիկս», ու ես միացայ խմբի փորձերին, շատ շուտով այդ տղան ու աղջկերը ամուսնացան ու դադարեցին պարախումբի փորձերին մասնակցել, իսկ ես մնացի ու մնացի պարի մէջ: Յետոյ «Ակունք» ազգագրական անսամպլում եմ պարել ու 2001 թուականից ստեղծել եմ երկու խմբեր՝ «Ծովակ» մանկապատանեկան խումբը եւ «Կարին» երգի պարի համոյթը: Այդ ժամանակ, անկեղծ ասած, շատ չէի հաւատում որ նոր սերունդը կը հետաքրքրուի ազգագրական պարերով:

«Ծովակ» խումբը ստեղծուեց Ծովակ Համբարձումեանի նախաձեռնութեամբ եւ Ա. Խասհակեանի անուան գրագրականի ղեկավարութեան աջակցութեամբ, իսկ Ծովակի մահից յետոյ խումբը կոչուեց իր անունով: Յետագյում միտք առաջացաւ ստեղծել «Կարին» խումբը, խմբի առաջին քայլը արուեցին իմ հաւաքած Կարնոյ պարերով, դրա համար խմբի անունը եղաւ «Կարին»: Հիմա, ի հարկէ, իմբի երգերի, պարերի աշխարհագրութիւնը չափազանց մեծացել է՝ համշէնահայերի պարը, Արաբկիրի, Արցախի ու Պարահայքի:

**Հ- Կը պատմէ՞ ձեր պարի ուսուցման ծրագիրներուն մասին:**

**Պ-** Պարի ուսուցման ծրագիրը արդէն 8 տարի է որ իրականացւում է: Սկզբում եռակողմ ծրագիր էր՝ Նարեկացի արուեստի կեղրոնի եւ «Մեր քաղաքը մեր տունն է» հիմնադրամի հետ: Տարիներ անց, երբ արդէն նարեկացի արուեստի կեղրոնի պահէ չէր բաւարար:

*Կայս էք կը հովանաւորեն Ա. և Ա. Պետրոս և Ծովակ Գահիվճեան*



TRUEFITT & HILL  
EST. 1805 - ST. JAMES'S - LONDON



VISCONTI FIRENZE

THE WRITING RENAISSANCE



GEO. F. TRUMPER  
Perfumer

LAMY

Design. Made in Germany.



# VASCO

cigares

PORSCHE DESIGN



Alfred Dunhill



Tonino Lamborghini




S.T. Dupont  
PARIS

D A L V E Y



1327 Ste.Catherine Ouest (Coin Crescent), Montréal, Québec H3G 1P7  
514.284.0475 - [www.vascocigars.com](http://www.vascocigars.com)



բարում, Գաֆէսջեան հիմնադրամի տարածը սկսանք օգտագործել: Արդէն 4-րդ տարին է, Մայիսէն՝ Սեպտեմբեր, ամէն ամսուայ վերջին Ուրբաթ օրերին, կազմակերպում ենք ազգային պարի ուսուցման ծրագրեր, որին մասնակցում են շատ երիտասարդներ: Շատերը չեն ուզում բեմ բարձրանալ, նրանք ուղղակի ներուժ են ստանում պարելիս: Երբեմն նրանց չի բաւականացնում ամիսը մէկ անգամ պարելը եւ նրանք գալիս են մեր խմբերում շաբաթը 2 անգամ պարելու: Մի նոր նախաձեռնութիւն է ծնուել այս սիրողական խմբերի կողմից, որը կոչւում է «պարենք հայերէն»:

**Հ- Դուք պարուսուցման գուգահեն՝ երիտասարդներուն կը ծանօթացնէք նաև ազգային տարբեր հարցեր, անոնց փոխանցելով պատմական տեղեկութիւններ:**

**Պ- Ես մի բանաձեւ ունեմ, որ պէսզի կաթը սափորից յորդի, պէտք չի որ սափորի տակը ճաքի, պէտք է ուղղակի լիքը լինի յորդելու համար: Ամէն ամիս ներկայացնում եմ մի յորելեան, մի իրադարձութիւն, եւայլն....:**

Վասահ եմ, որ պարը լաւագոյն միջոցներից մէկն է երեխայ դաստիրակելու համար եւ դա լոկ իմ համոզմունքը չի: Կոմիտասը լուրջ աշխատութիւն ունի «Պարն ու մանուկը», որտեղ ասւում է. «Ինչը որ հնարաւոր չէ տալ երեխային 5 դասի քարոզի միջոցով, հնարաւոր է՝ բնդամէնը մէկ պարի միջոցով, որովհետեւ գիտական գաղափարական ազդեցութիւնից բացի, պարը

նաեւ ենթագիտակցական ազդեցութիւն ունի: Պարը ոչ միայն միջոց է դաստիրակելու, այլեւ միջոց է ինքնաճանաչման, որովհետեւ այն հնարաւորութիւն է տալիս բացայատեկ քո հոգին, քո մարմինը: Պարի միջոցով երբեմն նաեւ բացայատեւում են նաեւ թերութիւնները, թէ ինչին պատրաստ չեն քո մարմինն ու քո հոգին: Յետոյ աշխատում ես վերացնել խնդիրները ու հասնում ներդաշնակութեան: Դէպի Աստուած տանող ճանապարհներից, աւելի բարդ է դէպի քեզ տանող ճանապարհը: Եթէ դէպի Աստուած տանող ճանապարհի վերջում ծնուում է հաւատացեալը, ապա դէպի քեզ տանող ճանապարհի բարեյաջող աւարտին՝ ծնւում է աստուածամարդը:

Ինքնաճանաչողութեան կատարեալ միջոցներից մէկը ազգային պարն է, որը հազարամեակներով մշակուել, յղկուել, ազգել է հայ մարդու կերտաման վրայ: Կարծում եմ պէտք է մէկընդմիշտ հրաժարուել այն կեղծ պարարուեստից, որը ստեղծուել է Խորհրդային միութեան պարտադրանքով: Դէպէ է վերադառնալ այն պարային նմուշներին, որոնք այսօր էլ ունեն իրենց կրողները, տատիկ-պապիկները, որոնք այսօր էլ պարում են: Դէպէ է գտնել այն ոգեշնչիչ ուժը, որ խանդավառում է նրանց, օրինակ ինչն է ոգեշնչում 84 տարեկան պապին, երբ «Շարանի» է պարում՝ Մարտունու շրջանի Զորագիւղ գիւղում, ու պարելուց կարծես վերածում է 60 տարեկանի:

**Հ- Դուք յանակ պարի ու-**

սուցման ծրագիրներ կ ՚իրականացնէք նաև ՀՀ բանակի մէջ, կը պատմէ՞ այդ մասին:

**Պ- Մենք համերգներով եւ պարի ուսուցման ծրագրերով յաճախ ենք հանդէս գալիս գորամասերում: Իմ կարծիքով, այսօր օրհասական խնդիր է ուազմապարը զինուորներին ուսուցանելը, որովհետեւ դա դաստիրակութիւն է, դա մարզանք է, իսկ ազգային գաղափարների առումով այն լաւագոյն դաստիրակութեան միջոցն է: Յաւօք սրտի, այս հարցը օրակարգութիւն մնացել է, մի քանի անգամ գիմել ենք պաշտպանութեան նախարարութիւն, մերժում չենք ստացել, բայց եւ առաջնական գաղափարը գինուոր, աւելի ոգեղին մարդ, կամ՝ պարտադիր ծառայութեան մեկնած հայ գինուորին հոգեբանորէն կը վերածի կամաւորագրուած զինուորի: Եղել են դէպի եր, եր զօրամաս ենք գնացել, նոյնիսկ դեկավար կազմը մեզ խանդավառուած չի դիմաւորել, բայց մեծ մասամբ համերգների վերջում, մեզանից ներողութիւն են խնդրել եւ ասել են, որ իրենք չէին պատկերացնում, թէ պարը ինչքան դրական ազգեցութիւն կարող է թողնել զինուորների վրայ, որովհետեւ հայկական ուազմապարերը հզօր ուժ ունեն:**

**Հ- Ինչ կը մտածէք Հայատանի ազգային խնդիրներուն շուրջ խօսելը:**

**Պ- Բարդ է Հայաստանում ազգային խնդիրների շուրջ խօսելը, որովհետեւ Հայաստանը շատ փոքր է, բոլորը իրար ճանաչում են, եւ ինչ էլ խօսեն՝ ինչ- որ մէկը քեզանից վիրաւորում է, բայց կան բաներ, որոնք անձնական յարաբութիւններից աւելի բարձր չահ տեսնել, մենք շատ խոսուր ճանապարհներ ենք ունենալու: Իմ պատասխանները այս հարցերի շուրջ միշտ անկեղծ են ու սուր, ճիշդ այնպէս ինչպէս մտածում եմ:**

Հայաստանում շատ են ազգային խնդիրները եւ այդ զուտ ազգի խնդիրը չէ, որովհետեւ 20 եւ աւելի տարեկներ, ազգը այլասերւում է որպէս ազգ եւ ազգի մէջ սպանւում է ազգը, կարեւոր չէ ինչպէս եւ ինչ պատճառներով: Մենք օր առաջ պէտք է սթափուենք եւ

*Կայ էք կը հովանաւորեն Աստօն, Կարագ եւ Շեռն Շաղման*

Ascenseur



Elevator

**Services Inc.**

**PO BOX 30, ST LAURENT, QC. H4L 4V4**

**COURRIEL / EMAIL:**

**CUSTOMERSERVICE@ADAMSELEVATOR.CA**

**TEL : 514-745-4455 / FAX : 514-745-6613**

**MEMBRE DE CECA / MEMBER OF CECA**

**RBQ# 1812-6474-22**

**PEDRO OUGHOURLIAN**



**CARROSSERIE PRISME**  
*Peinture & Débosselage*  
Garage Agréé



Expert en  
Infiniti et Acura



**INFINITI**



**ACURA**

**Raffi Koushian**  
Propriétaire

**1430 rue Michelin Laval, Qc. H7L 5C2**

**Tél: 450 967-3948 • Fax : 450 967-1642**

**carrosserieprisme@bellnet.ca**

բոլոր հարցերին նայենք ազգային տեսանկիւնից, անգամ մեր անկախութիւնը դիտենք միայն ու միայն ազգային աշտարակից: Անկախութիւնը կարող է անգամ շատ վտանգաւոր լինել ազգի համար, կան նման օրինակներ, երբ երկրները, ովքեր չունեին անկախութիւն, պահպանում էին իրենց ազգային նկարագիրը, եւ յանկարծ, անկախութիւն ձեռք բերելուց յետոյ, կորցնում են իրենց ազգային տեսակը: Այս առումով մենք կարծես թէ վտանգաւոր եզրին ենք, ազգային ինքնութիւնը կորցնելու եղրին, որը որ շատ վտանգաւոր եղք է:

Մենք մի կարեւոր բանաձեւ պիտի հասկանանք, այո, անկախութիւնը բացարձակ արժէք է, չեմ կարող չհամաձայնել այս գաղափարի հետ, այտք է ամէն ինչ անել, որպէսզի անկախութիւնը լինի մնայուն, բայց բացարձակ արժէք լինելով հանդերձ այն նպատակ չէ, նպատակը ազգն է, անկախութիւնը միջոց է ազգի բնականոն զարգացման եւ անվտանգ գոյատեւման համար: Եթէ մենք անկախութեան օրօք արձանագրում ենք ազգային անկում, դա վտանգաւոր անկախութիւն է, ես չեմ վախենում այդ բառերից, որովհետեւ մեզ սթափուել է պիտք: Եթէ մենք չհասկանանք, որ անկախութիւնը արուած է մեր ազգային ինքնազիտակցութիւնը վերագտնելու, ազգային արժեհամակարգը վերակերտելու համար, իրօք այն կարող է կործանարար լինել, որովհետեւ Խորհրդային Միութեան ժամանակ մենք աւելի կայացած էինք որպէս ազգ, քան այսօրուայ սերունդը: Մենք քաղաքացիական աշխոյժ սերունդ ունենք, որոնք պայքարում են ճանապարհածախսի թանկացման դէմ, «Մաշտոց»ի պուլակի կառուցապատման դէմ, բնապահպանական խնդիրների համար, բայց որեւէ լուրջ նախաձեռնութիւն, որը ազգային հիմնախնդիրներ է բարձրացնում, կարծես թէ չկայ:

Մենք լուրջ խնդիրներ ունենք. ազգի հւրաքանչիւր զաւակ պիտք է անցնի երեք կարեւոր ուղղութիւններով. նախ՝ ինքնաճանաչութեան, ազգային նկարագիրը ճանաչելով եւ ազգի պատմութիւնը ուսումնասիրելով, նա ինքնովք պիտի ճանաչի, որից պիտի բնի ինքինքը յարգելու գաղափարը, որից էլ պիտի բնի ինքնիշխան լինելու ազգային ձգտումը: Մենք չունենք ինքնիշխան լինելու գիրքորոշումը, մենք փոխզիջումային քաղաքականութիւն

ենք վարում, որովհետեւ նախ եւ առաջ մենք դեռ չենք դարձել «ինքնայարգ», քանի որ բաւարար չափով «ինքնաճանաչանչ» չենք: Այսօր երկրի քաղաքացի դաստիարակելու ի սպառ բացակայութիւն է տիրում, չկայ ինստիտուտը, թէ ինչպիսին պէտք է լինի ՀՀ քաղաքացին վաղը: Պետութիւնը պիտի լինի հաւաքող ուսպնեակի դերում եւ այդ ուսպնեակը արեւի ճառագայթները պէտք է ուղղի մի կիզակչտի: Նման առաքելութիւն պէտք է սպասուի մեր իշխանութիւններից, քանի որ իւրաքանչիւր ոլորտի ջանքը պէտք է նպատակառողուած լինի մէկ կէտի՝ քաղաքացի դաստիարակելուն: Մշակոյթը, կրթական համակարգը ինքնաճանապատակ չեն կարող լինել, ամէն ոլորտ պէտք է համակարգուած լինի, տնտեսութիւնը պիտի աջակցի մշակոյթի զարգացմանը, գլորոցը պիտի պատրաստի այն գինուորին, որը մատածելու է հայրենիքի պաշտպանութեան եւ ոչ թէ ընկերություն չեն ամասին: Այսինքն՝ այս ոլորտները պէտք է շաղկապուած լինեն եւ իրար աջակցելով կերտեն նոյն մարդուն: Նախ եւ առաջ պէտք է որոշուի, թէ ով է լինելու վաղուայ քաղաքացին, ինչպիսին է լինելու նա, որը ոչ միայն ազգային նկարագիրը պիտի չկորցնի, այլ պատրաստ լինի 22-րդ դարի համաշխարհային մարտահրաւէրներին: Սրանք լուրջ խնդիրներ են, որոնցով պէտք է գրաղուեն ինստիտուտներ, իսկ մենք վերացնում ենք ազգային ակադեմիան, զարգացնում ենք առեւտուրը, բայց ոչ տնտեսութիւնը, գիտութեան ասպարէզում զարգացնում ենք փոքրիկ գրսեւորումներ, բայց ոչ գիտութիւնը: Մենք պէտք է մարտավարական խնդիրներից անցնենք ուազմավարական խնդիրների, որ անձերը շատ քեր ունենան եւ սեփական շահերով ուղղորդուեն: Մենք այսօր պէտք է մտածենք 2050-ի քաղաքացու մասին, մենք այսօր մտածում ենք՝ ո՞նց անենք որ 3 քաղաքացի պակաս արտագաղթի, դա շատ կարեւոր խնդիր է, բայց ինչքան մենք չարունակենք մենակ մեր քթերի առաջ նայել, երկար ճանապարհ չենք կարող դալ:

**Հ-Դիում նաեւ գիրքի հեղինակ էք, կը ներկայացնէ՞ք ինչի մասին է այդ գիրքը:**

**Պ-Գիրքը կոչւում է «Ողջոյն տղերք», արձակ բանաստեղծութիւններ են, կան նաեւ մի քանի հրապարակա-**

խոսական յօդուածներ, որոնց մեծ մասը նուիրուած է Արցախեան պատերազմին, մեր ջոկատին, հրամանատարներին եւ Գարեգին Նժեհչին: Ներառուած են նաեւ գաղափարական որոշ յօդուածներ, նուիրուած պարագաներին, ազգագրութեանը, մի յօդուած էլ նուիրուած է իմ ծննդավայր՝ Ախալցխային, որը որպէս ազգային քաղաք հոգեվարքի մէջ է:

**Հ- Դիում յանախ կ'այցելէք մարզեր՝ ազգային պարեր հաւաքագրելու համար, ի՞նչ յաջողութիւններու հասած էք այս իմաստով:**

**Պ- Մենք լինում ենք մարզերում, ինչպէս նաեւ սփիւռքեան համայնքներում: Հաւաքագրման աշխատանքների ընթացքում գրառել ենք մօտ 50-ից աւելի պարեր, որոնք նախ գիտական նիւթ են այդ պարերից մօտ 30-ը արդէն բեմ է բարձրացուել: Եթէ չհաւաքագրուէին, դրանցից առնուազն կէսը կորած կը լինէր: Վերջին պարը գրառել եմ Լիբանանում, Այնձարում, 81 տարեկան քահանայից վերցրել եմ դաշոյններով պարը: Այս տարի այդ պարը Սեպտեմբերի 21-ին բեմ է բարձրացել, կոչւում է «Զալմա գանգը». Էջմիածին խնամիների պար՝ «Շաւալի», ծիսական պար՝ «Խորժիլազիկ», Վանայ «Զինորս», համշնահայերից գրառուած «Թրթուռէկ», գրառուած պարեր կան Պարսկահայրից, Զաւախիքից փրկուել են պարեր: Աշխատանքը աւարտուած չի, նիւթեր գեռ կան: Հիմա մենք կարեւոր խնդիրը ունենք. Եթէ գումարներ գտնուէին, շատ կ'ուզէինք մեկնել Ամերիկա, որտեղ 3 լուրջ պարագէտներ կան, 70 եւ աւելի տարիքով: Նրանք տիրապետում են նիւթերի, որոնք վկայում են այն մասին, որ ցեղասպանութիւնից յետոյ ոչ միայն հայ մարդիկ փրկուեցին, այլեւ օտարութեան մէջ պահպանեցին իրենց մշակոյթը: Լոս Անձելոսում ապրող թոռն Պողիկեանը, նիւթերում ապրող Ռոպերթ Յարութիւնները եւ Պոպթընում ապրող ամուսիններ՝ Կարի եւ Սիւզըն Լինտ Սինանեանները ունեն բաւականաչափ գրառուած նիւթեր, որոնք օր առաջ պէտք է տեսագրել եւ իրենց իսկ հեղինակութեամբ գիրք հրատարակել: Այդ պարերը կարող են նաեւ հայ բեմի շքեղ մարդարիտներից լինել:**

**ՀԱՐՑԱՋՐՈՅՑ ՎԱՐԵՑ ՆԱՅԻՐԻ ՄԿՐՏԻՉԵԱՆ-ՏԱՂԵԱՆ**

*Այս էջը կը հովանաւորեն Միհայլ և Պաֆայլ Միրամեան*

## Ծուշիի «Արամ Մանուկեան» ճամբար

9 տարի առաջ, գանատահայ Յայդուկ եւ Այտա Շամլեանները Ծուշիի մէջ հիմք դրին «Արամ Մանուկեան» ճամբարին: Ամրան ընթացքին Ծուշիի եւ մերձակայ կարգ մը ըսակավայրերու հարիւրաւոր արցախցի երեխաններ կը հետեւին Շամլեաններու կազմակերպած դաստիարակչական ծրագիրներուն:

Այս տարի ճամբարը իր դրսները բացաւ Յուլիս 15-ին: 300 երեխաններ հետեւեցան ճամբարի ծրագիրներուն, որոնց հակեց 40 պատանիներէ բաղկացած օժանդակներու ջոկատը, բոլորը ճամբարի անցնող տարիններու «շրջանաւարտներ»: Ստորեւ կը ներկայացնեմ ճամբար-2013-ի առօրեայն լուսանկարներ:

«Արամ Մանուկեան» ճամբարի կայթէջն է՝  
[www.shoushisummercamp.org](http://www.shoushisummercamp.org):

Լուսանկարներու հեղինակներն են Արեւիկ Դանիելեան, Վլատիմիր Գեորգեան եւ Արեգ Բալայեան, Երեքն ալ շուշեցի:



*Այս էջը կը հովանասորեն Ա. և Ա. Կրտս Կարմի Գևորգի Հանուն*



Ensemble

# Hush Puppies®

Collection d'automne/hiver disponible au Hush Puppies Carrefour Laval et chez nos détaillants listés sur [www.hushpuppies.ca](http://www.hushpuppies.ca)

Inscrivez-vous sur notre site web pour être ajouté à notre pige mensuel pour  
**GAGNER UNE PAIRE DE CHAUSSURES!**


The Indispensable Guide  
to Armenia and Karabakh

## Armenia and Karabakh

THE STONE GARDEN TRAVEL GUIDE

Third Edition

by Matthew Karasian



Insider Tips | Detailed Maps | Nature and Conservation



Make Christmas an  
**ARMENIAN CHRISTMAS**  
with This Gift!

Beautifully Illustrated Guide to Armenia and Karabakh!

320 Pages | 150 Color Photographs | 30 Detailed Maps

Autographed Copies Available on Request!

Super Fast Priority Air Mail Shipping to Canada On All Orders

\$40 Post Paid / \$35 Each for Two or More to Same Address

Check or MO (US Funds) to Stone Garden Productions,  
PO Box 7758, Northridge, Calif., 91327 USA

Credit Card Payment online at [www.ArmeniaTravelGuide.com](http://www.ArmeniaTravelGuide.com)

Also Avail. from Armenian Community Centre Bookstore, Montreal / Toronto



# NOR COIF

coiffure | esthétique "elle et lui" |  
épilation laser

4550, rue Salaberry  
Montréal, Québec  
H4S 1H4  
**514.337.4724**

## VINNIE GAMBINI

FAUBOURG BOISBRIAND

**L'ENDROIT IDÉAL POUR VOS GROUPES  
ET VOS OCCASIONS SPÉCIALES!**



Dîner, Souper et 5@7 au Bar  
Le lieu privilégié des  
gens d'affaires,  
entre ami(e)s ou en famille.



Joignez-nous

vinnie gabinis boisbriand



Réservez dès maintenant  
**450.420.5000**

3360 des Grandes Tourelles, Boisbriand, Qc J7H 0A2

## «Ընդհատուած մանկութիւն»ը և «Թեւանիկ»ը՝ Արցախեան իրականութեան մասին պատմող Փիլմեր Հարցազրոյց ֆիլմի բեմադրիչ Զիւան Աւետիսեանի հետ

«Ընդհատուած մանկութիւն»ը շուրջ 45 վայրկեան տեսլուրեամբ ֆիլմ մըն է, որ նկարահանուած է իրական դէպէերու իման վրայ. ֆիլմին մէջ ներկայացուած են Մարտայի մէջ ազերիներու կողմէ կատարուած ջարդերը եւ փոքրիկ լենային կեանիի պատմութիւնը: Լենան փրկուելով ջարդերէն, գերի ինկած է բշնամին ձեռքը, ապա՝ 129 օր ազերի տարեց կնոց մը տան մէջ ապրելէ եսք, վերադառնած հայկական կողմին:

Ֆիլմը նկարահանուած է Կարինէ Խոտիկեանի բեմագրութեան իման վրայ, նկարիչը՝ Կոստանիին Պետրոսեանն է, բեմադրող՝ նկարահանողը՝ Նարեկ Մարտիրոսեանը, իսկ բեմադրիչը՝ Երկիր Մետահ հեռուստաընկերութեան գլխաւոր բեմադրիչ Զիւան Աւետիսեանն է: Այս առիրով «Հորիզոն»ը զրուցեց բեմադրիչին եստ:

**Հ- Խնդրեմ, պատմեցէք «Ընդհատուած մանկութիւն» ֆիլմի մասին, ի՞նչ յաջողութիւններու հասած է: Նաեւ կը խնդրեմ անդրադառնամ «Թեւանիկ» ֆիլմին:**

**Պ-** «Ընդհատուած մանկութիւն» ֆիլմը արդէն իսկ աւարտուել է եւ մի քանի երկրներում մասնակցել է փառատուների. օրինակ՝ Երեւանի մէջ կայացող ամէնամեայ «Ոսկէ Ծիրան» փառատոնին եւ արժանացել Հրանդ Մաթեւսոսեանի անուան յատուկ մրցանակին՝ լաւագոյն բեմագրութեան համար:

Ֆիլմը նաեւ ցուցադրուել է Գանատայում՝ Թորոնթոյի մէջ կայացած «Նուռ» փառատոնին: Այժմ, պատասխան ենք սպասում Լիթվիայից, Սլովաքիայից, Ս. Ֆրանսիսքոյից եւ միջազգային այլ փառատոներից:

Ֆիլմի գաղափարը ինձ փոխանցել է Արթուր Աղաբէկեանը: Մի օր նա եկաւ «Երկիր Մետահ»՝ իր հետ բերելով մի աղջկայ, ֆիլմի հերոսուհուն, եւ ասաց. «Ծանօթացի՛, յիշո՞ւմ ես որ քեզ տարիներ առաջ պատմել էի մի աղջկայ մասին, ով ապրել է թուրք կնոջ մօտ, յետոյ նրան փոխանակել են Հասորութիւնագմանը»: Ասացի. «Այո՛, յիշում եմ»: Ասեց. «Ծանօթացի՛, Լենան է»: Տուեց ինձ մի քանի լուսանկար, մէկ կամ երկու թերթ, որոնք տպուել էին այդ տարիներին եւ ասեց. «Մի քան մտածիր»: Ես էլ, ամիսներ անց, երբ մտքիս մէջ գաղափարներս հասունացան, առաջարկեցի գեղարուեստական ֆիլմ նկարահանել, նա էլ համաձայնուեց եւ մեծ սիրով ամբողջ նիւթական ծանրութիւնը վերցրեց ու անցանք գործի:

Ես կարողացայ «Ընդհատուած մանկութիւն»ը եւ «Թեւանիկ» ֆիլմի ծրագիրը տանել Գաննի միջազգային կինոշուկայ եւ փոքրեցի գտնել համարտադրողներ: «Թեւանիկ» գեղարուեստական ֆիլմը նոյնպէս Արցախեան պատերազմի մասին է: Ան հանդիսատեսին կը ներկայացուի յառաջիկայ տարի:

«Թեւանիկ»ի բեմագրութիւնը գրուել է 1996-1997 թուականներին, հեղինակը Առնոլտ Աղաբաբովն է: Նա ցանկացել է նկարահանել ֆիլմը, բայց մահացել է եւ չի հասցրել: Բեմագրութիւնը ինձ փոխանցեց իմ դասախոսը՝ Լեւոն Աթոյ-

եանը, որ բեմագրող-նկարահանողն է «Զինուորն ու փիղը», «Քառոս» եւ այլ ֆիլմերի: Ես «Թեւանիկ»ի բեմագրութիւնը շատ սիրեցի եւ Հայաստանի Ազգային կինոկեդրոնին առաջարկեցի նրա նկարահանումը վատահել ինձ ու նիւթական աջակցութիւն ցուցաբերել: Նրանք համաձայնուեցին: Բեմագրութիւնը գրուած էր կարճ տեևլութեամբ ֆիլմի համար, իսկ ես ցանկանում էի նկարահանել շատ աւելի երկար տեւողութեամբ ֆիլմ:

Թատերագիր Կարինէ Խոտիկեանի հետ միասին, բայց թեւանիկից, ֆիլմում աւելացրեցինք եւս 2 պատանիների՝ Աստղիկի ու Արամի պատմութիւնը: Արդիւնքում ստացուեց 25 վայրկեաննոց 3 ֆիլմ, 3 ճակատագիր, 3 պատանիների կեանքի պատմութիւն՝ մի վերնագիր տակ:

Ֆիլմը պատմում է 1991-ի Արցախեան ազատամարտի մասին: Դէպէերն ընթանում են նոյն գիւղում, նոյն ժամանակատակածում եւ ի հարկէ հերոսների պատմութիւնները շաղկապուած են միմեանց հետ եւ ունեն մէկ աւարտ:

«Թեւանիկ»ի հիմնական պատգամը այն է, որ պատերազմը վատ բան է ու չարիք մարդկութեան: Այն յատկապէս ծանր են տանում կանայք ու երեխաները, խոր յարգանք ունենալով այն մարդկանց հանդէպ, ովքեր խրամատում առաջին գծում են: Այնուամենայիւ կարծում եմ, որ կանանց ու երեխաների ապրումները ուղղակի անբացարելի են:

Ազգային կինոկեդրոնը ֆիլմին նիւթապէս օժանդակեց մասամբ, կար նիւթական բաց, որը պէտք էր լրացնել: Իմ աւագ ընկերը՝ Մասիս Պաղտասարեանը, միացաւ մեզ եւ նրա շնորհիւ կարողացանք հաւաքել «Թեւանիկ» ֆիլմի աջակիցները ու դոյացնել անհրաժեշտ գումարը:

Գաննում ես փորձեցի գտնել համարտագրողներ, որոնց հետ հիմա քննարկում ենք յետարտադրական գործընթացը. աշխատանքային քննարկման մէջ ենք իրաւունքների եւ այլ աշխատանքներ իրականացնելու համար. օրինակ՝ պատկերի եւ ձայնի վրայ աշխատանքը հնարաւոր է իրականացնել Լիթվիայում:

**Հ- Վերադառնական պատմուած մանկութիւն» ֆիլմին ինչպիսի՞ դերասաններ մարմնաւրած են դերերը, ի՞նչ սկզբունքներով կ'ընտրեն զիրեանում:**

**Պ-** Կերադառնական պատմուած մանկութիւն» ֆիլմին ինչպիսի՞ դերասաններ մարմնաւրած են, սակայն առաջնահերթութիւնը չենք տուել նրանց, ովքեր յայտնի են սերիալներում: Ինդիքը չենք ունեցել հաւաքել ճանաչուածներին, նրանց, ովքեր փողոցում քայլում ու ճանաչում են: Իմ համար իննդիքը հետեւեալն է. Ֆաթիմա Խալայի գերը կրեթա Մեծութեանին առաջարկելու ժամանակ, ես նրա ժամանական կեանքին 99 տոկոսով ծանօթ չեմ եղել, բայց իմ բոլոր զգայրաններով համոզուած եմ եղել, որ նա այդ գերը պիտի խաղայ: Բոլոր խաղացողներին նոյն սկզբունքով եմ ընտրում: Պատահել է, որ գերասանին ասեմ՝ գու չգիտես որ այս գերը քեզ համար է, գու յետոյ կը հասկանաս, որ այս գերը գու պէտք է խաղաս: Ընտրում եմ արհեստավարժ գերասանների՝

*Մասնակիութեան պատմուած մանկութիւն» ֆիլմին կը համար կ'ընտրեն զիրեանում*



գիտակցելով նրանց բնաւորութիւնը, կեանքի փորձը, նաեւ կուրօքէն զգում եմ, որ ինքն է, որ պէտք է մարմնաւորի այս կամ այն դերը:

**Հ-Արդիօ՞՞ այդ զգացողութիւնը այն պատճառով է որ դուք պատերազմի մէջ եղած էք, եւ այդ կերպարները ձեր ենթագիտակցութեան մէջ կան:**

**Պ-Այո՛, այդ կերպարները կա՞ն: Մի բան ասեմ, Սոս ծանիբեկեանը խաղում է Աւոյի կերպարը, իսկ Աւոն իմ պապական գիւղի ջոկատի հրամանատարն էր, ես տեսնում եմ, որ իր շարժուձեւերի մէջ այս մարդը կայ: Ոեւէ կերպար որ տեսնում եմ սուտ չի, օգում չի, յօրինուած չի, ոչ չէ պատմութիւն է, այս ամէնը եղել է Ղարաբաղում, եղել է տարբեր ժամանակում եւ տարբեր մարդկանց հետ: Ես դրանք հաւաքում եւ բերում եմ պաստառին, մի կերպարի մարմնաւորածը կարող է իրականում Ղարաբաղեան պատերազմի ժամանակ կատարուած լինի հինգ տարբեր մարդկանց հետ:**

Կան նաեւ դէպքեր, որոնք եղել են ինձ հետ. օրինակ, «Ընդհատուած մանկութեան» նկուղի մէջ պատահած դէպքը, ես նկարագրել եմ այնպէս՝ ինչպէս եղել է ինձ հետ, նստած հարեւաններով, երբ ես 9-ը տարեկան էի:

**Հ-Կը խորիի՞՞ որ դուք ուրիշ թեմաներ նոյն- բան լաւ կրնաք իրականացնել:**

**Պ-Այո, եթէ թեման սիրեմ: Օրինակ, ես կեանքում չեմ պատկերացնի նկարահանել մաֆիայի մասին ֆիլմ, ես սիրում եմ նայել մաֆիայի մասին ֆիլմ, օրինակ «Կնքահայրը»: Կարող եմ ոռմանթիկ սիրոյ սիրուն պատմութիւն նկարել, թեման պէտք է հարազատ լինի, որ կարողանամ հասկանալ:**

Կայ նաեւ մի շատ կարեւոր բան. բեմադրիչը ստեղծում է իր իրականութիւնը, այսինքն՝ ֆիլմը բեմադրիչի կողմից ստեղծուած իրականութիւն է, եւ կեանքում այսպէս է թէ ոչ,

կապ չունի, կարեւորը դա է, որ համոզի, եթէ սկսում ես հաւատալ այդ ամէն ինչին, քեզ տանում է, ուրեմն դա այդպէս է: Երբ հանդիսատեսը սկսում է այդ պատմութեամբ ապրել, յիշել, տանջուել, դա նշանակում է՝ ուրեմն ստացուել է: Ես ինքս չգիտեմ, արդեօք այդպիսին են եղել Լենայի եւ Ֆաթիմայի յարաբերութիւնները, Լենան ինձ յիշելով պատմել է, թէ քսան տարի առաջ ի՞նչ է կատարուել, ու ես փորձել եմ վերարտադրել դա գեղարուեսափ միջոցով, ես չգիտեմ ֆաթիման նման արտաքին ունեցե՞լ է, թէ չէ: Լենան ընդամէնը ասել է, որ ֆաթիման եղել է սեւազգեստ ծեր կին, իսկ իմ հերոսը այդքան ծեր չի, իմ հերոսուհին քայլում է տըմպ- տըմպ՝ տղամարդու պէս, հագնում է տղամարդու բաճկոն: Արդեօք իրական ֆաթիման դա հագե՞լ է, ես չգիտեմ, բայց ես գիտեմ, որ իմ հերոսուհին հագնելու է իր կորած տղայի բաճկոնը, որովհետեւ այդպիսի պատմութիւններ կան. ես գիտեմ կին, որ հագել է իր կորած տղայի, կամ իր մահացած ամուսնու բաճկոնը: Կարեւոր այն է, որ պատմես պարզ հասարակ մարդկային պատմութիւն:

